Տպագրված է
պետական պատվերով

Die Wahrheit

über

die Leiden des armenischen Volks in der Türkei

während des Weltkriegs.

Oberlehrer Ernst Sommer.

Verlag Orient, Frankfurt a. Main
Fürstenbergerstraße 151
(Buchhandlung des Deutschen Hilfsbundes für christliches Liebeswerk im Orient.)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՌՆՍՏ ԶՈՄՄԵՐ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գերմաներենից թարգմանեց
Էվելինա Մակարյան

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2002

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

Հրատարակության է ներկայացրել
ԵՊՀ հայագիտական կենտրոնը

Խմբագիր՝ Ա. Գ. ՄԱԴՈՅԱՆ

Զոմմեր Էռնստ
Զ 773 Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին.- Երեւանի պետ. համալս.- (գերմ. թարգմ. Էվելինա Մակարյան). Երեւանի համալս. հրատ., 2002.- 88 էջ:

Առաջին աշխարհամարտի օրերին Արեւմտյան Հայաստանում երիտթուրքերի գործած աննախադեպ ոճրի վերաբերյալ մի վավերագիր է գերմանացի հեղինակի սույն գրքույկը, որ հասցեագրվում է ընթերցող լայն հասարակայնությանը:

Մ $\frac{0503020913}{704(02)\ 02}$ 2002 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8084-0442-8

© Է. Ա. Մակարյան, 2002 թ.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՉԱՅՆԸ

Ծանիջիք զճշմարտութիւն, և ճշմարտութիւնն
ազատեսցէ զձեզ: Յովհ. Ը. 32

Մեծ եղեռնին վերաբերող սկզբնաղբյուրների շարքում առաջնակարգ են գերմանականները, որովհետև քսաներորդ դարասկզբի ցեղասպանության փորձը, որ ձեռնարկեց երիտթուրքերի կառավարությունը, միայն Թուրքիայի խայտառակությունը չէր: Ըստ էության իր անտարբերությամբ ոճրին մասնակից էր ամբողջ Եվրոպան, բայց հանցակցության անհամեմատ մեծ բաժին ուներ կայսերական Գերմանիան: Ըստ էության գերմանական սպաները նույնպես մասնակցել են ոճրագործություններին: Ուստի զարմանալի չէ, որ (նաև հաջորդ տարիներին) այդ երկրի իշխանությունները աչալրջորեն հետևում էին մամուլին; որպեսզի չհրապարակվեին նույնիսկ ամենաանշան տեղեկություններ, որպեսզի Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրվող անմարդկային բռնություններին տեղյակ չլիներ գերմանացի ժողովուրդը (այդ մասին են խոսում նաեւ Բ. Ֆ. Դոբելերի՝ 1915 թ. 1 օգոստոս թվակիր նոթերը, որ մեջբերել է Է. Զոմմերը): 1917 թ. երկրի գլխավոր գրաքննիչ ատյանը հատկապես հրահանգում էր լրատվամիջոցներին՝ «լավագույնը կլինի հայերի մասին լռել»: Սակայն, չնայած արգելքին, երկրի առողջ ուժերը լավ զգալով «մեղսակցության խայտառակությունը», քննադատել են իրենց կառավարության «կույր թրքասիրությունը»: Դա «անսուրբ ու ամոթաբեր» է որակել նշանավոր բանասեր-հայագետ Յոզեֆ Մարքվարթը: Իր «Փաստեր և խոհեր Հայոց հարցի մասին» աշխատության մեջ նա նկատում է, թե «Գերմանիայի ողջմիտ տարրերը... հրապարակավ խոստովանում են այդ ու պահանջում Միացյալ Անկախ Հայաստան այն սահմաններով, որ հայ ժողովուրդն է ցանկանում»[1]: Ինչպես շեշտում է գիտնականը, գերմա-

1 Տե՛ս Գիւտ ծ. վարդապետի գրախոսությունը «Էջմիածին» շաբաթաթերթի 1920 թ. N 7 (7 մարտ): Նույնը «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», հատ. Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.): Կազմեց Ս. Բեհբուդեան, Երևան, 1999, էջ 343:

նական իշխանությունը լրագրերն իսկ կողմնակից են եղել, որ հայերը՝ «Եվրոպական քաղաքակրթության միակ կրողը Փոքր Ասիայում», ճնշվեն, հալածվեն, «որովհետև նրանք ռուսների կողմնակից, հետևապես Գերմանիայի թշնամի են նկատվել»[2]:

Ուրեմն, ի հակակշիռ հայերի դեմ գործված հակամարդկային ոճիրներին կառավարության հանցակցության, գերմանական մտավորականները աշխատում էին հասարակայնությանը իրազեկ դարձնել Արևմտյան Հայաստանում կատարվող բարբարոսություններին, հրապարակել փաստաթղթերի ժողովածուներ, հուշեր, տեղեկություններ, որոնք մերկացնում էին իրականությունը: Հրապարակված բազմաթիվ հոդվածներից հիշենք մի քանի բնորոշ խորագիր. «Համաշխարհային պատմության մեջ խոշորագույն հալածանքը քրիստոնյաների նկատմամբ», «Հայ ժողովրդի բնաջնջման մասին», «Հայկական սարսափները», «Հայ եկեղեցու իրավազրկումը», «Ոճիր Հայաստանում», «Հայոց հարցի էությունը», «Գերմանիան հովանավորում է... հայերի բնաջնջումը», «Լռության հանցանքը», «Ճշմարտությունը Հայաստանի մասին»[3] և ն: Բնութագրական է այդ կարգի հրապարակումների մեջ նաև «Ճշմարտություն» հասկացության կիրառման հաճախականությունը: Ճշմարտության բացահայտման՝ գերմանական հումանիզմի այս համանվագին մաս է կազմել նաև Էռնստ Զոմմերի՝ հայ

2 Անդ, էջ 344:

3 Առաջավոր մտավորականության արձագանքները Հայոց հարցին և ցեղասպանությանը բավարար մանրամասնությամբ տեսանելի է դարձնում Հ. Դոնաթի «Հայկական ջարդերի արտացոլումը գերմանական և միջազգային խաղաղության կողմնակիցների շարժման հայելու մեջ (1895-1933 թթ.)» ամփոփ ուսումնասիրությունը, որ գրվել է իբրև Հայնրիխ Ֆիրբյուխերի «Հայաստանը 1915-ին» գրքի Գ հրատարակության վերջաբան. տե՛ս Հ. *Ֆիրբյուխեր,* Հայաստանը 1915-ին. Թե ինչ է թաքցրել կայսերական կառավարությունը գերմանահպատակներից. Հին մշակույթ ունեցող ժողովրդի կոտորածը թուրքերի կողմից: Գերմաներենից թարգմանեց Հ. Ղուկասյանը, Երևան, 2000, էջ 83-108: Է. Զոմմերի գրքույկը այստեղ և ընդհանրապես Հայոց հարցին նվիրված գրականության մեջ չի հիշատակվում:

ընթերցողին ներկայացվող «Ճշմարտությունը աշխարհաճանաչման մասին» գրքույկը, որ չնայած համեստ ծավալին՝ նույնպես մերկացնող մեծ ներուժ ունի. հեղինակը. «որպես քրիստոնյա և որպես քարոզիչ», պարտավորված է զգում քաջալերել հայ ժողովրդին՝ «Աստծու և Փրկչի անունից»: Եթե գերմանացի սպաներին ոչինչ չէր խանգարում մարդասպաններին աջակցելիս, ապա նրանց հայրենակից միսիոներները դիմագրավել են բազում դժվարություններ: «Աստծու օգնությամբ,- կարդում ենք 4-րդ հատվածում,- մեզ հաջողվեց փաստորեն կոտորածից փրկել Մեզրեի, Մարաշի և Հարունիեի մեր երեք գլխավոր կայանների հաստատություններում գտնվող երեխաներին ու ծառայողներին: Մեր հիմնարկությունները օազիս էին անապատի մեջ, տապան՝ մոլեգնող ջրհեղեղում»: Վերջին՝ 5-րդ հատվածում, ամփոփելով իր դիտումների արդյունքները, քրիստոնյա քարոզիչը նահատակությունը համարում է հայոց մեծ առաքելությունն ու առաքինությունը: Հայ ժողովուրդը՝ «քրիստոնեության քաջարի նախակարապետը, որին վիճակված է բոլոր դարերում ամուր և հաստատուն տոկալ, ժողովուրդների դարպասների առջև շարունակում է կատարել իրեն վերուստ սահմանված պատմական բարձր առաքելությունը, հենակետ ծառայելով մահմեդականության ընդլայնվող միսիայի հանդեպ»: Հայերեն թարգմանությունը կատարվել է հետևյալ հրատարակությունից *Oberlehrer Ernst Sommer, Die Wahrheit über die Leiden des armenischen Volks in Türkei während des Weltkriegs, Verlag Orient, Frankfurt am Main*՝, որ իրագործել է Արևելքում քրիստոնեական-բարեգործական օգնության գերմանական միությունը: Գիրքը տպագրության թվական չունի: Կարելի է ենթադրել, որ գրաքննությունից զգուշանալու միտումով է արվել դա: Սակայն, դատելով մեզ մատչելի տվյալներից, լույս տեսած պիտի լինի 1919-ին, կամ ամենաուշը՝ հաջորդ տարվա սկզբին: Այստեղ մեջ բերված՝ ժամանակով վերջին փաստաթուղթը կրում է «1918 թ. հուլիս 3» նշումը, իսկ հայ մամուլը նրան անդրադարձել է արդեն 1920-ի մարտին:

Հայ իրականության մեջ գրքույկի մեզ հայտնի միակ գրախոսությունը եղել է Գյուտ ծ. վարդապետի տեսությունը՝ տպագրված «Էջմիածին» շաբաթաթերթի վերոհիշյալ համարում[4]: Իր հայրենակից մյուս առաջադեմ ուժերի նման Զոմմերը հետամուտ է ճշմարտության, և իր գրքույկի հանկերգը Մատթեոսի Ավետարանի Ժ. 26 համարն է. «Չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտնի լիցի» (հմմտ. Մարկ. Դ. 22, Ղուկ. Ը. 17): Այս ամբողջ պատմության մեջ եթե կա գոհացուցիչ մի բան, մտորում է գրողը, գերմանաթրքական «աստվածընդդեմ դաշինքի» լուծարումն է: Նա շեշտում է, որ թուրքական վայրագությունների ականատես եվրոպացի քարոզիչների հիացմունքն է շարժել հայերի դիմադրական տոկուն ոգին, «կեսարացի կանանց խիզախ նահատակությունը»:

Է. Զոմմերի փոքրածավալ հրապարակումը շատ ծանրակշիռ է: Գրեթե աննշան մի նրբագծով նա շեշտում է թուրք հոգեւորականի ամբողջ էությունը. «Բանն աստծուց է, եթե նա գութ չունի՝ ինչո՞ւ պիտի դուք ունենաք»: Մեկ-երկու տող, սակայն որքան պերճախոս ու հստակ ցույց է տալիս մի ամբողջ հավաքականության ցինիզմը, և՝ նվիրվածությունը *ջարդարարությանը* (էջ 25):

Ընդհանրապես է. Զոմմերը դառնությամբ է նկարագրում հայերի կրած տառապանքները: Տանջահարության ձևերից շատերը նորություն չէին քրիստոնյա աշխարհի պատմության մեջ. հաճախակի այդ պատժամիջոցները նկարագրված ենք գտնում արդեն միջնադարյան վկայաբանություններում: Ահա 1915 թ. մայիսի սկզբին թուրքերը անմարդկային տառապանքներ են պատճառում հայ տղամարդկանց, կոճղապնդում են նրանց ոտքերը, պայտում, պոկում են եղունգները, փետում կոպերը, մորուսները, ատամները, կախում են գլխիվայր և, և[5]: Նկատելով, թե առաջին աշխարհամարտը սոսկալի տառապանքներ է պատճառել մարդկությանն առհասարակ, է.

4 Տե՛ս «Վաւերագրեր.., էջ 341-343:

5 Համանման վայրագությունների նկարագրություններ տե՛ս «Հայոց նոր վկաները», Աշխատասիրությամբ Յ. Մանանդեան, Հր. Աճառեան, Վաղարշապատ, 1903:

Զոմմերը հավաստում է, որ անկասկած ամենաշատ տառապանք բաժին է հասել հայերին: Նա բերում է բազում գերմանացի, շվեդ, ամերիկացի, հույն, թուրք ականատեսների վկայություններ՝ նշավակելու այդ գազանությունները: Օրինակ, քույր Փաուլա Շեֆերի հաղորդումները որքա՜ն պատշաճում են դանտեական դժոխքին և դառնացրել են ազնիվ ու արդարամիտ մտավորականին: Եվ Զոմմերը մխիթարության ուրիշ դուռ չգտնելով՝ ուզում է հավատալ, որ չարագործները չեն կարող խուսափել Աստծու դատաստանից. «Դա մեր Աստծու սիրո ծրագրի մի մասն է»: Աստված, ինքն իրեն հուսադրում է գրողը, ավելի շատ դառնություն է պատճառում իր սիրելիին (հմմտ. Յուդիթ. Ը. 15. «Տանջէ Տէր զմերձաւորս իւր». Առակ. Գ. 12. «Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի զոր ընդունի»), ուստիև շեշտում է՝ «Ով արցունքով է ցանում՝ ուրախությամբ կհնձե» (Սաղմ. ՃԻԶ. 5):

Որ Հայոց հարցին առնչվող խնդիրները գրաքննությամբ արգելված էին Գերմանիայում՝ ինչ-որ կերպ կարելի է հասկանալ: Տարօրինակ մի հետեւողականությամբ այդ բնույթի գրականությունը արգելվել է նաև հակառակորդ թեւի երկրներում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում: Դրա հետեւանքով այսօր հայ ժողովրդին անծանոթ են իր շատ բարեկամների նույնիսկ անունները: Եւ դժվար է հայ մամուլում, գրականության մեջ էռնստ Զոմմերի մասին գտնել ավելին, քան ասված է Գյուտ. ծ. վարդապետի համառոտ խոսքի մեջ, քաղված Զոմմերի իսկ գրքից[6]: Այստեղից տեղեկանում ենք նաև, որ նա Հայաստանում եղել է իբրև բողոքական քարոզիչ՝ մարդասիրական առաքելությամբ, ծառայել գերմանական օգնության միությանը: Տեղեկությունների լակասը փոքր-ինչ մեղմելու համար որոնումները պետք է շարունակել: Եթե վերանանք երկու նույնանուն ժամանակակից գործիչների գոյության հնա-

6 Տեղեկության ամբողջացման համար նշենք նաև «Գարունի» հրապարակումը սույն թարգմանությունից. «Գարուն», 2000, N 4, էջ 15-16. Էռնեստ Զոմմեր, Ինչպես սկսվեց փոթորիկը:

ռավորությունից ու որոշ հակասական փաստերից և մեզ հետաքրքրող անձին նույնացնենք համանուն բավական ճանաչված գրողի հետ, կարող ենք որոշ տեղեկություններ քաղել գերմանական (մեզ մատչելի) աղբյուրներից[7]: Նկատելի հոգեհարազատություն կա այս երկուսի միջև:

Ինչևէ, չնայած խստագույն կայմաններին, գերմանական մտավորականները կատարելով իրենց խղճի թելադրանքը՝ 1910-30-ական թվականներին առավել քան համոզիչ բազմաթիվ փաստարկներով ապացուցեցին, որ

---

7 Մի կենսագրական բառարանից տեղեկանում ենք, որ Էռնստ Զոմմերը ծնվել է 1889 թ. (Իգլու, 29 հոկտեմբեր): 1938 թ. ըստ երևույթին տարագրվել է Անգլիա իբրև հակաֆաշիստ, գրել է պատմական և կենսագրական վեպեր: Կրթությամբ բժիշկ էր, արվեստաբան և իրավագետ (իրավագիտության դոկտոր 1912 թ.): 1915-ին զորակոչվել է և հավանաբար ծառայել Մերձավոր Արևելքում: 1919-ին Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ էր: 1935-ին լույս է տեսել նրա «Տաճարականները» վեպը, ուր ժամանակակից կյանքի առաջադրած խնդիրների լույսի տակ լուսաբանված են ԺԴ դարի սկզբի Ֆրանսիայի իրադարձությունները: Երկու տարի անց նա վեպ է նվիրում 1492 թ. Իսպանիայից հրեաների արտաքսմանը («Դրենադայից»): Բ աշխարհամարտին Լեհաստանի հրեաների անլուր տառապանքներն է նկարագրում «Սրբերի խռովությունը» (1943 թ.) վեպում և այլն: Նրա բազմաթիվ ստեղծագործություններ ժամանակին թարգմանվել են եվրոպական մի շարք լեզուների: Նա մահացել է 1955 թ. սեպտեմբերի 20-ին տարագրության մեջ Լոնդոնում («Deutsches Schriftstellerlexikon von den Aafängen bis zur Gegenwart. Leipzig. 1964, էջ 608-609): Մեր հեղինակն իր գրքույկի չորրորդ հատվածում ասում է. «Առանձնապես մեծացավ եւ կարևորվեց 22 տարի առաջ մեզ արևելք տանող կանչի նշանակությունը»: Եթե այս «մեզ»-ը վերաբերում է իրեն՝ բացառվում է այս երկուսի նույնացման հնարավորությունը: Բայց և հնարավոր է այս խոսքը հասկանալ ոչ թե Զոմմերի, այլ իրենց առաքելության իմաստով: Կենսագրական բառարանը տեղեկություն չի պարունակում վիպասան Է. Զոմմերի հայանպաստ գործունեության մասին: Դա կարող է երեք պատճառ ունենալ. կամ այդ գործունեությունը ոչ տևական մի դրվագ է եղել նրա կյանքում, կամ բառարանը կազմողներին հայտնի չի եղել գրաքննական արգելքի բերումով և կամ, որ ավելի հավանական է, մեզ հետաքրքրող հեղինակը այլ անձնավորություն է:

օսմանյան կայսրությունում հայերի կոտորածները միանգամայն գիտակցված, ծրագրված և կազմակերպված էին իշխանությունների կողմից, և հաճախ ցեղասպանություն իրագործողներին սատար ու աջակից էին գերմանական զինվորականները, ասել է թե գերմանական իշխանությունները: Մի ավելորդ անգամ նույն բանն ապացուցում է և էռնստ Զոմմերի այս գողտրիկ հատորյակը: Եվ, անշուշտ, տարօրինակ է, որ երկրորդ աշխարհամարտում հրեաների դեմ Գերմանիայի գործադրած բռնությունները խոստովանեցին այդ երկրի մերօրյա իշխանությունները և աշխատեցին ինչ-որ չափով մեղմել իրենց նախորդների մեղքերը, փոխհատուցել, բայց նրանք համառ լռություն են պահպանում առաջին աշխարհամարտի ընթացքում իրենց բարբարոս դաշնակցի արարքների շուրջը: Հուսանք, որ դա երկար չի տևի, և նրանք ևս կըմբռնեն այն պարզ ճշմարտությունը, որ այս անգամ հնչում է պրոֆ. Վալթեր Ֆաբիանի շուրթերից. «Կան ոճրագործություններ, որոնք չպետք է մոռացվեն: Հայոց ցեղասպանությունը պատկանում է նման ոճիրների թվին, որ մենք պետք է մշտապես հիշենք»[8]: Պետք է հիշել, որպեսզի արդարների հիշատակը օրհնվի, իսկ մարդկայնության դեմ գործված հանցանքները նզովվեն և, որ պակաս կարևոր չէ, որպեսզի չարագործ բարբարոսները հետևորդներ չունենան:

է. Զոմմերի գրքի և համանման աշխատությունների հրատարակությունն այսօր հրատապ է, մանավանդ որ Թուրքիան իր քարոզչությամբ աշխատում է մոլորեցնել քաղաքակիրթ աշխարհը, այդ նպատակով արևմուտքում վարձելով գրիչներ՝ պատրաստ խեղաթյուրելու պատմական իրականությունը: Մինչդեռ եւրոպական բազմաթիվ մտավորականների, այդ թվում և էռնստ Զոմմերի, գրքերը անհամեմատ զորավոր են ու ծանրակշիռ, քանի որ այդ հեղինակները բացի բարձր մտավորական լինելուց նաև ժամանակակից ու ականատես են ներկայացվող դեպքերին:

Ա. Մադոյան

---

8 *Հ. Ֆիրբյուխեր.* Անդ. էջ 6 (նախաբան):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և մի թաքուն բան չեղավ, որ դեպի հայտնություն չգար»: Գերմանական կառավարությունը երկար ժամանակ խստագույնս հետևում էր, որ գերմանացի ժողովուրդը դույզն ինչ իրազեկ չդառնա պատերազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ թուրքերի գործադրած հրեշավոր ոճրին: Այժմ, սակայն, պատնեշը ճեղքվել է, և ճշմարտությունը դուրս է ժայթքում: Իսկ այդ ճշմարտությունը, դատելով գերմանացի ժողովրդի ներկա վիճակից, մեծ նշանակություն ունի: Համաշխարհային պատերազմն, անկասկած, Աստծու դատաստանն էր այն ծանր մեղքերի դիմաց, որոնք ընկած էին եվրոպական փառապանծ քաղաքակրթության վրա: Համընդհանուր այդ մեղքի մի մասը Եվրոպայի վերաբերմունքն էր անասելի թշվառության մեջ գտնվող հայ ժողովրդի նկատմամբ, որին այդ վիճակին էր հասցրել թուրքական կառավարության կրոնական ատելությունն ու դաժանությունը: Թե նախկին և թե երիտասարդ թուրքերը նույն նպատակն էին հետապնդում՝ անխնա ոչնչացնել քրիստոնեության առաջնային այդ պահակետը, որը դարեր շարունակ գոյատևել էր իսլամով շրջապատված: Թերևս երիտթուրքերի գործելակերպն ավելի նենգ էր ու ավելի խարդախ, սա էր ողջ տարբերությունը: Երիտթուրքերը, Աբդուլ Համիդի՝ իր իշխանությունը կրկին նվաճելու փորձի ձախողումից անմիջապես հետո, 1909 թ. գարնանը Կիլիկիայի Ադանա քաղաքում կազմակերպեցին հայերի ահավոր ջարդ, որի հետևանքով Մարաշում մեր ներկայացուցչությունը ևս անախորժություններ ունեցավ: Երիտթուրքական զինվորները, որոնց Կոստանդնուպոլսից ուղարկել

էին իբր կարգ պահպանելու, օգնում էին ջարդարարներին: Իսկ Մեսինայի մերձակայքում տեղակայված էին Եվրոպայի մեծ տերությունների՝ Անգլիայի ու Գերմանիայի, Ֆրանսիայի ու Ավստրիայի ռազմանավերը: Փորձի համար ընդամենը մի քանի ջոկատ ափ հանելը բավական էր՝ կանխելու ջարդը: Սակայն նրանք սահմանափակվեցին միայն դիտելով և ծովի վրա տիղմից մաքրված դիակները լուսանկարելով: «Ինչ չափով որ չափեք, նրանով կչափեն ձեզ»: Եվրոպական մեծ տերությունների անտարբերությունը 1896 թ. Հայաստանում թափվող արյան նկատմամբ Եվրոպայի գործած մեղքերի մի մասն է, որի համար Աստված ստիպված եղավ Եվրոպայի գլխին, որպես դատաստան, փաթաթել համաշխարհային պատերազմի սոսկալի արյունահեղությունը: Իսկ մենք՝ գերմանացիներս, ավելի հեռու գնացինք: Մենք դաշնակցեցինք Թուրքիայի հետ, որն այդ ոճրի պատասխանատուն է: Ռազմական դաշինքի պաշտպանության ներքո մեր բարեկամներ էնվերն ու Թալեաթ փաշան ծրագրեցին 1915-16 թթ. հայ ժողովրդի կանոնավոր ջարդերը, որպեսզի հիմնեն իրենց միասնական թուրքական ազգային պետությունը՝ իսլամական ժողովրդական կրոնով: Իսկ այդ գաղափարի ամենամեծ խոչընդոտը հայ ժողովուրդն էր, որն ամուր կառչած էր իր ինքնությանն ու կրոնին: Անշուշտ, մենք բողոքել ենք դրա դեմ, հաճախ և եռանդուն բողոքել: Սակայն երիտթուրքական իշխանություններն ուշադրություն չեն դարձրել մեր բողոքին՝ քաջ գիտենալով, որ մենք դրա առաջն առնել չենք կարող: Իսկ երբ Աստված երկար, համբերատար սպասումից հետո ի վերջո մաքրեց հաշիվները, մենք ևս կանգնեցինք փլուզման առաջ: Մեզ համար Աստծու օրհնությունը շատ ավելի կարևոր է, քան լինել Թուրքիայի դաշնակիցը: Շատերի նման ես նույնպես թեթևացած շունչ քաշեցի, երբ Թուրքիայի հետ խզվեցին հարաբերությունները՝ չնայած այն բոլոր ահավոր դժվարություններին, որ թափվեցին մեր սիրելի հայրենիքի գլխին: Փոխարենը այդ անաստված դաշինքի նզովքն այլևս ծանրացած չէ մեզ վրա: Մեր թերթերում՝ գրաքննության ճնշման տակ և կեղծ հայրենասիրությունից դրդված, տպագրվում էին թուր-

քական կառավարության գործունեության մասին լրիվ ապակողմնորոշող տեղեկություններ, որոնք շատ անգամ նույնիսկ թուրքասիրություն էին սերմանում: Այս էր պատճառը, որ Գերմանիայում իրական եղելությունների մասին մեծ մասամբ ստեղծվում էր սխալ հասարակական կարծիք:

Մենք մեր պարտքն ենք համարում մեր բարեկամներին հնարավորին չափ իրազեկ դարձնել այդ զարհուրելի իրադարձությունների ճշմարիտ պատմությանը: Նյութն այս, որ ցանկանում ենք հրապարակել, ոչ թե լրագրողների ճանապարհորդական ակնթարթային տպավորություններ են կամ ֆանտազյորների երևակայական ներշնչանք, այլ ներկայացնում է այդ եղեռնական իրադարձությունների ընդամենը միայն մի փոքրիկ հատվածը: Սրանք ականատեսների անսքող, ճշմարիտ վկայություններ են, որոնց հավաստիությանը պատասխանատու ենք: Մեծ մասամբ նրանք գերմանական ներկայացուցչության աշխատողներ են, որոնք երկար ժամանակ է, ինչ ճանաչում են և երկիրը, և մարդկանց, հայտնի են որպես անկուսակցական, հավաստի ու խորամիտ դիտորդներ: Գերմանացի ժողովուրդն իրավունք ունի իմանալու ողջ ճշմարտությունն այն իրողության, որը ոչ միայն արտերկրում մեծ վնաս հասցրեց մեր բարի անվանը, այլև մեղսակից դարձրեց մեզ, որի պատճառով համաշխարհային պատերազմի երկրորդ կեսին չարժանացանք Աստծու ողորմածությանը (Chron., 19, 2):

1. ԻՆՉՊԵՍ ՍԿՍՎԵՑ ՓՈԹՈՐԻԿԸ

1914 թ. սկզբին հայերը շատ ավելի էին հուսավառ ապագայի հանդեպ, քան երբևէ: Նրանք համոզված էին, որ վերջապես ծագելու է նոր դարաշրջանի արշալույսը, և խեղճ, դարեր ստրկացված ժողովուրդն ի վերջո ձեռք է բերելու մարդավայել գոյության հնարավորություն, կյանքի և սեփականության երաշխավորում, կանանց պատվի պաշտպանություն: Ավելիին նա չէր էլ ձգտում: 1878 թ. Բեռլինի հաշտության վեհաժողովի 61-րդ հոդվածով նրանց մեկ անգամ արդեն խոստացել էին նման բարենորո-

գումներ, որոնց երաշխավորը Եվրոպան էր: Սակայն այդ բարենորոգումները մնացին թղթի վրա, իսկ թշվառությունը Հայկական լեռնաշխարհում շարունակում էր ծավալվել: Ի վերջո հաջողվեց, հատկապես Գերմանիայի և Ռուսաստանի միասնական ջանքերի շնորհիվ, երիտթուրքական կառավարությանը ստիպել 1914թ. փետրվարի 8-ին ստորագրել բարենորոգումների մի նոր ծրագիր: Հայերն ըստ բնակչության թվի ներգրավվելու էին վարչության կազմում, դատարաններում և ոստիկանությունում: Նրանք զինված ծառայելու էին բանակում: Օրենքի առաջ կանգնելու էին թուրքերի և քրդերի հետ հավասար: Չեզոք երկու ավագ տեսուչ մի հոլանդացի և մի նորվեգացի, հսկելու էին բարենորոգումների կատարումը: Հայերն իրենց հատուկ լավատեսությամբ անչափ երջանիկ էին: Նրանք հասել էին, ինչի ձգտում էին: Հայերը թեև չէին սիրում թուրքական կառավարությանը (ով կնեղանար նրանցից այն ամենից հետո, ինչ տեղի էր ունեցել), սակայն չունեին Թուրքիայից անջատվելու լուրջ ծրագիր: Ռուսահայաստանում մի քանի տաք գլուխներ անկախություն էին երազում: Սակայն հայ գյուղացիությունը, որ ժողովրդի 70 տոկոսն էր կազմում, հեղափոխական չէր: Նա ուզում էր, որ իրեն թողնեն հանգիստ մշակելու իր սիրելի հողակտորը: Օրինակ, բոլշևիզմը նույնպես, որ ներկայումս համաճարակի պես մոլեգնում է Ռուսաստանում, հող չի գտնում ռուսահպատակ հայերի շրջանում: Իսկ հայերի առաջատար քաղաքական կուսակցությունը Դաշնակցությունը, երիտթուրքերի հետ համագործակցած պայքարում էր Թուրքիայի նոր սահմանադրության համար: Այն սերտ կապի մեջ էր նաև երիտթուրքերի կոմիտեի հետ:

Այնուհետև, ինչպես կայծակը պայծառ երկնքում, այնպես էլ վարդագույն ապագայի այդ բոլոր ծրագրերի գըլխին պայթեց համաշխարհային պատերազմը: Թուրքիան չեզոք ավագ տեսուչներին անմիջապես տուն ուղարկեց հասկացնելով, որ բարենորոգումների ծրագիրն իր համար ավարտված է: Թուրքիան վերադարձավ իր հին քաղաքականությանը: Աբդուլ Համիդը չէր կարողացել լավագույնս օգտագործել քրիստոնեական պետությունների

ջանքերը քրիստոնեությունն իր կայսրությունից արմատախիլ անելու: 1914 թ. հոկտեմբերի վերջին Թուրքիան մտավ պատերազմի մեջ: Նոյեմբերի 14-ին հայտարարվեց սրբազան պատերազմ, որը Գերմանիայում հասարակական լայն շրջաններում ընկալվեց որպես օժանդակ մի քայլ ի նպաստ մեր եռանդուն զինված ուժերի: Թուրքիայում, սակայն, այլ կերպ էին մտածում: Սրբազան պատերազմն իր էությամբ ուղղված էր միայն անհավատների դեմ, այստեղ որևէ դեր չէր կարող կատարել Գերմանիայի հետ մարտավարության ժամանակավոր համապատասխանությունը: Գերմանիայի հետ սերտ բարեկամությունը, անշուշտ, Էնվերի և Թալեաթ փաշայի շրջապատի մի փոքր խմբի գործն էր: Կային նաև այնպիսիները, որոնք, ճնշելով ներքին դժկամությունը, հաշտվում էին քրիստոնյա պետության հետ անբնական դաշինքի գոյության փաստին՝ նկատի ունենալով ապագայում իսլամի բաղձալի ու վերջնական հաղթանակը բոլոր անհավատների դեմ: Ժողովուրդը, սակայն, չէր դավաճանում իր էությանը: Մարաշում շուկայի բաց հրապարակում թուրք կանայք քքել էին գերմանացի գթության քույրերի վրա՝ բացականչելով. «Մեր ամուսիններն ու որդիները ձեզ համար արյուն են թափում»: Ոգեկոչած բարեկամությունը Գերմանիայի հետ մամուլի հայտնագործությունն էր, գիտակցված կամ չգիտակցված խաբկանք: Կովկասյան բանակի թիկունքում, Մուշի գերմանական օգնության միությունում էր ծառայում քույր Ալմա Յոհանսոնը: Ահա թե ինչ է հաղորդում նա պատերազմի հենց սկզբից:

«Զորակոչի հետ սկսվեց հայերին պարբերաբար թալանելու գործընթացը: Կողոպտվում էր այն ամենը, ինչ արժեք ուներ: Թուրքերը, մտնելով ցանկացած տուն, յուրացնում էին, ինչ ուզում էին: Երբ սկսվեց պատերազմը, զինապարտ բոլոր հայերը զորակոչվեցին: Ազատվում էին միայն նրանք, ովքեր կա՛մ փրկագին էին տալիս, կա՛մ թուրքերի հետ բարեկամանում էին, կա՛մ կաշառում նրանց: Մնացած ոչ զինապարտ տղամարդիկ ռուսական սահմանի մոտ տեղակայված թուրքական բանակի համար պարեն էին

տանում: Քանի որ բեռնակիր կենդանիներ չկային, ուստի մարդիկ բեռը շալակով էին կրում: Ինչպես հայտնի է, ամբողջ տարածքում երկաթուղի չկա: Մուշի և Էրզրումի շրջանում ծմեռը սովորաբար երկարատև և խիստ է լինում: Պատահում էր, որ այդ մարդիկ 2-3 շաբաթում էին հասնում իրենց գնալիք վայրը: Ճանապարհի համար նրանք փող և հագուստ չէին ստանում: Շատ հաճախ էլ զինվորական ոստիկանները խլում էին նրանց ունեցած փողը, իսկ եթե մեկն էլ ուժասպառ լինելով այլևս չէր կարողանում գնալ, գանահարվում էր կամ մինչև նորից առաջ շարժվելը, կամ անշնչացած ընկնելը: Կենդանի մնացածները հանում էին մեռածների հագուստները, օգտագործում ցրտից փոքր-ինչ պաշտպանվելու համար: Բեռնակիրների այդ խմբերից, որոնց մեջ կային երեխաներ, ծերեր, փրկագնով ազատվածներ, վերադառնում էր լավագույն դեպքում մեկ երրորդը, երբեմն էլ մեկ քառորդը: Քրդերին էլ էին վերցնում, սակայն նրանք միշտ փախչում էին: Եթե հայերն էլ հետևեին նրանց օրինակին, մեղադրելու չէր: Այդ ժամանակ ոստիկան էին ընդունում ավազակաբարո մարդկանց, որոնք այլ զբաղմունք չունեին: Նրանց տրվում էր անսահմանափակ իրավունքներ: Այս եղանակով կատարված ամեն բան ինքնին դաժան և անմարդկային գործելակերպ է: Պատահել է նաև, որ հայերը զենք են վերցրել պաշտպանելու իրենց կանանց թուրքերի բռնարարքներից: Արդյունքում նրանց գյուղերը լրիվ կամ մասամբ հրկիզվել են:

«Սրբազան պատերազմ» հայտարարվելուց հետո հընչեցին կրակոտ ճառեր: «Եթե պատերազմում ենք քրիստոնյաների դեմ, նախ պետք է երկիրը մաքրենք քրիստոնյաներից»: Թուրքերը կանխատեսում էին, որ ռուսները մինչև Մուշ կհասնեն: «Մինչ այդ մենք հայերին կջարդենք, այնուհետև թող նրանք գան»: 1914 թ. նոյեմբերին պետական պաշտոնյաները խոստովանում էին, որ հայերին ջարդելու համար սպասում են միայն հրամանի: 1915 թ. մարտին լուրեր տարածվեցին Վանի խռովության մասին: Հուսով էինք, որ լուրերը չափազանցված են, սակայն շուտով սպաներն ու պաշտոնյաները հպարտ-հպարտ պատմելով հավաստիացնում էին մեզ, որ Վանում հայերը բնաջնջված են արդեն»:

Ժամանակից առաջ չընկնենք: Հայերը, չնայած թուրքական կառավարության նկատմամբ իրենց ունեցած հիմնավոր անվստահությանը, պատերազմի հենց սկզբից հայտարարեցին միասնական հայրենիքի պաշտպանության իրենց պարտքի և պատրաստակամության մասին: Թուրքահայերի հոգևոր առաջնորդը Կոստանդնուպոլսի պատրիարքը, այս բովանդակությամբ շրջաբերականներ ուղարկեց իր իրավասության տակ եղած բոլոր վայրերը, հորդորելով հայ եկեղեցիներում աղոթել թուրքական զենքի հաղթանակի համար: Հայերն առատորեն նվիրաբերություններ էին անում Կարմիր կիսալուսնին,- նաև զենքը ձեռքին կատարում իրենց պարտքը: 1915 թ. սկզբին ռազմական նախարար, թուրքական բանակի փոխ-գեներալիսիմուս Էնվեր փաշան Կոնիայի հայ եպիսկոպոսին գրում է, որ օտտոմանական բանակի հայ զինվորները ռազմադաշտում կատարում են իրենց պարտքը, որում նա համոզվել է սեփական փորձով: Նա խնդրում է իր գոհունակությունն ու երախտագիտությունը հայտնել հայ ժողովրդին, որն աչքի է ընկնում կայսերական օտտոմանյան կառավարության նկատմամբ իր անմնացորդ նվիրվածությամբ (Osmanischer Lloyd, փետրվարի 26, 1915 թ.):

Ապրիլին Վանում բռնկվեցին խռովություններ: Հայ բնակչության և կառավարության միջև գնալով լարվում էին հարաբերությունները: Հայերը բողոքում էին իրենց բնակավայրերում թուրքական և քրդական ջոկատների կատարած բռնությունների դեմ, իսկ Վանի նահանգապետ, երդվյալ հայատյաց Ջևդեդ փաշան գանգատվում էր, որ հայ զինվորները, որոնց զինաթափել և ներգրավել են ճանապարհաշինության մեջ, փախչում են իրենց զորամասերից՝ պատժամիջոցը համարելով կոտորածի նախանշան: Այն բանից հետո, երբ հայ համայնքի առաջնորդներից մեկին բանտարկում են, իսկ մյուսին՝ կառավարության հրահրմամբ նենգաբար սպանում, հայկական թաղամասերում կազմակերպվում է ինքնապաշտպանություն: Նրանք դիմադրում են թուրքական բանակին այնքան ժամանակ, մինչև մայիսի 19-ին ռուսները գրավում են Վանը: Այս մասին է Վանում գերմանական օգնության միության

ներկայացուցչության ղեկավար պարոն քարոզիչ Շփորինի հաղորդումը:

«Ապրիլի 20-ի առավոտյան մոտավորապես ժամը 6-ին սկսվեց կռիվը, որն ընթանում էր հենց մեր կողմերում, մեր կայանից արևելք: Առիթը քաղաքում պաշտպանություն գտնելու նպատակով Շուշանց գյուղից մի խումբ հայ կանանց գալն էր: Թուրք զինվորները ցանկացել են բռնել նրանցից մեկին, որը մեր նախկին որբ աղջիկներից էր: Վերջինս, թողնելով ամեն ինչ, փախչում է: Զինվորը չկարողանալով հասնել նպատակին սկսում է կրակել: Հակառակ կողմից ևս լսվում են կրակոցներ, և այսպես չորս շաբաթ շարունակվում է կռիվը: Թշնամության խորացումը հանգեցնում է գյուղերից հայ բնակչության զանգվածային փախուստին: Նրանք խմբերով էին գալիս մեզ մոտ: Տեղ չլինելու պատճառով չէինք կարողանում ընդունել նրանց: Ձենքի հարցը պարզ էր. հայտնաբերված զենքը առգրավվում էր: Մենք ամեն կերպ ուզում էինք պահպանել մեր չեզոքությունը, ուստի մեզ մոտ մուտքը զենքով խստիվ արգելված էր: Նախկին նահանգապետի հրամանով իրավունք ունեինք ընդունել միայն անզեն փախստականների: Մենք հուսով էինք, որ թեև թուրքական կառավարությունը զլացել էր զինվորներ ուղարկել մեր կայանը պաշտպանելու, գոնե հրաման կտար իր զինվորներին չկրակել մեզ վրա: Չգիտեինք, թե ինչ նպատակ էր հետապնդում կառավարությունը: Փաստն այն էր, որ սկզբում բավական աշխույժ էին կրակոցները մեր տների վրա: Ստիպված ապրիլի 21-ին այդ մասին գրեցի նահանգապետին:

Ոչ միայն պատասխան չստացվեց, այլև փոփոխություն չեղավ մեր նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ: Ընդհակառակը, չորս շաբաթ տևած այս կռվի վերջում մենք և ամերիկացիները դարձանք թուրքական թնդանոթների նշանակետ: Մայիսի 15-ին մի կոտորակառումբ անցավ մեր պարիսպը, որից ներս բարաքներում ապաստանել էին բազմաթիվ գյուղացիներ: Բարեբախտաբար տուժածներ չեղան: Արկը դիպչելով պատին փոխել էր ընթացքը դեպի

ցած՝ փորելով գետինը: Տեղում եղածները սարսափով փախան և այլևս չէին ուզում վերադառնալ: Լուրեր էին պտտվում, որ թուրքերը մտադիր են կրակոցներով ցրել մեզ մոտ ապաստանած հայերին: Անշուշտ, այս դեպքը պատահականություն չէր կարելի համարել: Եղան մարդիկ, որոնք այս փաստը բացատրեցին հրետանավորների վատ նշանառությամբ: Իսկ մենք այսպես ենք հասկանում. Աստված, որին մենք ապավինել ենք, այս ծայրահեղ վտանգավոր ժամին հրաշքով փրկեց բոլոր նրանց, ովքեր ապաստան էին գտել մեզ մոտ:

Ինչո՞վ է պայմանավորված թշնամական այս վերաբերմունքը մեր նկատմամբ: Անշուշտ կրոնական մոլեգնությամբ, որ տածում են մուսուլմանները քրիստոնյաների հանդեպ: Կոստանդնուպոլիսը սրբազան պատերազմ է հայտարարել և դրանով իսկ սանձազերծել մահմեդականների կատաղությունը քրիստոնյաների հանդեպ: Այս տրամադրությունը կար դեռ ամիսներ առաջ, թեպետ սանձերը զսպված էին: Դրանք ավելի բացահայտվեցին, երբ տարածվեցին Վանի շրջանում տեղի ունեցող արյունահեղությունների մասին լուրերը: Թուրքերի ատելությունն ու մոլեռանդությունը միայն հայ երիտասարդների հանդեպ չէր, որոնք ըստ թուրքական որոշ պաշտոնական տեղեկությունների խուսափում էին զինվորական ծառայությունից, այլ ամբողջ ժողովրդի հանդեպ ներառյալ կանանց, երեխաներին և ծերերին: Խոսուն է այն փաստը, որ նախապես պղծվեցին ու ավերվեցին քրիստոնեական եկեղեցիներն ու դպրոցները: Մոլեռանդությունն իր հորձանուտն առավ ոչ միայն հայերին մնացած ոչ թուրքերը ևս ընտանիքներով դարձան այդ ատելության անխնա զոհերը: Եվ քանի որ մենք ապաստան ենք տվել մարդկանց, որոնց դեմ է ուղղված այդ ատելությունը, ուստի մենք էլ բաժին ունենք այդ ճակատագրից: Անշուշտ այս իրադարձություններով կառավարությունը հակասում է ոչ միայն միջազգային իրավունքի նորմերին, այլև նախօրոք մեզ տված՝ անզեն մարդկանց ընդունելու իրավունքին, որից մենք օգտվում ենք լիուլի: Թուրքական կառավարության

մեղքն այսքանով չի սահմանափակվում: Իշխանության հրահանգով մենք ամիսներ շարունակ եռանդուն մասնակցություն ենք ունեցել վիրավոր ու հիվանդ զինվորների պարենավորման գործընթացին, որի ժամանակ մերոնցից մեկը և մի ամերիկացի զոհեցին իրենց կյանքը:

Մենք ստեղծել էինք մոտ 2000 անձից բաղկացած մի համայնք: Քիչ գործ չունեինք անելու: Նախ սահմանեցինք հսկողություն և հսկիչ ծառայություն: Ելքերն ու մուտքերը գիշեր-ցերեկ հսկվում էին կրկնակի պահակակետերով: Հեշտ չէր հսկողների աշխատանքը: Շատ դժվար էր մերժել նորանոր մարդկանց հոսքը, բայց ուրիշ ճար չունեինք:

Ամեն Աստծու օր ժամերգություն էինք կատարում՝ համոզված լինելով, որ այս դժվար ժամին մենք, որպես քրիստոնյա և հատկապես որպես կոչում ունեցող քարոզիչներ, պարտավոր ենք այս խեղճ ժողովրդին մեր Աստծու և Փրկչի անունից մխիթարել ու քաջալերել: Հավաքները կազմակերպում էինք մեծ բակերում: Հաճախ ժամերգության ընթացքում որոտում էին թնդանոթներն ու հրացանները ստիպելով մեզ ավելի ապահով տեղ փնտրել հաստ պարիսպների ներսում: Պատահում էր նաև, որ մեր ձայները խառնվում էին ռումբերի շառաչին: Եվ փառք Աստծու, ժամերգություններն ընթանում էին առանց դըժբախտ պատահարների: Ցանած սերմերը պտուղներ էին տալիս: Այստեղի հայ քահանաներին ևս հնարավորություն էինք ընձեռում ժամերգություն կատարել ըստ իրենց ծեսի. սա գնահատում էին հայ լուսավորչականները:

Կյանքը յուրատեսակ այս համայնքում ընթանում էր փոքրիշատե կանոնավոր հունով: Սակայն սրտերում բուն էր դրել վախվորած մի միտք չլինի թուրքերին հաջողվի խորտակել հայերի դիմադրությունն ու ներխուժել քաղաքի այն մասը, ուր մենք էինք: Կոտորածը դաժան կլիներ: Սոսկալի էր անգամ այդ մասին մտածելը: Եվ սրտերը շարունակում էին տանջահար տրոփել, հատկապես գիշերները, երբ չէին դադարում թնդանոթների ու հրացանների սարսափազդու և մահաբեր պայթյունները: Ավարտվում էր թուրքերի հերթական ուժեղ գրոհը և զար-

մանալիորեն դարձյալ պարզվում էր «Նրանք չեն կարողացել գրավել դիրքերն ու նորից ետ են շպրտվել կորուստներով»:

Հիմա էլ մեր առաջ ծանրացավ մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդիր: Որտեղի՞ց հաց հայթայթել փախստականների համար: Ոչ միայն մեր տներն էին լեփլեցուն, այլև փողոցներն էին լի հարյուր-հազարավոր մարդկանցով: Իհարկե ասվում էր, որ փախստականները վերադառնան իրենց բնակավայրերը, քանի որ հնարավոր չէր նրանց հաց հասցնել: Սակայն դա հնարավոր չէր: Ստեղծվել էր լարված իրավիճակ, սպասում էինք դեպքերի հետագա ընթացքին:

Մայիսի 14-ի լույս 15-ի գիշերն ամենուրեք հնչում էին ուրախության բացականչություններ: Ի՞նչ էր պատահել: Առավոտյան պատմեցին, որ լրաբեր է եկել և կոչ արել հավատով մի քիչ էլ տոկալ՝ ռուսները օգնության են գալիս: Որտեղի՞ց այս լուրը: Թշնամին հուսահատ երկու օր շարունակ կրակում էր: Ի վերջո մայիսի 16-ին փախավ, և Վանի բնակիչներն ու հյուրերը թեթևացած շունչ քաշեցին: Իսկ հետո՞: Հայերը զայրացած էին: Նրանց այլևս չէին հետաքրքրում ժնևի պայմանագրի որոշումները, առավել ևս Մաթեոսի Ավետարանի 5-րդ գլխի վերջում Հիսուս Քրիստոսի խոսքը: Նրանք ազատություն էին տվել վրեժի իրենց ծարավին: Չարության հուրն էր բորբոքվում ամբոխի մեջ: Ինչ դեռ կանգուն էր՝ զորանոցներն ու թուրքերի տները, կրակի էր մատնվում, անգթորեն այրվում, ոչընչացվում: Հանդիպած թուրքը փրկություն չուներ, սպանվում էր, հաշվի չէր առնվում հիվանդ կամ անկարող վիճակը: Այնուհետև հայերը տեր դարձան թուրքերի ունեցվածքին: Մայիսի 19-ին տեղ հասավ ռուսահայերի առաջին ջոկատը, վերջիններս սիրով կամավոր մասնակցում էին իրենց երկրի ազատագրմանը թուրքական լծից: Հաջորդ օրը ժամանեցին ռուսական բանակի հիմնական ուժերը»:

Կայծն արդեն կպել էր վառոդի տակառին: Էնվեր փաշան վճռել էր առիթն օգտագործել հայ ժողովրդին բնաջնջելու համար:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՑ ԵՎ ՋԵՆՔԻՑ

Ճիշտ չէ այժմ քննարկել, թե ինչպես սկզբնավորվեցին վայրի կրքերն ու տաքգլուխ գործողությունները: Ամեն ինչ հրահանգվում էր վերևից՝ կշռադատված և կազմակերպված, նենգ սառնասրտությամբ: Նախ ապրիլի կեսերին բոլոր մեծ քաղաքներում՝ Կոնստանդնուպոլսից մինչև Էրզրում, հանկարծակի ձերբակալվեցին ու բանտ նետվեցին հայերի շրջանում անվանի մարդիկ՝ հոգևորականներ, ուսուցիչներ, հարուստներ և մտավորականներ: Սրանով մեկուսացրին ժողովրդին իր առաջնորդներից, որպեսզի այնուհետև գլխատված ժողովրդի հետ հեշտ լինի խաղալ: Բանտերում այդ մարդիկ ենթարկվեցին անլուր տանջանքների իրենց չգործած մեղքերն ընդունելու համար, իսկ հետո առանց դատի սպանվեցին: Այսպես Խարբերդում ձերբակալեցին ամերիկյան քոլեջի բոլոր ուսուցիչներին, բացառությամբ մեկի, որն ուսանել էր Գերմանիայում և գերմաներենի դասեր էր տալիս Խարբերդի նահանգապետարանում: Ուրիշ երկուսը փրկագնով ազատվեցին: Պրոֆեսոր Թենեքեջյանը տասնամյակներ շարունակ պաշտոնական հարաբերություններ էր վարում բողոքական հայերի և թուրքական կառավարության միջև և թուրք պաշտոնյաներին հայտնի էր որպես լուրջ, շրջահայաց, քաղաքականապես վստահելի անձնավորություն: Չնայած այս բոլորին՝ բանտում փետել էին նրա գլխի և մորուքի մազերը: Այնուհետև օրերով քաղցած պահելուց հետո, ձեռքերից կախեցին՝ թողնելով մեկ օր ու գիշեր կախված: Ապա նրան ևս մյուսների հետ կապեցին Դիարբեքիր ուղարկելու համար, սակայն ճանապարհին սպանեցին: Պրոֆեսոր Բուջիկանյանը, որը մեր ուսուցիչներից մեկի եղբայրն էր, էդինբուրգում ուսումնասիրել էր փիլիսոփայություն և քրիստոնյա աստվածաբան էր: Քաղաքականությամբ ընդհանրապես չէր զբաղվում: Բանտում ենթարկվել էր ահավոր կտտանքների, հանել էին նրա երեք մատի եղունգները: Վերջում նրան նույնպես բաժին հասավ իր գործընկերների ճակատագիրը:

Պրոֆեսոր Որբերյանը բանտում տեսնելով հայերի մահից առաջ կրած խոշտանգումները հոգեկան խանգարում ստացավ: Նրան էլ իր ընտանիքի հետ քշեցին Մալաթիա և այնտեղ սպանեցին: Մարզվանի ամերիկյան քոլեջի պրոֆեսորներից մեկի օրինակը ցույց է տալիս, որ այս ամենի հիմքում ընկած է կրոնական գաղափարախոսությունը: Պրոֆեսորի մայրը գերմանուհի էր, իսկ ինքը եվրոպական կրթություն ստացած հմուտ բնագետ, և ամեն տեսակի քաղաքականության նկատմամբ անբարեհաճ վերաբերմունք ուներ: Բանտում չկարողանալով դիմանալ տանջանքներին համաձայնում է մահմեդականություն ընդունել: Նրան անմիջապես ազատ են արձակում և թույլատրում միանալ իր ընտանիքին: Նա կրում էր թուրքական անուն և շատ չանցած բարձր վարձատրությամբ աշխատանքի անցավ թուրքական դպրոցներից մեկում: Պրոֆեսոր Լուլեջյանին ծեծում էին Մեզրեհի բանտում, և կառավարության մի բարձր պաշտոնյա մասնակցում էր ծեծին: Երբ նա հոգնեց և այլևս չէր կարողանում հարվածել, կանչեց. «Ով իր կրոնն ու ժողովրդին սիրում է, թող շարունակի ծեծը»: Մամուրեթ-ուլ-Ազիզի գերմանական դպրոցի տարեց ուսուցիչներից մեկին ևս ծերբակալեցին: Բայց պարոն քարոզիչ էյմանի թափած եռանդուն ջանքերի շնորհիվ, նրան ազատ արձակեցին: Մեզրեհի մեր հաստատության հայ բժշկի դոկտոր Միքայելի փրկության համար արվեց ամեն ինչ, սակայն փրկության գլխավոր և հիմնական պայմանը իսլամ ընդունելն էր չնայած բժիշկը համընդհանուր սեր էր վայելում նաև թուրք բնակչության շրջանում, իսկ թուրք բարեկամներին հայտնի էր որպես կշիռ ունեցող անձնավորություն: Նա, որ իր կյանքի ընթացքում բազմիցս ճաշակել էր Աստծու ողորմածությունը, խուճապի չմատնվեց, ընտանիքի հետ որոշ ժամանակ ապրեց մի որբանոցում և Մամուրեթ-ուլ-Ազիզի նշանավոր հայերի շարքում քչերից մեկն էր, որ կենդանի մնաց:

Այս ընթացքում սկսվել էր նաև բանակում ծառայող հայերի զինաթափումը իբր ճանապարհաշինության մեջ աշխատելու համար: Իրականում ուղեկցող պահակախումբը գնդակահարում էր նրանց: Այնուհետև քաղա-

քացիական բնակչությունից ևս հավաքեցին զենքը լավ իմանալով, որ առաջնորդներ և զենք չունեցող ժողովրդին դյուրին է ոչնչացնել: Այդ մասին է Մամուրեթ-ուլ-Ազիզի որբանոցի գերմանացի քույրերից մեկի Քլարա Պֆայֆերի հաղորդումը:

«1914 թ., երբ սկսվեց պատերազմը, այստեղ ևս բոլոր երիտասարդները զորակոչվեցին: Եվ այն հայերը, ովքեր ի վիճակի չէին փրկագնով ազատվել զինվորական ծառայությունից, գնացին պաշտպանելու թուրքական կառավարությանը: Այդ ժամանակ դեռ չէին կարող գուշակել դեպքերի ընթացքը: Առաջին ամիսներն անցան խաղաղ, մինչև 1915 թ. սկիզբը, երբ սկսեցին լուրեր տարածվել Վանի գավառի բնակչության հեղափոխական շարժման մասին: Անմիջապես հայ զինվորներին զինաթափեցին, առանձնացրին զինվորական ծառայությունից, ասելով, որ նրանց պետք է օգտագործեն այլ աշխատանքի համար, ինչպես՝ օրինակ, ճանապարհաշինության մեջ: Տարեցները, որոնք հասցրել էին շատ բան տեսնել, լուրջ երկյուղներ ունեին:

Ժամանակի ընթացքում լսում էինք գավառներից հայ բնակչության արտաքսման մասին: Մեզ մոտ դեռ համեմատաբար հանգիստ էր: Եվ հաճկարծ մայիսի մեկին ծերբակալվեցին մի շարք մարդիկ, մեծ մասը բարձր դասից, այդ թվում մեր ուսուցիչներից մեկը, որին պարոն էյմանը կարողացավ մի քանի օր անց ազատել: Տներում խուզարկություններ էին կատարվում՝ գտնելու հեղափոխական գրքեր կամ թռուցիկներ, նույնիսկ լսեցինք, թե գտնվել են այդպիսիք: Այնուհետև հայտարարեցին, որ հայերն իրենց զենքը պետք է հանձնեն մինչև որոշված այսինչ օրը: Խոսքն այն զենքի մասին էր, որ առանձին մարդիկ զուտ պաշտպանության նպատակով պահում էին տանը կամ ճանապարհ գնալիս վերցնում էին իրենց հետ: Ասենք, որ նրանք կառավարությունից զենք կրելու թույլտվություն ունեին: Ինչքան հիշում եմ՝ հունիսի 15-ին եղավ առաջին հայտարարությունը, որը հայ բնակչության շրջանում մեծ հուզումներ առաջացրեց: Զենք ունեցողները

չէին ուզում հանձնել, որովհետև վախենում էին իրավիճակի վատթարացումից: Մի մասն իհարկե հանձնեց: Սակայն շատերը թաքցրեցին, որն էլ կառավարությանը մղեց հարկադիր միջոցների: Ձերբակալում էին մարդկանց, ենթարկում տանջանքների ու ծեծի: Պահանջում էին հայտնել զենք ունեցողների և զենքի թաքստոցների տեղը: Արդեն սկսվել էր մարդկանց սպանդը խոշտանգումներով: Ջինվորները շրջապատում էին ամբողջ գյուղեր, հավաքում արական սեռի բնակչությանը, կապում և անխնա ծեծում՝ չուզենալով հավատալ, որ ամբողջ զենքը վաղուց հանձնված է: Ծեծն էլի ինչ-որ բան էր ի հայտ բերում՝ մի քանի ռումբ ևս: Սակայն արդեն ոչինչ չունեցողներին դարձյալ հանգիստ չէին թողնում: Պատմում էին, որ զենք էին առնում ու հանձնում, որպեսզի ազատվեն դահիճներից: Անհնար է բառերով նկարագրել այն տառապանքը, որ այդ ժամանակ կրեցին առանձին անհատներ և նույնիսկ ամբողջ գյուղեր: Մենք գերմանացի եղբայրներս ու քույրերս, հորդորում էինք հայերին հանձնել թաքցրած զենքը, եթե կա, որովհետև կարծում էինք, թե դրանով վերջ կդրվեն տառապանքներին, և հայ բնակչությանը չեն արտաքսի: Պարոն Էյմանը անձամբ գնում էր գյուղերը, համոզում մարդկանց ոչինչ չթաքցնել: Նույնիսկ թույլտվություն ստացավ այցելել բանտ հորդորելու մարդկանց զենքը հանձնել:

Զենքի առգրավումը ընթանում էր տղամարդկանց բանտերը լցնելով: Հաճախ գիշերվա կեսին նրանց հանում էին անկողնուց: Շարունակվում էր նաև հայ երիտասարդների զորակոչը բանակ: Ինչպես արդեն ասվել է, հայերին թշնամու դեմ ճակատ չէին ուղարկում, այլ աշխատեցնում էին: Այդ ժամանակ մենք դեռ չգիտեինք, թե ինչ է սպասում նրանց: Եվ երկար չտևեց այդ անորոշ վիճակը:

Հունիսի կեսերն էր, առավոտյան լուր տարածվեց, որ գիշերը բանտարկյալների մի մեծ խմբի մոտ 600 հոգու, հանել են բանտից և տարել: Ու՞ր... Աստված գիտե միայն: Նրանց մասին այլևս ոչինչ չլսեցինք, ոչ ոք էլ չտեսավ նրանց: Միևնույն ժամանակ հայ երիտասարդներին, որոնց բանակ էին զորակոչել ճանապարհաշինության մեջ աշ-

խատելու համար, խումբ-խումբ բերում էին Մեզերեհ և փակում շենքի մեջ՝ սահմանելով մշտական հսկողություն: Մի քանի օր անց նրանց թվով 1200 մարդ, տարան զինված պահակախմբի ուղեկցությամբ: Ասում էին, թե նրանց տարել են ճանապարհ կառուցելու: Մադենում, որ գտնվում էր Մեզերեհից երկու օրվա հեռավորության վրա, նրանք իսկապես մի քանի օր աշխատել են: Այնուհետև նրանց քշել են Դիարբեքիր, ճանապարհին, չորս-չորս կամ հինգ-հինգ կապելով միմյանց, սպանել: Հունիսի 23-ին գիշերով դարձյալ 300 մարդ հանեցին բանտից: Հաջորդ օրն առավոտյան լացն ու կոծն բռնել էր ամենուր: Հարազատները, որ ուտելիք էին բերել, բանտը գտել էին... դատարկ:

Ու՞ր են այդ մարդիկ: Բացառված է, որ մեկն անգամ կենդանի է նրանցից: Նրանց ամուր կապել էին միմյանց, փախուստն անհնարին էր կամ՝ ու՞ր փախչեին: Հետապնդումներն ու խուզարկությունները վերջ չունեին:

Քույր Ալմա Յոհանսոնը հաղորդում է. «1915 թ. մայիսի սկզբներից Մեզերեհում (պաշտոնապես՝ Մամուրեթ-ուլ-Ազիզ) սկսվեցին հալածանքները: Տղամարդկանց ձերբակալում էին, ոտքերը ճզմում փայտերի մեջ և պայտում ձիերի նման: Քաշում հանում էին եղունգները, մորուքի մազերը, աչքերի թարթիչները, ատամները, կախում էին ոտքերից և այլն: Շատերը մահանում էին կտտանքներից: Մենք տեսել ենք նրանցից մի քանիսին հանձնված միսիոներության խնամքին: Խոշտանգվողների ճիչերը խլացնելու համար բանտի մոտ դհոլ-զուռնա էին նվագում: Շատերը չդիմանալով տանջանքներին, խոստովանում էին մեղքեր, որ բնավ չէին գործել»:

Այդ օրերին Մամուրեթ-ուլ-Ազիզի նահանգապետը պարոն քարոզիչ էյմանին դժվար կացության մեջ է դնում: Վերջինս քսան տարուց ի վեր հոգով ու սրտով այնքան հավատարմորեն էր ծառայել շրջակա հայ բնակչությանը, որ ընդհանուրի կողմից վաստակել էր «հայրիկ» անունը: Նահանգապետը պահանջում է որ նա, գործի դնելով իր ողջ հեղինակությունը համոզի հայերին հանձնել զենքը,

հակառակ դեպքում՝ հետևանքներն անկանխատեսելի կլինեն: Նահանգապետն ազնիվ խոսք է տալիս, որ հայերը զենքը հանձնելուց հետո պատասխանատվության չեն ենթարկվի: Արյունահեղությունը կանխելու նպատակով պարոն էյմանը գնում է դրան: Սակայն նահանգապետը շատ թեթևամտորեն վերաբերվեց իր ազնիվ խոսքին և չնայած զենքը հանձնվեց, բայց տեղի հայերը ևս չխուսափեցին այն հալածանքներից, որ բաժին էր հասել ողջ ժողովրդին:

Մամուրեթ-ուլ-Ազիզը այն ժամանակ մոտ 300 կմ հեռու էր ռազմաճակատից: Անշուշտ, էլ ավելի հեռու էր մեր մեկ այլ կայանը Մարաշը, որ գտնվում է Կիլիկիայում: Սակայն այստեղ ևս նույն վիճակն էր: Այդ մասին է Մարաշի տղաների որբանոցի վարիչ պարոն Քարլ Բլանքի հաղորդումը:

«Այստեղ հալածանքները քիստոնյաների դեմ սկսվեցին մարտի սկզբին, երբ կառավարությունը բախվեց Զեյթունի լեռներում ապաստանած «ավազակների (էշկյար)» հետ, և բավական թվով ոստիկաններ սպանվեցին: Այս դեպքը հուզումներ առաջացրեց իսլամ բնակչության շրջանում, և եթե Տիրոջ հրաշագործությունը չլիներ, ապա ջարդերն անխուսափելի կլինեին: Ընդհանրապես զորահավաքի հետևանքով լարված էին վերջին շաբաթները: Կառավարությունը զորակոչի և կենդանիների բռնագրավման միջոցով մեծ ճնշում էր գործադրում քրիստոնյաների վրա, որոնք թեև տնքում էին, բայց շարունակում էին լռել: Իսկ երբ բռնությունների չափն անցավ, պաշտպանությունն անխուսափելի դարձավ: Քրիստոնյա զինակոչիկների ընկատմամբ անպատշաճ վերաբերմունքն առաջ էր բերում դասալքություն: Կառավարության պաշտոնյաները անհավատարիմ էին իրենց խոստումներին, ավելի շուտ հակառակն էին կատարում: Զորակոչիկներին քաղցած էին պահում, շարունակ ծեծում էին: Այնուհետև նրանցից խլեցին զենքը և համազգեստը: Այս իրադարձությունները մահմեդականների մեջ ծնում էին այն մտայնությունը, որ ժամն է քրիստոնյաների դեմ հնչեցնելու պատերազմի

զանգը, և նրանք սա արտահայտում էին բացահայտ: Կառավարությունն աշխատում էր այդ ուղղությամբ, սակայն ասեկոսներին վերջ չկար: Կոտորածի սարսափն, անշուշտ, հոգեկան ծանր նստվածք էր առաջացնում: Զեյթունում գնալով ավելանում էին դասալիքները, որոնք քաշվում էին լեռները: Թուրք պաշտոնյաները վաղուց էին սկսել հալածանքը Զեյթունի բնակչության նկատմամբ, որի հետևանքով տարիների ընթացքում ոստիկաններից փախս տված բազմաթիվ երիտասարդներ էին ապաստանել լեռներում: Վիճակն ավելի էր սրվել, և կառավարությունը զորք ուղարկեց Զեյթուն «ավազակներին» բռնելու: Զինվորական դատարանն անմիջապես Մարաշ եկավ: Նախ պահանջեցին, որ բոլոր դասալիքները ներկայանան: Նրանք պետք է համալրեին տուգանային գումարտակները, բահն ու քլունգը ձեռքներին աշխատեին, ճանապարհներ և այլ շինություններ կառուցեին: Զեյթունը կանգնած էր ավերման վտանգի առաջ, սակայն մեր ոստիկանապետը, որ արդարամիտ անձնավորություն էր, կանխեց դա: Զեյթունցիները կամ պետք է հանձնեին «ավազակներին», կամ հայտնեին նրանց տեղը: Նրանք այդ քայլին չդիմեցին:

Մարաշում տարբեր մարդկանցից առաջարկություն ստացա Զեյթուն գնալ, համոզել բնակչությանը, որ հնազանդվեն իշխանություններին: Քանի որ պատերազմական վիճակ էր, ապա ճանապարհի թույլատրություն պետք է տար պարետը: Վերջինս նախ հարցում արեց ոստիկանապետին, ապա թույլատրեց: Մարաշից չորս հոգով մեկնեցինք Զեյթուն: Այնտեղ մենք 12 ժամից ավելի իրավունք չունեինք մնալու: Զեյթունում ես մարդկանց փորձեցի բացատրել, թե ինչ վտանգ է սպասում իրենց, եթե չհնազանդվեն իշխանությանը: Հուսով էի ամեն կերպ հորդորել «ավազակներին»՝ իրենք իրենց հանձնվելու, սակայն տեղի բնակչությունը հնարավորություն չտվեց հանդիպել նրանց, և ես ստիպված Զեյթունից վերադարձա դատարկաձեռն: Ճանապարհորդության արդյունքների մասին զեկուցեցի ոստիկանապետին: Ես նրա հետ մեկ այլ հանդիպում էլ ունեցա և խնդրեցի խնայել Զեյթունի անմեղ բնակչությանը:

Նա խոստացավ ու խոսքը դեռ պահում է: «Ավազակները» շրջապատման մեջ ընկան և գնդակոծվեցին: 36 հոգի գնդակահարվեց, մյուսները փախան և մինչև այժմ փախուստի մեջ են: Թե այս դեպքերն ինչ շարունակություն կունենան, ոչ ոք չի կարող ասել, Զեյթունը առայժմ չի գնդակոծվում:

Տեսնելով քրիստոնյաների այս վիճակը դիմեցինք կոտորածը կանխելու քայլերի: Ես այլևս չէի կարող Մարաշից բացակայել, ուստի որոշեցինք քույր Բեաթրիս Ռոներին Հալեպ ուղարկել, որպեսզի նա պարոն հյուպատոս Ռոսլերին տեղյակ պահի կատարված դեպքերի մասին, պատմի, թե ինչ վտանգ է սպասում քրիստոնյաներին, և հորդորի նրան այստեղ գալ: Պարոն հյուպատոսը եկավ և մնաց 9 օր: Նրա այցը, որ արդեն տեղեկացված էր հեռագրով, անմիջապես ազդեցություն գործեց:

Կուսակցությունը, որ նախապատրաստել էր կոտորածը, զայրացած էր իր ծրագիրը խոչընդոտող հանգամանքների վրա: Թեպետ պարոն հյուպատոս Ռոսլերի իրավասության մեջ չէր մտնում ուղղակի միջամտությունը, սակայն նա մեծ հեղինակություն ունեցող անձնավորություն էր, և կարելի է ասել, որ դրա շնորհիվ կանխվեց կոտորածը»:

3. ԱՔՍՈՐՆԵՐ

Կարճ մի բառ: Սակայն սարսափներով լի մեր ժամանակներում անգամ դժվար է պատկերացնել, թե որքան ոճիր է պարունակում այդ բառը:

Առաջին հայացքից ոչ մի կասկած չի հարուցում հետևյալ հրամանը.

«Բանակային անկախ կորպուսների և դիվիզիաների բանակի հրամանատարներն իրավասու են գյուղերի ու քաղաքների բնակչությանն առանձին կամ խմբերով տեղահանել և փոխադրել այլ վայրեր ելնելով ռազմական իրավիճակից կամ կասկածելով նրանց լրտեսության ու դավաճանության մեջ»:

Ընդ որում պետք է ցուցակագրվեր աքսորյալների ունեցվածքն ու պահ տրվեր կառավարությանը: Փոխարենը նրանց նոր հողեր էին տալու Բաղդադի երկաթուղու մերձակա տարածքներում:

1915 թ. ապրիլին սկսվեց Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի հայ բնակչության աքսորը: 1915 թ. մայիսի 20-ին աքսորի հրաման է տրվում արևելյան 7 նահանգի Վանի, Բիթլիսի, Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ), Դիարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի հայ բնակչության համար: Մի քանի ամիս անց նույն դժնդակ ճակատագիրը բաժին հասավ նաև Փոքր Ասիայի արևմուտքում ապրող հայերին: Ըստ 1918 թ. նոյեմբերի 12-ի գերմանա-հայկական թղթակցության Թուրքիայից տեղահանվել է մոտ 1.400.000 2 միլիոնից քիչ պակաս հայ բնակիչ: Եվ այնպիսի անմարդկային եղանակներով իրականացվեց այդ ծրագիրը, որ ընթացքում խլվեց ավելի քան մեկ միլիոն մարդկային կյանք, իսկ 1896 թ. Աբդուլ Համիդի կոտորածները չնչին և մեղմ են թվում խոշտանգումներով իրագործվող զանգվածային այս սպանդի համեմատությամբ: Թուրքական կառավարության խիղճը մաքուր չէ այս գործում, այնինչ արտերկրում նա ջանում է ժխտել եղած փաստերը: 1915 թ. օգոստոսի 27-ին Ժնևում թուրք հյուպատոս Զիա բեյը Օտտոմանյան կայսրությունում հայերի կոտորածների մասին չեզոք թերթերում տարածված բոլոր լուրերին պատասխանեց ձևական մի հերքումով, որը տպագրվեց գերմանական բոլոր թերթերում: Ողջ հայ բնակչությունը տղամարդ, կին և երեխա, գտնվում է իշխանությունների կողմից երաշխավորված կատարյալ պաշտպանության ներքո: Խոսքը մի քանի հանցագործի մասին է, որոնք պատժվել են օրենքով դատարանի կողմից: Սակայն ականատեսների հաղորդումները միայն կարող են լույս սփռել բուն եղելության վրա:

Շվեդ միսիոներուհի քույր Թորա ֆոն Վեդել-Յարլսբերգը և գերմանուհի քույր Էվա Էլվերսը 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915 թ. ապրիլը Էրզրումում խնամում էին թուրք զինվորներին, այնուհետև Երզնկայում աշխատում են Կարմիր խաչի զինվորական մի հիվանդանոցում, որն ուներ չորս գերմանացի բժիշկ և բազմաթիվ խնամողներ: Ահա թե ինչ են հաղորդում քույրերը:

«1915 թ. հունիսի սկզբին Երզնկայի Կարմիր խաչի ղեկավար, շտաբի բժիշկ դոկ. C-ն հաղորդեց, որ Վանում հայերը ըմբոստացել են կառավարության դեմ և որ հրաման է եկել՝ նրանց հայրենակիցներին տեղահանել այն նահանգներից, ուր նրանք մեծամասնություն են կազմում, և վերաբնակեցնել Միջագետքում: Տեղահանումը պետք է կատարվեր ոչ միայն առանց կոտորածների, այլև հոգալու էին մարդկանց կարիքները, իսկ ապահովությունը պաշտպանելու էին զինվորական ջոկատները: Մեզ արգելված էր ամեն կարգի հաղորդակցություն գաղթող հայերի հետ, նաև փոքր-ինչ հեռու ծիավարելն ու զբոսանքները: Երզնկայի հայերին մի քանի օր ժամանակ էին տվել իրենց իրերը վաճառելու համար, իսկ տների բանալիները մեկնելուց առաջ հանձնելու էին իշխանություններին:

Հունիսի 7-ին մեկնեց առաջին քարավանը: Հիմնականում այն համալրված էր ունևոր խավից, որոնք կարողացել էին սայլ վարձել, և նրանք իսկապես հասան ճանապարհի հաջորդ կայանը Խարբերդ: Հունիսի 8-ին, 9-ին և 10-ին քաղաքից նորանոր խմբեր հեռացան, ընդամենը 20-25 հազար մարդ: Գերմանացի բժիշկների վկայությամբ տեղահանումն իրոք ընթանում էր կարգ ու կանոնով, փոքր երեխաներին տանում էին եզներ լծած սայլերով, իսկ քարավանը ուղեկցում էին զինվորներ: Սակայն շուտով լուրեր հասան, թե քրդերը հարձակվում են անպաշտպան ամբոխի վրա և թալանում: Այդ լուրերի հավաստիությունը հաստատեց մեր թուրք խոհարարուհին: Կինն արցունքներն աչքերին պատմեց, որ քրդերը բռնաբարել ու սպանել են կանանց, իսկ երեխաներին նետել Եփրատ գետը: Նա ասաց նաև, որ շատ թուրքեր երզնկացի հայ երեխաներ են վերցրել, իր որդին ևս մեկին տուն է բերել:

Ազգությամբ հայ բժիշկ Կազազյանը պատմեց, որ հունիսի 10-ին երկու երիտասարդ ուսուցչուհի, որոնք ուսանել էին Խարբերդի ամերիկյան քոլեջում, աքսորյալների իրենց խմբով անցնում էին Կամախի կիրճով, երբ ընկան խաչաձև կրակի տակ: Առջևում քրդերն էին, հետևում, ինչպես պարզվում է, Թալեաթի կիսականոնավոր ջոկատները: Վախից նրանք նետվում են գետին և մեռած

ձևանում: Երբ կրակոցները դադարում են, ուսուցչուհիները և նրանցից մեկի նշանածը, որ հետևերն էր՝ կանացի շորեր հագած, վերադառնում են Երզնկա: Նրանց օգնում է երիտասարդի թուրք դասընկերը: Քաղաքում մի ոստիկան հարսնացուին իր տուն է ուզում տանել, և երբ նշանածը դիմադրում է, ոստիկանը սպանում է նրան: Երիտասարդ աղջիկներին իրենց տներն են վերցնում քաղաքում հայտնի թուրքեր: Աղջիկները վերոհիշյալ բժշկի միջոցով թախանձագին խնդրում էին մեզ իրենց Խարբերդ հասցնել:

Հունիսի 11-ին «քրդերին պատժելու համար» կանոնավոր ջոկատներ ժամանեցին քաղաք: Սակայն քրդերի փոխարեն նրանք սկսեցին ոչնչացնել անպաշտպան քարավանները, որոնք կազմված էին հիմնականում կանանցից և երեխաներից: Աքսորյալներին ուղեկցող թուրք զինվորներն իրենք պատմեցին մեզ, թե կոտորածի ժամանակ ինչպես էին կանայք ծնկաչոք գութ աղերսում, և թե ինչպես շատերն իրենց երեխաներին գետը նետեցին: Մենք սարսափահար եղած հարցրինք. «Եվ դուք կրակեցիք կանանց ու երեխաների վրա՞»: Պատասխանը. «Ի՞նչ կարող էինք անել, հրաման ենք կատարում»: Նրանցից մեկն ասաց. «Իրոք, դաժան տեսարան էր, ես չկրակեցի նրանց վրա, ես օդ կրակեցի»: Կարեկցության արժանի են նաև այս թշվառականները, որոնք քայլ առ քայլ վերածվում են գազանների: Զինվորները հայտնեցին նաև, որ կոտորածն իրականացնողը 86-րդ հեծյալ գունդն էր իր սպայական կազմով: Չորս ժամում բոլորին սպանեցին: Նախօրոք պատրաստ կանգնած էին եզներ լծված սայլեր, որ դիակները գետը տանեն: Երեկոյան «ռազմիկները» ավարով բեռնավորված տուն էին վերադառնում: «Վատ չենք աշխատել, չէ՞»,- ասացին նրանք գերմանացի դեղագործ պարոն Գելֆենին, որը գիտեր թուրքերեն և, ինչպես մենք՝ վրդովված էր եղածից: Ցավոք, թե հայերը և թե թուրքերը կարծում են, որ գերմանացիների հավանությամբ են կատարվում այս դեպքերը: Դրա հիմքում դոկտոր C-ի հայտարարությունն է, թե ինքը չի ցանկանում խառնվել այս գործին, քանի որ պաշտպանում է ավելի բարձր շահեր: Նա թույլ տվեց աքսորել նաև մեզ մոտ աշխատող հեր-

թապահ հիվանդապահների և արհեստավորների ընտանիքներին: Բժիշկներից երկուսը բողոքեցին չնայած արդյունքի չհասան, իսկ դոկ. Շ-ն չմիացավ նրանց: Նույնիսկ հիվանդանոցում պառկած զինվորի տիֆով հիվանդ կնոջն աքսորեցին: Ահա մի պատառիկ այն ապրումներից, որ մեզ հաղորդակից դարձրեց մեր հիվանդանոցի հայ կոշկակարը. «46 տարեկան եմ և կառավարության դեմ որևէ արարք թույլ չեմ տվել: Մանկությունից սկսած շարունակ փրկագին ենք տվել: Ես էլ կարող էի զինվորական ծառայության մտնել, բայց ինձնից խլեցին իմ ընտանիքը 70 տարեկան կույր մորս, կնոջս և հինգ երեխաներիս»: Նա դառնորեն ողբում էր իր մեկուկես տարեկան կրտսեր դստրիկի համար: «Այդքան գեղեցիկ երեխա տեսած չեք լինի, աչքերը պնակի չափ էին: Մենք շատ կապված էինք: Կուզեի օձ լինել և սողալ նրա հետևից»: Եվ լալիս էր ու լալիս: Հաջորդ օրը նա եկավ միանգամայն հանգիստ և ասաց. «Արդեն գիտեմ բոլորը մեռած են»: Հարազատների ճակատագրի հավաստիությունը կարծես խաղաղեցրել էր նրան:

Մեր թուրք պահակները պատմեցին, որ հայ զինվորներին զորակոչից շատ չանցած սպանել են, և ցույց տվեցին այն լեռը, որի ետևում գնդակահարել էին նրանց: Կոտորածից հետո մի քանի օր մարդաորս էր Երզնկայի մերձակա հացահատիկի դաշտերում, ուր ոմանք հասցրել էին թաքնվել: Այն ժամանակ մենք դեռ չգիտեինք, որ նախատեսված էր ամբողջ ժողովրդին բնաջնջել, և մտածում էինք ինչ-որ կերպ օգնել այդ քարավաններին ուղեկցելով նրանց Կամախի կիրճով դեպի Խարբերդ: Կարծում էինք, օգտագործելով քրդերի շրջանում ունեցած մեր հեղինակությունը, կկարողանանք ապահովել այդ դժբախտներին նրանց հարձակումից, ինչպես նաև ոստիկանների բռնարարքներից: Երբ մեր մտադրության մասին տեղյակ պահեցինք դոկ. Շ-ին, նա ասաց. «Ուրախ եմ, որ մեր մտքերը համընկնում են: Սակայն Դուք էվա էլվերս, այնպիսի արտահայտություն եք թույլ տվել, որով ծանր մեղք եք գործել թուրքական պետության դեմ: Հիվանդանոցի կառավարիչը բողոքել է, որ դուք հի-

վանդների ներկայությամբ ասել եք, որ Աստված կպատժի կանանց և երեխաների հանդեպ գործած հանցանքի համար»: (Քույր էվան դա ասել էր ոչ թե հիվանդներին, այլ կառավարչին, որը տգեղ արտահայտություն էր թույլ տվել հայերի հասցեին): «Տեղի իշխանություններին հայտնել եմ Ձեր գնալու մասին, այլապես ես չեմ կարող երևալ այդ մարդու աչքին: Մի քանի օր ունեք Ձեր գործերը կարգի բերելու»: Մեր ազատման մասին հեռագրեցինք էրզրում Գերմանիայի հյուպատոս պարոն ֆոն Շոյբներ-Ռիխթերին, որն իր հայանպաստ աշխատանքի շնորհիվ հայտնի էր հայերի շրջանում, որոնք գերմանացիների նկատմամբ սովորաբար թշնամաբար էին տրամադրված: Մենք հարցրել էինք նաև, թե նա Գերմանիայի շահերից դրդված արդյոք չի՞ կարող Երզնկա գալ: Ահա նրա պատասխանը. «Առայժմ հնարավոր չէ մեկնել: Երեքշաբթի, հունիսի 23-ին դիմավորեցեք ժամանող ավստրիացիներին»: Երզնկայով արդեն աքսորյալների բազմաթիվ քարավաններ էին անցել, սակայն մենք չէինք տեսել նրանցից և ոչ մեկին, քանի որ նրանց մեծ մասամբ գիշերով էին քշում կամ այլ ճանապարհով տանում: Ամսի 18-ի երեկոյան մեր բարեկամ պարոն Գելզենի հետ զբոսնում էինք տան առջև: Մեզ հանդիպեց մի ոստիկան և ասաց, որ 10 րոպե առաջ հիվանդանոցից վերև գիշերելու են բերել Բայբուրդից կանանց ու երեխաների մի խումբ: Նա անձամբ ուղեկցել էր նրանց մինչև այստեղ և վրդովված ավելացրեց, որ իրենց հրամայված էր ճանապարհին «կոտորելով տեղ հասցնել»: Օրական 10-12 մարդ էր սպանվում և նետվում ձորը: Երեխաներին, որոնք այլևս չէին կարողանում քայլել, ջարդում էին գլուխները, կանանց ամեն նոր գյուղի մոտ առևանգում և բռնաբարում էին: «Անձամբ ես թաղել եմ երեք մերկ կնոջ դիակ, Աստված գուցե դա հաշվի կառնի»,- այս խոսքերով ավարտեց նա իր սահմռկեցուցիչ պատմությունը: Մինչ մենք զրուցում էինք այդ մարդու հետ, մեր գերմանացի պարոնները հյուրընկալվել էին մի թուրք սպայի մոտ, որը քաղաքից դուրս ճաշկերույթ էր կազմակերպել նշելով տիֆից իր ապաքինումը: Հաջորդ օրը, առավոտ շուտ

հանդիպեցինք մահվան դատապարտվածներին: Մենք միացանք նրանց և շարժվեցինք դեպի քաղաք: Անհնար է նկարագրել տիրող թշվառությունը: Խմբում մնացել էր ընդամենը երկու տղամարդ, կանանցից շատերը հոգեկան հիվանդներ էին: Մի կին բղավում էր. «Մենք մահմեդական կդառնանք, գերմանացի էլ, ինչ ուզում եք, միայն փրկեք մեզ, թե չէ Կամախ հասնելուն պես կթռցնեն մեր վզերը»: Այս ասելիս, հետն էլ համապատասխան շարժումներ էր անում: Ոմանք խնդրում էին մեզ փրկել իրենց երեխաներին, մյուսները լուռ և անտարբեր շարունակում էին առաջ գնալ: Քաղաք չհասած՝ մոտեցան թուրք ծիավորներ, ջոկեցին և տարան երեխաների և աղջիկների: Քարավանը, մինչ կբռներ Կամախ տանող ճանապարհը, մի պահ կանգ առավ քաղաքի մուտքի մոտ, ուր գտնվում էին նաև գերմանացի բժիշկների տները: Այստեղ մի իսկական ստրկավաճառության շուկա էր, միայն թե առևտուր չկար: Մայրերն իրենք էին իրենց երեխաներին կամովին տալիս, հակառակվելն էլ անօգուտ էր: Մենք նույնպես վերցրինք վեց պատանի՝ 8-14 տարեկան, և մի փոքրիկ աղջիկ, որոնք հուսահատ ամուր կառչեցին մեզ: Այնուհետև թափորի մնացած մասը՝ երևի մի քանի հարյուր մարդ, բարձրաձայն ողբալով ճանապարհ ընկավ, հեծյալ ոստիկանների մտրակների շաչյունի տակ: Փոքրիկ աղջկան տվեցինք դոկ. Շ-ի բարեհամբույր խոհարարուհուն խնդրելով մինչև երեկո մեր վերադարձը, պահել: Սակայն դոկ. Շ-ի համհարզ Ռիզա բեյը ծեծելով կնոջն ու երեխային փողոց էր նետել: Մենք պատանիների հետ վերադարձանք հիվանդանոց, դոկ. Շ-ից թույլատրություն խնդրեցինք երեխաներին մեր սենյակում պահելու մինչև իրերը կապելը: Նրանք հաց կերան և քիչ անց խաղաղվեցին:

Պատանիներին վերցնելուց հետո, երբ ամուր բռնել էինք ձեռքերը, ուրախ բացականչեցին. «Փրկվեցինք»: Իսկ արդեն տանը ասացին. «Օգնեցեք, որ մեզ մահմեդական չդարձնեն, չէ որ ձեր և մեր խաչը նույնն է»: Երեխաներից ամենափոքրը՝ Գրիգորը, Բայբուրդի հարուստներից մեկի որդին էր: Նա ոչ մի կերպ չէր սփոփվում, շատ խղճուկ էր նրա տեսքը՝ հոր բաճկոնը հագին, լացից ուռած դեմքով:

Հանկարծ նետվեց դեպի պատուհանը և ցույց տալով անցնող ոստիկանին՝ բացականչեց. «Ահա նա, նա սպանեց իմ հորը»: Պատանիներն իրենց մոտ եղած չնչին փողը 475 ղուրուշ, տվեցին մեզ: Հայրերը մտածելով, որ երեխաներին չեն ստուգի, փողը պահ էին տվել նրանց: Մենք ծիով քաղաք մեկնեցինք իշխանություններին տեղյակ պահելու, որ երեխաներին մեզ հետ Մեզերեհ և ապա Գերմանիա ենք տանելու: Նկատեցինք, որ «կառավարությունում» ոչ ոք մեր ծիերը չվերցրեց, սովորականի պես սիրալիր էին, խոստացան ճանապարհի համար տղաներին թուրքական անուններ տալ: Այնուհետև հիվանդանոցում կապեցինք մեր իրերը, իսկ երեկոյան մեր վեցյակի հետ տեղափոխվեցինք հյուրանոց՝ գիշերելու: Հյուրանոցում որևէ արտառոց դեպք չպատահեց, բացի նրանից, որ հանկարծ ուժեղ ծեծեցին դուռը և հարցրին, թե գերմանացի երկու կանայք այդտե՞ղ են մնում: Առավոտյան նախաճաշեցինք սրճարանում: Հյուրանոցի տերը մեզ հետ զրույցի բռնվեց և պատմեց, որ Կոնստանդնուպոլսից հրաման է եկել՝ ոչնչացնել բոլոր տեղահանվածներին: Հայերն են մեղավոր այս բոլորի համար, քանի որ նրանք Վանում թուրքերի հանդեպ կիրառել են նույն բռնությունները: Նրան, ինչպես նաև ներկաներին, ասացինք, եթե հայերը հանցանք են գործել, ապա պետք է ռազմական դատարանը մահապատժի ենթարկի մեղավորներին, թեկուզ նրանք լինեն հարյուր կամ հազար հոգի, իսկ այս անմեղ ժողովրդի եղեռնն ինքնին սատանայի գործ է: Խոջան, որը մեր հիվանդանոցի մահմեդական հոգևորականն էր, ջանում էր համոզել, որ թուրքերը շատ ներողամիտ են: Հայերը թուրքերին խոշտանգում են, որովհետև նրանց կրոնը ողորմելի է, իսկ իրենք էլ տգետ են, մինչդեռ լուսավոր մուսուլմանները նույն կերպ չեն հատուցում, այլ բավարարվում են միայն իրենց զոհին սպանելով: Նա խոսքը ավարտեց ասացվածքով. «Բանն Աստծուց է, եթե նա գութ չունի, ինչու՞ դուք պետք է ունենաք»:

Մեր գործերը վերջնականապես կարգի բերելու համար մեկ անգամ էլ գնացինք նահանգապետարան: Մինչ այդ միշտ հանդիպում էինք տեղակալին, այս անգամ նահան-

գապետը տեղում էր և որոշել էր մեզ իր գերազանցությունը ցույց տալ: Նա կատաղած, բարձր ձայնով ճչում էր. մենք կին ենք և չպետք է զբաղվենք քաղաքականությամբ, այլ ակնածանքով վերաբերվենք կառավարությանը: Եվ ինչպես դոկ. C-ն մեր ձեռքից բռնեց ու փողոց նետեց, այնպես էլ ինքը մեզ երկրից կարտաքսի: Մենք իրավունք չունենք տղաներին վերցնելու: Նա անմիջապես ոստիկան ուղարկեց նրանց հետևից: Մեր այն հարցին, թե ի վերջո որն է մեր մեղքը, նա պատասխանեց. «Դա դուք գիտեք և դոկ. C-ն»: Մենք առարկեցինք՝ ասելով, որ կարիքավորներին, լինեն նրանք քրիստոնյա թե մուսուլման, օգնել ցանկանալը բոլորովին կապ չունի քաղաքականության հետ: Մեր խոսքը ոչ մի ազդեցություն չթողեց նահանգապետի վրա: Սրանով ավարտվեց մեր հանդիպումը այդ ճիվաղի հետ: Ճանապարհին տեսանք տղաներին: Նրանք այնքան արագ անցան մեր կողքով, որ չհասցրինք որևէ բան ասել, անգամ փողը վերադարձնել: Բոլոր այս անօրինությունների մեջ սա, անշուշտ, ամենաքստմնելի պատմությունն էր, որովհետև երեխաները կարող էին մտածել, որ վերջին բարեկամներն էլ խաբեցին իրենց: Այդ իսկ պատճառով բըժիշկներից մեկին խնդրեցինք նրանց տեղն իմանալ: Վերջինս տղաների մասին հարցուփորձ էր արել մի թուրքի: Իսկ մեր մեկնման օրը վերոհիշյալ Ռիզա բեյը մեզնից ուզեց փողը՝ տղաներին վերադարձնելու համար, իսկ մենք այլ աղբյուրից արդեն գիտեինք, որ նրանք սպանված են:

Վերադարձանք հյուրանոց, բայց այնտեղ մեզ այլևս տեղ չտվեցին, այլ ուղարկեցին ծայրամասում գտնվող հայկական մի թաղամաս հատկացնելով դատարկված տներից մեկը: Տխուր էր, երբ նայում էինք այդ տներին, ուր ոչ վաղ անցյալում ապրում էին երջանիկ ընտանիքներ, իսկ հիմա ամայություն էր: Դեռ շարունակվում էր բնակարանների կողոպուտը: Փողոցում ընկած էին ընտանեկան երկու մեծ Աստվածաշունչ: Տունը, որ տվել էին մեզ, կոկիկ էր և մաքուր, կարծես տանտիրուհու հոգին դեռ այնտեղ էր: Նախասենյակում նստած էր մի թուրք, մի հայ կին էլ, որ իր երեխայի հետ էր, աշխատում էր որպես աղախին: Թուրքն ուրախ խաղում էր փոքրիկի հետ, իսկ կինը չէր հա-

մարձակվում նույնիսկ խոսել մեզ հետ: Շուտով նրանք անհետացան, և մենք մնացինք մենակ: Ոչ կարող էինք դուռը փակել, ոչ էլ ջուր կամ ուտելիք հայթայթել: Դոկ. C-ն տեղեկանալով մեր վիճակի մասին՝ դոկ. L-ի հետ կառք ուղարկեց մեր հետևից: Դա հունիսի 19-ն էր: Հաջորդ օրը նահանգապետը առանց ծածկի մի բեռնատար կառք ուղարկեց, որով մենք 7 օր ճանապարհ էինք գնալու մինչև Սվազ: Մեզ արգելում էին Մեզերեհով գնալ, ուր մեր իրերն էին. այնտեղ անշուշտ կարող էինք դիակներ տեսնել: Մենք կտրականապես հրաժարվեցինք նման կառքով ճանապարհ ընկնել, և դոկ. C-ի միջնորդությամբ նահանգապետը բարեհաճեց հաջորդ օրը փոստակառք ուղարկել՝ սպառնալով ձերբակալել մեզ, եթե անմիջապես չմեկնենք: Մեր ներկայությունը գրգռում է մարդկանց, և ինքն այլևս չի կարող երաշխավորել մեր անվտանգությունը: Մենք պատասխանեցինք, որ հյուպատոսը հանձնարարել է մեզ ընդունել ավստրիացի սպաներին, իսկ նրանք ժամանելու էին 22-ին: Թուրք պահակները, որ լավ էին տրամադրված մեր նկատմամբ, ասացին. «Չգնաք, ճանապարհին ձեզ կըսպանեն»: Դոկ. C-ն էլ պնդում էր, որ մեզ այլևս չի կարող պաշտպանել: Եվ մենք նախընտրեցինք մեկնել: Պարոն Գելզենին էլ ազատեցին, բայց թողեցին, որ դիմավորի սպաներին: Եվ այսպես հունիսի 21-ին դուրս եկանք Երզընկայից: Դոկ. L-ն սիրահոժար առաջին երկու օրն ուղեկցեց մեզ: Առաջին օրը ճանապարհին ընկած երեք դիակ տեսանք, երկրորդ օրը երկու: Դիակներից մեկի կողքին մի շուն կար պառկած: Մեր կառապանը նկատեց, որ նահանգապետը պետք է դիակները թաղել տա, թե չէ շները կվարժվեն մարդու միս ուտելուն: Ճանապարհին մեզ միացան թուրք սպայի հագուստով երկու հոգի, որոնց կառապանը հայ էր: Երեկոյան մեզ ուղեկցող ոստիկանը ասաց, որ նրանք երկուսն էլ հայ են: Իսկ մեր այն հարցին, թե նրանց է՞լ են սպանելու, պատասխանեց. «Անշուշտ, նրանք ևս իրենց տեղը կգնան»: Սպաները աշխույժ զրուցում էին դոկ. L-ի հետ և, որպես իսկական թուրքեր, դրվատում կնոջ չադրայով լինելը: Ի դեպ, կարծում էին, թե մենք էլ հայ ենք: Դա երևում էր մեր նկատմամբ ոս-

տիկանների մութ զգուշավորությունից, որն այնուհետև իր տեղը զիջեց բարեկամական վերաբերմունքին: Թուրքերը չէին պատկերացնում, որ գերմանացին կարող է պաշտպանել հային: Երզնկայում երիտասարդ մի բժիշկ զրույցի ժամանակ ասաց. «Եթե Գերմանիայում ապրող ազգերից մեկը ապստամբի, դուք նրան չե՞ք ոչնչացնի»: Քույր էվան պատասխանեց. «Մենք կպատժենք մեղավորներին, ոչ թե կսպանենք կանանց և երեխաներին»: Երիտասարդն ասաց. «Ուրեմն դուք իսկական գերմանացի չեք»: Ճանապարհին հանդիպեցինք աքսորականների մի մեծ խմբի, որոնք վաղուց չէ, որ թողել էին իրենց բնակավայրերը, քանի որ դեռ լավ վիճակում էին: Ստիպված էինք երկար կանգ առնել, մինչև նրանք կանցնեին: Երբեք չի մոռացվի այդ տեսարանը: Մի քանի տղամարդ ընդամենը, մնացածը կանայք և մեծ թվով երեխաներ բաց գույնի մազերով և մեծ, կապույտ աչքերով, որոնցով նայում էին մահվան խստությամբ և բնազդային վեհությամբ, կարծես դատաստանի հրեշտակներ լինեին: Համր ու լուռ քայլում էին նրանք, մեծ ու փոքր, մինչև անգամ զառամյալ մի կին, որ դժվարությամբ էր էշի վրա նստած մնում: Նրանց բոլորին իրար կապկպած Կամախի կիրճի մերձակա այդ անեծքի հովտում մի բարձր ժայռից նետեցին Եփրատի ալիքների մեջ: «Տեսեք, թե ինչ են արել»,- ասաց մեր հույն կառապանը,- «դիակներն այնտեղ են, խոր ցածում»: Տեսնելով այս ամենը՝ սարսուռը պատում էր մեզ: Ուղեկցող ոստիկանը պատմեց, որ հենց այսպիսի մի քարավան մոտ 3000 կին և երեխա, Մամախաթունից (Երզնկայից 2 օրվա հեռավորությամբ) գալիս էր Կամախ: «Բոլորին սպանեցին» «hep gitdi bitdi»,- ասաց նա: Մենք հարցրինք. «Եթե որոշել եք կոտորել նրանց, ինչո՞ւ իրենց գյուղերում չեք անում դա: Ինչի՞ համար են այս տաժանելի տառապանքները»: Նա թե. «Այսպես ճիշտ է, նախ պետք է ստորացնել»: Եվ. «Ի՞նչ էինք անելու դիակները, չէ որ դրանք հոտում են»:

Գիշերն անցկացրինք Կուդերեսում, հայերի տներից մեկում: Տղամարդիկ վաղուց քշված էին, իսկ կանայք դեռ ներքնահարկում էին: Մեզ ասացին, որ վաղը նրանց ևս

տեղահանելու են: Այդ մասին նրանք դեռ չգիտեին և համեմատաբար հանգիստ էին, նույնիսկ ուրախացան, երբ երեխաներին քաղցրավենիք տվեցինք: Մեր սենյակում պատի վրա թուրքերեն գրված էր. «Մեր տեղը լեռներում է, տան կարիք այլևս չունենք, խմել ենք մահվան դառը թույնը, դատավորի կարիք չունենք»: Լուսնի լույսով ողողված պայծառ երեկո էր: Քնելուց առաջ լսեցինք հրացանների կրակոցներ, որոնց նախորդել էր հրաման: Անմիջապես կռահեցինք, թե ինչ էր կատարվում և առերևույթ թեթևացած քուն մտանք: Ուրախ էի, որ զոհերն այդ գոնե արագ գտան իրենց մահը և արդեն կանգնած են Աստծո առաջ: Առավոտյան բնակչությանն անուն առ անուն ստուգեցին, փախստականներ հայտնաբերելու նպատակով: Զինվորներին բոլոր ուղղություններով հետապնդման ուղարկեցին: Երկու հոգի ստվերախիտ ծառի տակ նստած բաժանում էին ավարը: Նրանցից մեկի ձեռքին կապույտ մահուդե մի տաբատ էր: Չորս կողմ սփռված դիակները բոլորն էլ մերկ էին, մեկը նույնիսկ առանց գլխի էր: Այդ առավոտ վերը հիշատակված սպաները մեզ հետ ճանապարհ դուրս չեկան: Մեր հարցին պատասխանեցին. «Մի հետաքրքրվեք նրանց մասին, ովքեր ձեզ հետ կապ չունեն»: Կեսօրին կանգ առանք հիասքանչ դիրք ունեցող հունական գյուղում: Ընդհանրապես մեր անցած ողջ տեղանքը փայլում էր գեղեցկությամբ և ծաղիկների շքեղությամբ, ինչը չէինք տեսել Թուրքիայում: Գյուղում վայրենու արտաքինով զինված մի մարդ կար: Նա ասաց, որ ինքն այստեղ է ճանապարհորդներին հսկելու համար, այսինքն հայերին բռնելու և սպանելու համար: Նա շատերին էր սպանել և նույնիսկ նրանցից մեկին «թագավոր» կարգել: Մեր կառապանը բացատրեց, որ նա ի նկատի ունի 250 ճանապարհաշինարարներին, որոնց կառափնարանը տեսանք ճանապարհին: Այնտեղ դիակներ չկային, սակայն շատ լերդացած արյուն կար: Հեռախոսով հրաման էր ստացել սպանելու սպաներին և հիմա նրանց էր սպասում:

Կեսօրից հետո հասանք մի հովիտ, ուր ճանապարհ կառուցողների համար (մուսուլմաններ, հույներ և հայեր) երեք տնակ էր տեղադրված: Առջևը կանգնած էին մի քանի

սպա: Մեր փոստակառքը շրջվեց բլուրի մյուս կողմը: Կառապանը ցույց տվեց ցածում տարածված հովիտը, ուր մի փոսի առաջ շարված էին ճանապարհի վրա աշխատող 100 տղամարդ: Արդեն իմանալով, թե ինչ էր կատարվելու, այդ կողմը չնայեցինք: Մեկ այլ վայրում նորից նույն տեսարանը: Սվազում միսիոներությանը պատկանող հիվանդանոցում պառկած էր մեկը, որը պրծել էր նմանատիպ մի սպանդից: Նրան իր նման 95 ճանապարհ կառուցողների հետ, որոնք բոլորն էլ նախ զինվոր էին եղել, շարք են կանգնեցնում խմբին կցված 10 ոստիկանները և կրակում, մինչև բոլորը ցած են թափվում: Այնուհետև շարքային մուսուլմանները կենդանի մնացածներին սպանում են դանակներով կամ քարերով: 10 հոգու հաջողվում է փախչել: Այդ մարդն ինքը ծոծրակին մի սարսափելի վերք ուներ: Նախ նա ուշաթափվում է, սթափվելուց հետո կտրում անցնում է երկու օրվա ճանապարհ մինչև Սվազ: Նա այդ վիճակում իր ժողովրդի մարմնացումն էր, որ կարողանում է հաղթահարել իրեն հասցված մահացու վերքերը:

Մի գիշեր անցկացրինք Զառայում, կառավարության շենքում: Դռան առաջ նստած ոստիկանը երգում էր. «Ermenilery hep kesdiler» (Բոլոր հայերը սպանված են): Իսկ հարևան սենյակում հեռախոսով այդ մասին ավելի երգեցիկ էին խոսում: Մի գիշեր էլ անցկացրինք մի տան մեջ, ուր կանայք նոր ստանալով իրենց ամուսինների մահվան լուրը ամբողջ գիշեր ողբացին: Ոստիկանն ասաց. «Աղմուկը կխանգարի ձեզ, գնամ արգելեմ»: Լավ էր կարողացանք նրան հետ պահել: Փորձեցինք խոսել դրժբախտների հետ, բայց նրանք իրենցից դուրս էին եկել: «Թագավորը չպետք է նման բաներ թույլ տար: Ձեր կայսրը կարող է օգնել, ինչո՞ւ չի անում» և այլն: Մեկ էլ վախենալով մահից ասում էին. «Վերցրեք մեզնից ամեն ինչ, անգամ մեր շապիկը, միայն թողեք ապրենք»: Անընդհատ լսում էինք նույն խոսքերը, բայց ոչ օգնել կարող էինք, ոչ փրկել, թերևս միայն սփոփել նրանց, որ հաղթահարեն մահվան սարսափը: Հունիսի 28-ին հասանք Սվազ, ուր թույլատրեցին մեզ մնալ ամերիկացիների մոտ, այն էլ 2 օր: Սվազի բանտում 1200 տղամարդ կար, հետո իմացանք,

որ ոչ միայն նրանք, այլև Սվազի ողջ հայ բնակչությունը տեղահանվել կամ սպանվել է: Կեսարիայում ուզում էին ներկալել մեզ, սակայն ամերիկացի միսիոներներին հաջողվեց մեզ իրենց մոտ տանելու թույլտվություն ստանալ: Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության միջնորդության շնորհիվ մեզ իրավունք տրվեց շարունակել ճանապարհը: Այստեղ, ինչպես նաև Սվազում տեղի ունեցած իրադարձությունների մասին պատմեցին ամերիկացիները, իսկ ես ուզում եմ գևերեկցի աղջիկների մասին պատմել: Տղամարդկանց աքսորելուց հետո քշում են նաև կանանց: Նախօրոք ընտրելով 30 երիտասարդ գեղեցիկ կին և աղջիկ ասում են նրանց. «Կամ պետք է մուսուլմանություն ընդունեք, կամ մեռնեք»: «Մենք նախընտրում ենք մահը»,- հնչում է խիզախ պատասխանը: Այդ մասին հեռագրում են Սվազի նահանգապետին: Նա հրամայում է , որ քաջակորով այդ արարածներին, որոնցից շատերը կրթություն էին ստացել ամերիկյան դպրոցներում, բաժանել մուսուլմաններին:

Ռուսական սահմանից մինչև Սվազ և այնուհետև արևմուտք ընկած տարածքները գրեթե «մաքրված էին» հայերից, միայն տխուր մի սփոփանք, որ Թուրքիան ոչնչացնելով իր բնակչության լավագույն մասը կործանում էր նաև ինքն իրեն:

Թուրքերն իրենք սպասում էին այն օրվան, երբ օտար մի տերություն երկրի իշխանությունն իր ձեռքը կվերցնի հաստատելով արդարություն: Իսկ կատարված ոճրին թուրք ժողովուրդը, համենայն դեպս նրա կրթված մասը, հավանություն չէր տալիս»:

Մեզերեհի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) մեր հաստատությունն աքսորականների քարավանների համար ծառայում էր որպես միջանկյալ կայան: Քույր Քլարա Պֆայֆերը, որն աշխատում էր տղաների որբանոցում, պատմում է, թե մեր քույրերն ու եղբայրները ինչ վերապրեցին այդ օրերին:

«1915 թ. հունիսի 24-ին, երեկոյան ժողովից հետո սովորության համաձայն մենք մերոնցով հավաքվեցինք նշելու Սուրբ ընթրիքը: Ի՜նչ հանդիսավոր հավաք էր: Այդ

ժամանակ ոչ մեկը չէր կարող մտածել, որ սա վերջինն է լինելու: Երկու օր անց, շաբաթ, հունիսի 26-ին հայտնում են, որ հաջորդ շաբաթվա ընթացքում հայ բնակչությունը թողնելու է քաղաքը: Մեկ օր անց, կիրակի, հունիսի 27-ին մեր հաստատությունում կազմակերպեցինք վերջին հավաքը: Լացն ու հառաչանքը բռնել էր ամենուր:

Նախորդ օրերին մեր մոտով խում-խումբ եկել և անցել էին Էրզրումի գավառից աքսորված հայերը, որոնք անասելի վատ վիճակում էին: Չկային տղամարդիկ և չափահաս տղաներ: Երբ կանանց հարցնում էինք, թե ո՞ւր են ձեր տղամարդիկ, նրանք պատասխանում էին. «Սպանված են»: Հիմա պատկերացրեք նրանց սարսափը, ովքեր նոր պետք է տեղահանվեին: Շատերը փորձում էին գոտեպնդվել աղոթքով և Աստծու խոսքով՝ հաղթահարելու համար սոսկալի ճանապարհը: Այդ օրերին մենք աղոթքի այնպիսի ժամեր անցկացրինք, որ երբևիցե չէինք ունեցել: Ամեն օր ժամը 8-ին արդեն մեր հավաքասրահը լիքն էր: Դրանք սրբագործված օրեր էին, և շատերը հանդիպեցին իրենց Աստծուն: Մենք գերմանացի քույրերս, ինչպես նաև հայ քրիստոնյաներից շատերը, տեսնելով ամբոխի խոնարհվելը Աստծու առաջ, լցվում էինք հույսով, որ Տերը, տեսնելով դա, կմեղմացնի տառապանքը: Սակայն հաջորդ օրը տեսանք, որ 2 օրվա ընթացքում մեր քաղաքից 1800 ընտանիք, թողնելով տուն ու տեղ և այն ամենը, ինչ թանկ է իրենց, պանդուխտի ցուպը ձեռքն առած գնացին դեպի մութ ու անհայտ հեռուներ: Ինչպես հայտնի էր, նրանց տանելու էին Ուրֆայի գավառ: Մեզերեհը կարծես մեռած լիներ, շուկայում փակ էին խանութները, իսկ մեր հավաքասրահը հաջորդ կիրակի արդեն դատարկ էր:

Շուտով տարբեր լուրեր ու շշուկներ սկսեցին պտտվել: Մալոթիկ չհասած՝ ճանապարհին աքսորական ընտանիքներից ընտրում են երիտասարդ, գեղեցիկ կանանց և աղջիկներին, ետ են ուղարկում, որ համալրեն թուրք կանանց շարքերը՝ դրանով իսկ պահպանելով նրանց կյանքը: Մնացածին, բացառությամբ մի քանի տղամարդու, որոնց ընտանիքներից առանձնացրել էին Իզոլիում, տարել էին Մալաթիա: Այնտեղ ևս ընտանիքներից առանձնացրել էին

ամուսիններին և չափահաս որդիներին ու բանտ նետել: Ողբացող կանանց և երեխաներին տուն էին ուղարկել հավատացնելով, որ տղամարդկանց այլ ճանապարհով են ուղարկելու, և որ ճանապարհի վերջնակետում նրանք կրկին հանդիպելու են միմյանց: Սակայն այն քիչ թվով կանայք, որոնք հասան իրենց վերջնական բնակության վայրը, որևէ լուր չստացան իրենց ամուսիններից: Մեզերեհում մենք իմացանք, որ նրանց բոլորին սպանել են Մալաթիայի մոտ:

Հունիսի 6-ին Քղիից բռնագաղթվածների մի մեծ քարավան աննկարագրելի վիճակում հասավ մեր կողմերը: Պետք էր անձամբ տեսնել նրանց թշվառ վիճակը հասկանալու համար տառապանքի մեծությունը: Նրանք ժամանակավորապես տեղավորվեցին արտաքսված հայերի տներում: Մեծ էր մահացությունը հիվանդություններից: Ամեն առավոտ դիակառքերն անցնում էին տնից տուն, հավաքում դիակներն ու տանում: Հաճախ նաև աքսորյալների ամբողջ խումբը տանում էին ուղիղ գերեզմանատուն: Նրանք օր ու գիշեր անց էին կացնում գերեզմանոցում, մինչև որ մահը փրկարար բարեկամի պես վերջ էր տալիս տառապանքներին:

Կառավարությունն այդ դժնդակ շաբաթների ու ամիսների ընթացքում հազվադեպ էր օգնության ձեռք մեկնել: Այսպես օրինակ, հիմնեց որբանոցներ: Դրանցից մեկը գտնվում էր մեզնից ոչ հեռու: Խեղճ երեխաներն այնտեղ ապրում էին աննկարագրելի աղտոտության և աղքատության մեջ, օր ու գիշեր ճչում էին և այդպես մահանում: Մենք որբանոցի քույրերս, հաճախ նրանց համար ապուր էինք եփում: Երբ տանում էինք ապուրը, նրանք սկսում էին ավելի ուժգին ճչալ: Այնքան սաստիկ էր քաղցը, որ ճաշը միանգամից էին ուզում ուտել: Մի առավոտ երեխաներին տարել էին, թե ուր չիմացանք: Ավելի ուշ նրանցից մի քանիսին հանդիպեցինք նմանատիպ մի տանը: Պատմեցին, որ մյուսներին ջուրն են նետել: Ես չեմ կարող դա հաստատել, քանի որ անձամբ չեմ տեսել: Հավատում եմ միայն այն ամենին, ինչ տեսել եմ:

Սեպտեմբերի սկիզբն էր: Առավոտ վաղ հավաքեցին այն բոլոր արհեստավորներին, որոնք պատերազմի սկզբից ևեթ աշխատում էին կառավարության համար և ազատված էին աքսորից: Նրանց քնից հանել ու բանտ էին տարել, մի քանի օր փակել այնտեղ, այնուհետև, ինչպես իրենց հայրենակիցներին, քշել քաղաքից և ճանապարհին սպանել: Նրանց բոլորին մորթեցին, ինչպես ոչխարներին սպանդանոցում, որովհետև զենք չունեին ինքնապաշտպանության համար:

Մեզերեհում մարդ չի մնացել, թերևս մի քանի արհեստավոր, որոնք դեռ պետք են կառավարությանը: Նրանց մեծ մասն էլ մահմեդականություն է ընդունել: Այնուամենայնիվ հետապնդումներն ու որոնումները վերջ չունեն: Կան մի քանի խեղճ ու կրևսկ կանայք, մի քանիսն էլ հետ են մնացել քարավաններից: Նրանք ապրում են վատթար վիճակում: Ահա այս է իրավիճակը: Որքան ցավալի է, երբ տեսնում ես այդ դժբախտներին մինչև ատամները զինված զինվորների առաջ դողալիս: Ինչքան հիշում եմ, նոյեմբերի 4-ը սարսափների վերջին օրն էր»:

Բաղդադի երկաթուղու ինժեներ պարոն Էռնստ Փիփերը Հալեպից հաղորդում է հարավում՝ քարավանների աքսորավայրում, իր տեսածի մասին:

«Ասացին, որ հայերին բերել են բնակեցնելու Բաղդադի երկաթուղուց 25-30 կմ հեռավորությամբ մի տարածքում: Սակայն աքսորյալները միայն կանայք ու երեխաներ էին: Տղամարդիկ, ծերերին չհաշված, պատերազմ էին գնացել: Այնպես որ այստեղ ընտանիք չկար այլևս, որովհետև հող մշակող աշխատուժը չկար, չկար փող և այլ շատ բաներ: Գերմանացիներից մեկը հանդիպում է քրիստոնյա զինվորներից իր մի ծանոթին, որը Երուսաղեմից արձակուրդ էր եկել: Մարդը թափառում էր Եփրատի ափերով փնտրելով կնոջն ու երեխաներին, որոնց իբր այնտեղ էին ուղարկել: Նման մարդկանց հաճախ կարելի էր տեսնել նաև Հալեպում: Նրանք չէին կորցնում հույսը որևէ տեղեկություն իմանալու իրենց հարազատների

բնակության վայրի մասին: Հաճախ պատահում էր նաև, որ ընտանիքի բացակա անդամը վերադառնալով այլևս չէր գտնում իր մերձավորներին, քանի որ նրանց արդեն արտաքսել էին:

Հալեպը և Ուրֆան աքսորականների հավաքակայաններն էին: Հունիսին և հուլիսին Հալեպում կար մոտ 5000 մարդ, իսկ ամբողջ ժամանակվա ընթացքում՝ ապրիլից մինչև մայիս, այստեղով անցել էր 50.000 մարդ: Փոքր խմբերի էվակուացման ժամանակ, որպես կանոն, եղած տղամարդկանց գիշերն առանձնացնում էին կանանցից, որպեսզի զինվորները վերջիններիս ավելի ապահով ենթարկեն բռնարարքների: Երիտասարդ աղջիկներին, առանց բացառության, տանում էին կամ զինվորները, կամ նրանց արաբ հանցակիցները: Մի մարդ հուսահատ վիճակում խնդրում էր ինձ վերցնել իր 15-ամյա դստերը, քանի որ նա այլևս ի վիճակի չէր պաշտպանել նրան հետապնդումից: Բաղդադի երկաթուղու երեք ինժեներ աշխատում էին Էբիադի հովտում (Եփրատից 100 կմ արևելք): Երեկոյան կայմակամն այցելում է նրանց և ամեն մեկին մի երիտասարդ հայ աղջիկ առաջարկում գիշերվա համար:

Ճանապարհին ծննդաբերող կանայք նույնպես անհապաղ պետք է շարունակեին ճանապարհը: Այնթապի մոտ մի կին գիշերը երկվորյակ զավակ ունեցավ: Առավոտյան նա կրկին ճանապարհ ընկավ: Շատ չանցած երեխաներին թողեց մի թփի տակ, քիչ անց ինքն էլ տապալվեց: Մեկ ուրիշը ծննդաբերեց հենց ընթացքի ժամանակ, նա ոտքի կանգնեց շարունակելու ճանապարհը, բայց շուտով անշնչացած ընկավ: Նման բազմաթիվ դեպքեր են տեղի ունեցել Մարաշից Հալեպ տանող ճանապարհին:

Շեր գյուղի բնակիչներին թույլ տվեցին իրենց հետ վերցնել տան ունեցվածքը: Ճանապարհին հանկարծ հրաման է գալիս, որ դուրս գան խճուղուց և գնան լեռներով: Նրանք ճարահատ սայլերը, եզներն ու իրերը թողնում են ճանապարհի վրա ու ոտքով քայլում դեպի լեռները: Անշուշտ, տարվա շոգ եղանակին ճանապարհ գնալը

նույնպես նպաստում էր կանանց և երեխաների մահացությանը: Իսկ Շերի բնակիչները դեռ իրենց գյուղը չթողած մոլլան արդեն քրիստոնեական եկեղեցու տանիքից «հավատացյալներին» աղոթքի էր կանչում:

Կառավարությունը խոստացել էր բռնագաղթածների տունը և ունեցվածքը գնահատել, այնուհետև վճարելու պայմանով: Սակայն մինչ օրս այդ ուղղությամբ որևէ բան չի արվել, և ընդհանրապես ոչ ոք չգիտե, թե այդ ընտանիքները վերջիվերջո ինչ-որ տեղ կանգ առնելո՞ւ են, այնպես որ փոխհատուցման մասին խոսելն ավելորդ է: Կառավարությունն ասել էր նաև, որ ճանապարհի կարիքների համար փող է վճարելու: Բումբուշ գյուղում, որ գտնվում է Հալեպից 1.5 օրվա հեռավորության վրա, աքսորականներին վճարել էին սննդի փող 30 անձին 30 օրվա համար 26 ղուռուշ, այնպես որ մեկ անձին մեկ ղուռուշ էլ չէր հասնում (ամիսը 18 պֆենիգ)»:

Ոչ բոլոր մահմեդականներն էին, որ դրվատում էին այս իրադարձությունները: Մահմեդական հայտնի մի շեյխ մի անգամ խոսքի մեջ ասաց. «Երբ ինձ մոտ խոսում են հայերի հալածանքների մասին, ամաչում եմ, որ թուրք եմ»: Մի կայմակամ (գավառապետ) վալիից (նահանգապետ) սուրհանդակի միջոցով հայերին կոտորելու բանավոր հրաման է ստանում: Նա մերժում է՝ ի նկատի ունենալով այն պարագան, որ հրամանը գրավոր պետք է լինի: Նրան հեռացնում են պաշտոնից, կանչում են Դ., սակայն ճանապարհին ուղեկցող զինվորները սպանում են նրան: Մարդինի մութասերիֆին (ոստիկանապետ) նույնպես հեռացրին իր պաշտոնից:

Թուրքական կառավարությունը, չկարողանալով այլևս գաղտնի պահել զանգվածային տեղահանման փաստը, փորձում էր արդարանալ մեղադրելով հայերին ըմբոստության մեջ: Այնինչ ըմբոստության մեղադրանքով անգամ չի կարելի արդարացնել այն ահավոր բռնությունները, որ կիրառվեցին կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ: Հայերն այնքան հեռու էին ըմբոստությունից, որ մեծ մասամբ առանց դիմադրության կոտորվեցին: Իսկ հայերի

հեղափոխական գործունեության մասին թուրքական պաշտոնական տվյալները բացառապես վերաբերում էին Վանի և Զեյթունի դեպքերին, որոնք այնքան էլ զարմանալի չէին: Զարմանալին այն էր, որ հայերն իրենց տեղահանման, ավելի ճիշտ է ասել կոտորածի դեմ այդքան քիչ վայրերում զինված դիմադրություն ցույց տվեցին: Այդ վայրերն են Շապին-Գարահիսարը, Ուրֆան, Մուշը, Սասունը և Մուսա լեռը Կիլիկիայում, որտեղ հայերը դիմակայեցին այնքան ժամանակ, մինչև ֆրանսիական ռազմանավերը փրկեցին նրանց: Սա միակ փաստն է այն պնդման օգտին, որ հայերը կապ են ունեցել թշնամական ռազմանավերի հետ: Մնացած վայրերում դիմադրությունն արդյունք չի տվել: Մուշում մեր գթության քույրերից Ալմա Յոհանսոնն ահա թե ինչ է վերապրել, նա հաղորդում է.

«Մայիսին ջարդեր կազմակերպվեցին Բիթլիսում, իսկ Մուշում ամեն ինչ պատրաստ էր դրան: Այդ ընթացքում ռուսները հասան Լիզ (Մուշից 16 ժամ հեռավորության վրա), և ուշադրությունը շեղվեց այդ կողմը: Սակայն օր-օրի իրավիճակը տագնապալի էր դառնում: Պետական պաշտոն զբաղեցնող հայերը հեռացվում էին և մեջտեղից աննկատ վերացվում: Ոչնչացվում էին նաև ռազմաճակատ պարեն փոխադրող բեռնակիրները:

Էրզրումի ամբողջ շրջանը մինչև Վանա լիճ, որը բավականին հեռու էր ռազմաճակատից, լցված էր զինվորներով: Այնտեղից Մուշ էին գալիս մի կերպ ճողոպրած կանայք ու երեխաներ անասելի թշվառ վիճակում: Հունիսի կեսին ոստիկանապետը մեզ իր մոտ կանչեց ու ասաց, որ քույր Բոդիլը և ես առաջիկա օրերին պետք է մեկնենք Մամուրեթ-ուլ-Ազիզ: Գերմանական և թուրքական կառավարությունները որոշել են, որ բոլոր օտարերկրացիներն այդտեղ են հավաքվելու: Եթե մենք կամովին չգնանք, ճչաց նա ի պատասխան տեղում մնալու մեր խնդրանքին, մեզ ուժով կուղարկի, որի իրավունքն ունի: Մենք կարող ենք մեր աշխատակիցներին մեզ հետ տանել: Մեր այն հարցին,

թե նրանց վտանգ չի սպառնա, նա պատասխանեց. «Դուք ապահով եք, բայց եթե հայ տեսնենք, գլուխը կկտրենք»: Մյուս կողմից էլ մեզ խորհուրդ էին տալիս չգնալ, որովհետև ճանապարհին մեզ վատ անակնկալ էր սպասում:

Հունիսին Մուշ եկան ու գնացին զինվորական հոծ ջոկատներ, իսկ սպաները շուկայում զայրացած խոսում էին այն մասին, որ Մուշում հայերը դեռ ապրում են:

Հունիսի 10-ի երեկոյան հնչեց հրացանային սաստիկ հրածգություն, որ տևեց մի քանի ժամ: Հաջորդ առավոտյան ամբողջ քաղաքը զինված էր, իսկ հայերը չէին համարձակվում դուրս գալ տներից: Գնացի ոստիկանապետի մոտ և խնդրեցի նրան ապահովել մեր տների անվտանգությունը: Նա ասաց, որ ներկա դրությամբ մեզ համար ոչինչ անել չի կարող: Մի շաբաթ ամբողջ քաղաքը պաշարված էր: Քաղաքի շուրջը տեղակայված էր 11 թնդանոթ, 20.000 զինվոր էլ եկել էր եղածներին օգնության: Ոստիկանապետն առաջարկեց մեզ տեղափոխվել թուրքական թաղամաս: Սակայն ո՛չ մարդիկ հատկացրեց, ո՛չ էլ եզներ ու սայլեր տվեց, և մեր փոխադրումը ձախողվեց, մանավանդ որ քույր Բոդիլը տիֆով ծանր հիվանդ պառկած էր: Կեսօրին ոստիկանապետը քաղաքի հարուստ հայերին իր մոտ էր կանչել ու ասել, որ հայ բանկչությունը երեք օրվա ընթացքում պետք է հեռանա Մուշից: Նրանց ամբողջ ունեցվածքը պատկանում է պետությանը: Հարուստները, որ քիչ թե շատ փող ունեին, համաձայնվեցին, իսկ մյուսները որոշեցին իրենց ընտանիքների հետ մեռնել տներում: Նրանք վճռել էին իրենց կյանքը հնարավորին չափ թանկ վաճառել զինվորներին: Եվ մի քանի ժամ անց, խախտելով երեք օրվա ժամկետը, զինվորներն ամենուր խուժեցին տները: Հարևան տներից շատ կանայք ու աղջիկներ էին պատսպարվել մեզ մոտ: Հունիսի 12-ին առավոտ վաղ սկսվեց քաղաքի ռմբակոծումը թնդանոթներից, այնուհետև հայերի որսը: Մուշի թուրք բնակչությանը զինել և բաժանել էին զինվորների վրա, նրանք լավ գիտեին քաղաքի բոլոր ծակուծուկերը: Քաղաքը բոլոր կողմերից

կրակ տվեցին: Փախստականներ որսալու համար ջարդեցին նաև մեր որբանոցի դարպասը: Առևանգեցին գյուղական ուսուցիչներին, որոնք նախորդ օրն էին եկել և առավոտյան հանկարծահաս կրակոցների պատճառով չէին կարողացել վերադառնալ: Հաջորդ առավոտ աքսորական կանանց առաջին քարավանն անցավ մեր տան մոտով, արյունլվա ու ողբալի վիճակում: Ցնցող տեսարան էր: Երրորդ օրը սպաների ու զինվորների մի խումբ խուժեց մեզ մոտ պահանջելով, որ իրենց հանձնենք մեր տներում ապաստանած փախստականներին: Նրանց ապահով կը-ճամփենք Ուրֆա, հավաստիացնում էին նրանք: Գնացի ոստիկանապետի մոտ: Նա, որպես գերագույն հրամանատար, թնդանոթների մոտ էր: Ոստիկանապետը չանսաց իմ աղաչանք-պաղատանքին: Իսկ մեր տանը սոսկալի դրություն էր. թուրքերն իրենց շատ գռեհիկ էին պահում, հատկապես Ասաֆ բեյ անունով մի բժիշկ: Եվ որովհետև պատվով էին երդվել կանանց ապահով Ուրֆա հասցնել, թողեցի, որ գնան: Երկու հայ հացթուխ, որոնց կյանքը պահպանվում էր, քանի որ պետք էին իշխանությանը, և մեր տունը հսկող երկու ոստիկան պատմեցին, որ կանանց և երեխաներին հասցնելով մոտակա գյուղը հարյուրներով խցկել էին տները և կենդանի այրել: Մեզ այցելած բարձրաստիճան սպաները ևս հպարտությամբ էին խոսում այդ մասին: Սպասարկող մեր անձնակազմում մնացին երեք աղջիկ և մեկ տղա: Այսպես, ուրեմն, բացի այն կանանցից ու աղջիկներից, որոնց թուրքերն իրենց տներն էին տարել, Մշո գավառի հայ բնակչությունից ոչ ոք չէր պրծել:

Մեր տներն այնպես էին գնդակոծված, որ ամենուրեք պատերի մեջ ճեղքեր էին բացվել: Անտանելի էր նաև շրջակայքում սփռված բազմաթիվ հոշոտված դիակների և տներում այրվածների հոտը: Այս ու այնտեղ շները դիակներ էին քաշքշում: Այնինչ Մուշում ապրում էր մոտ 20.000 հայ, իսկ Մշո դաշտում կար 300 գերազանցապես հայերով բնակեցված գյուղ: Երեք օր անց մեկնեցինք Մամուրեթ-ուլ-Ազիզ, ճանապարհին ամեն ինչ այրված էր»:

4. ԻՆՉ ՎԵՐԱՊՐԵՑԻՆ ԱՔՍՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատերազմն ու աքսորը Վանում և Մուշում կասեցրին միսիոներական աշխատանքը: Աստծու օգնությամբ մեզ փաստորեն հաջողվեց կոտորածից փրկել Մեզերեհի, Մարաշի և Հարունիեի մեր երեք գլխավոր կայանների հաստատություններում գտնվող երեխաներին ու աշխատողներին: Մեր հիմնարկությունները օազիսներ էին անապատի մեջ, տապան՝ մոլեգնող ջրհեղեղում: Առանձնապես մեծացավ և կարևորվեց 22 տարի առաջ մեզ Արևելք տանող կանչի նշանակությունը: Որովհետև խոսքն այստեղ միայն մարդասիրական բարեգործության մասին չէ: Թուրքական կառավարությունը հավատարիմ իր գործելակերպին՝ ամենուրեք, ուր հնարավոր էր, քրիստոնեական եկեղեցիները վերածում էր մահմեդական մզկիթների: Մեր՝ գերմանացիներիս աշխատանքն այս պայմաններում առավել կարևոր էր: Մեր գերմանացի միսիոներներից պարոն քարոզիչ Քրիստոֆելը Մալաթիայից գրում էր. «Սև ծովից մինչև Սիրիա, բացի գերմանական հաստատություններից, լռել է ավետարանական քարոզը»:

Մեր հաստատությունների յուրաքանչյուր որբ երեխայի մասին մտովի կարելի է ասել. «Եթե այս տղան կամ աղջիկն այստեղ չլիներ, ապա կա՛մ մեռած էր, կամ մահմեդական որևէ ընտանիքում էր և, որպես մահմեդական, արդեն ատելությամբ լցված քրիստոնյաների հանդեպ»: Այս երեխաները քրիստոնեության ապագա սուրբ սերմերն են, որոնք հավաքագրվել են Արևելքի փոթորկածեծ անկյուններից: Հեշտ չի եղել կանխել նրանց սոսկալի ճակատագիրը: Մեր որբանոցների ղեկավարները շատ ջանք ու ճիգ թափեցին՝ դիմակայելու իշխանությունների ավերող ուժի ամուր պատնեշը: Աստված օգնական եղավ: Գերմանիայի կառավարության ճնշման շնորհիվ կարողացանք հասնել այն բանին, որ Գերմանական օգնության միությունում աշխատող բոլոր հայ քրիստոնյաները տղամարդիկ, կանայք և երեխաներ, կառավարության ցուցակ-

ներում գրանցվեցին որպես գերմանական առաքելության պատկանելություն և խուսափեցին աքսորի զարհուրելի պատժից:

ա) Մեզերեհ

Մեզերեհում կառավարության խիստ հրամանով որոշ ժամանակով դադարեցվել էր նոր որբերի և փախստականների ընդունումը որբանոցներ: Միայն այդ պայմանով էին խոստանում ձեռք չտալ որբանոցների բնակչությանը, որ ցուցակագրված և հանձնված էր կառավարությանը: Առաջին անգամ էր, որ որբանոցներում մահվան դեպքերն այլևս չէին տխրեցնում, քանի որ հնարավորություն էր ստեղծվում գաղտնի մահացածի տեղն արագ համալրել նոր մարդով, որով վերջինս փրկվում էր դրսի անասելի տառապանքներից:

Մեզերեհի Փնիլ կոչվող աղջիկների որբանոցի վարիչ քույր Քաթարինե Մաղերի նամակը հնարավորություն է տալիս մեզ վերապրել այն տագնապները, որոնք ծագել էին որբանոցի վրա թուրքական կառավարության հարձակման վտանգից, որը կանխվեց Աստծու օգնությամբ:

«Տիրոջ հրաշքով է, որ մենք դեռ այստեղ ենք, սակայն ամեն օր վտանգը մեր կողքին է: Մեր տան դռների առաջ զինվորներ էին կանգնած, մենք չէինք կարող դուրս գալ, և ոչ ոք իրավունք չուներ ներս մտնելու: Նրբանցքներում դիակները թափված էին աղտեղության մեջ: Փողոցներում երբեմն-երբեմն երևացող սայլերը հավաքում էին դրանք և տանում: Սա ամիսներ առաջ էր, իսկ ինչ է կատարվում այսօր: Յոթ անգամ փորձեցին խլել մեր տունը, իսկ հունվարին պարզվեց, որ նրանք մեր բոլոր տներն են ուզում, մասնավորապես Փնիլը և Էլիմը, այն էլ բռնի ուժով: Պատկերացրեք մեր վիճակը. ցուրտ ձմեռ և այդքան երեխաներ, ո՞ւր գնանք: Անընդհատ աղոթում էինք, ես անձամբ երեք օր ո՛չ կերա, ոչ խմեցի, այլ ամբողջ ժամանակն անցկացրի աղոթքով: Առաջվա պես կատարելով իմ հոգևոր աշխատանքը՝ մեկուսացա, ինչքան հնարավոր

էր՝ անդադար աղաչելով Տիրոջը: Անցավ մի քանի օր, երբեմն-երբեմն լուրեր էին պտտվում, որ ուզում են ցրել երեխաներին, որը մեզ համար առավել ցավալի է: Հունվարի 17-ին եկան մի քանի հոգով և լպիրշորեն ու կոպտությամբ պահանջեցին ամբողջ տունը նայել:

Ամսի 23-ին մի խումբ էլ եկավ և հայտնեց՝ եթե տունը չազատենք, վաղը կգան ու դուրս կհանեն մեզ: Հաջորդ առավոտ զինվորները պաշարեցին շենքը, նրանք ծեծում էին դռները, բայց ոչ ոք չէր բացում: Երեխաները ճչում էին, և նրանց ձայնը բռնել էր ամբողջ տունը: Ի վերջո ես աստիճաններից ցած իջա ու բացեցի դուռը: Զինվորները ներս խուժեցին: Անմիջապես բոլոր աստիճաններին պահակներ կանգնեցին, այնպես որ ես չկարողացա վերադառնալ սենյակս: Իսկույն մարդ ուղարկեցին պարոն էյմանի ետևից, որն էլ անմիջապես եկավ: Ես կապիտանին ասացի. «Երեխաներն ու ես դուրս չենք գա»: Նա պատասխանեց, որ ես կարող եմ մնալ, իսկ երեխաները պետք է ազատեն շենքը: Ես ասացի. «Ոչ, երեխաներին ես չեմ թողնի, ավելի շուտ այստեղ կմեռնեմ, քան կլքեմ նրանց»: Տհաճ օր էր, փչում էր հյուսիսային սառը քամին: Բայց հանկարծ Տիրոջ կամքով սիրտս խաղաղվեց, ուժեղացավ և հանդարտվեց: Թուրքերը մոտ մեկ ժամ մնացին մեզ մոտ, կապիտանը կատաղած էր: Ի վերջո գնացին՝ ասելով, որ կգան վաղը և տունը կվերցնեն: Կեսօրվա ժամը 12-ին պարոն էյմանը լուր ուղարկեց, որ տեղ բացենք էլիմի համար: Էլիմի և Մարանաթայի երեխաներին մեզ մոտ էին բերելու, քանի որ էլիմի տունը հանձնվելու էր: Թուրքերը նույն բանն արել էին այնտեղ, զինվորներով լցրել էին որբանոցը: Այժմ արդեն բոլորս միասին էինք. հնարավորին չափ սեղմվեցինք և տեղավորվեցինք: Այդ օրը ուրախությամբ և շնորհակալությամբ լի սրտերով փառք տվեցինք մեր Տիրոջը, որ այս անգամ էլ ազատվեցինք: Պարոն էյմանը պահանջել էր, որ էլիմի որբերը մնան մեզ մոտ, մինչև կառավարությունը նոր շենքեր հատկացնի: Մեզ մոտ խառը վիճակ էր, անհնար է նկարագրել, թե տունն ինչ աստիճան լեփլեցուն էր: Սակայն ոչ մի երեխայի բերանից առարկություն չհնչեց, նրանք շնորհակալ էին, որ որբա-

նոցում են: Վերջապես, կառավարությունը չուզենալով՝ մի քանի շենք հատկացրեց, այնպես որ էլիմի երեխաների մի մասը տեղափոխվեց: Նրանք տեղավորվեցին երեք տներում: 32 երեխա մնաց մեզ մոտ: Այդպես էլ կմնան, եթե թուրքերը նորից չգան ու չփորձեն տունը բռնի խլել»:

բ) Հարունիե

Այդ նույն ժամանակներին է վերաբերում նաև Հարունիեի մեր որբանոցի վարիչ պարոն Ֆոն Դոբելերի 1917 թ. հուլիսի 17-ի գրած նամակը Ադանայից:

«Մի քանի օր է, ինչ Ադանայում եմ: Իմ այստեղ գալու պատճառը նահանգի իշխանություններին ուղղված բողոքն է այն մասին, որ իմ ուսուցիչներին ևս բնակչության հետ աքսորում են: Ադանայից արդեն աքսորել են 13-15 հազար բնակիչ: Մինչև Հարունիե վերադառնամ, այնտեղ այլևս հայ մնացած չի լինի: Մարաշի գավառի գյուղերը նույնպես դատարկված են, այս օրերին դատարկում են նաև Մարաշը: Գյուղերում բերքահավաքի ժամանակն է: Մարդիկ, որ ջանասիրաբար մշակել են իրենց հողակտորները, հարկադրաբար թողեցին ամեն ինչ ու գնացին: Այգիները խնամված են, պտղատու ծառերը բեռնավորված հասուն մրգերով, բայց ոչ իրենց տերերի համար: Հայերը ստիպված եղան թողնել իրենց տուն-տեղն ու անասունը, քանի որ հետներն իրավունք ունեն վերցնել միայն ամենաանհրաժեշտ բաները: Խեղճ մարդիկ: Աքսորյալների մեջ կային բազմաթիվ հղի կանայք, կրծքի երեխաներ, հիվանդներ, նույնիսկ կույրեր, հաշմանդամներ: Նրանք չէին հասցրել նույնիսկ ճանապարհի համար համապատասխան հագուստ, հատկապես կոշիկ հայթայթել: Երեխաների մեծ մասը ոտաբոբիկ քայլում էր տաք, քարքարոտ ճանապարհով, և շատ չանցած նրանց փոքրիկ ոտքերը վառվում կամ վիրավորվում էին:

Կհարցնեք, թե ինչի՞ համար են թուրքական կառավարության ձեռնարկած այս միջոցառումները: Պատասխանը՝ երկրի անվտանգության համար ռազմական գործո-

ղություններն են: Պնդում են՝ եթե անգլիացիները հարձակվեն, հայերը նրանց կողմը կանցնեն և մեծ վտանգ կներկայացնեն: Ցավոք պիտի ասեմ, որ առանձին դեպքեր հիմք են հանդիսացել տվյալ ենթադրության համար: Թեկուզ և այդպես, բայց այն, ինչ այստեղ կատարվում է, բարբարոսություն է, որ հավասարազոր է հայ ժողովրդի բնաջնջման: Դեսպանին պաշտոնական մանրամասն գրություն եմ հղել և խնդրել նրան օգնել մեղմացնելու դաժանությունը:

Բոլորովին հաշվի չեն առնում, թե ինչ արժեքներ են ոչնչացվում քաղաքներում: Շատ ձեռնարկություններ, նաև արտասահմանյան, կանգնած են, որովհետև չկա աշխատուժ, իսկ դա որևէ այլ բանով չես կարող փոխարինել: Առևտրի մասին խոսք լինել չի կարող: Խանութները փակ են կամ լքված: Այս ամենը բաժին է հասնելու նրանց, ովքեր գաղափար անգամ չունեն այդ մասին: Թուրքերն այս անգամ ավելի հարստացան, քան նախկին կոտորածների ժամանակ: Բարիքն առանց ջանք թափելու լցվում է նրանց գիրկը:

Ինչ վերաբերում է մեր երեխաներին, ապա հուսով եմ, որ մեզ կհաջողվի ետ պահել նրանց այն ճակատագրից, որ իրենց նմաններին երկրի ճանապարհներով քշեց տարավ դեպի անհայտ ապագա: Երեխաներն այժմ լրիվ որբացան, քանի որ մինչ այս դեպքերը դեռ ինչ-որ հարազատներ ունեին: Նրանք կորցրին ամեն ինչ՝ և տուն, որտեղից եկել էին, և ունեցվածք, և այգիներ ու արտեր: Այդ ամենն արդեն թուրքերինն է: Աստված, որբերի և լքվածների Հայր, աջդ պահապան երեխաներին ու մեր տներին:»

Բ. Ֆ. Դոբելեր

Մամուրե, 1 օգոստոսի, 1915 թ.

«Կրկին Ադանա էի գնացել նահանգապետին հանդիպելու, քանի որ կառավարությունը որոշել է ազատել մեր տունը՝ հանելով երեխաներին, աշխատողներին և ուսու-

ցիչներին: Տունը վաղուց դատարկված կլիներ, եթե մենք բոլոր լծակներն անընդհատ գործի չդնեինք:

Գերմանիայում շարունակում է թուրքերի մասին լրիվ սխալ կարծիք ձևավորվել: Այնտեղ օրաթերթերն իրենց տեղեկություններով մոլորության մեջ են գցում մարդկանց, և նրանք կարծում են, թե թուրքերը ինչ-որ բանով կարող են օգտակար լինել: Սակայն իրականում դա շատ անընդունակ, սնապարծությամբ պաշարված ազգ է, որը երկիրը տանում է կործանման, և կգա ժամանակ, որ այն, որպես ավերակ, կանցնի եվրոպական պետություններից մեկին»:

Բ. Ֆ. Դոբելեր

Հարունիե, 3 հունիսի, 1918 թ.

«Ոչ վաղ անցյալում մեր ուսուցիչներին և աշխատողներին դարձյալ սպառնում էր աքսորի իրական վըտանգը: Ադանայից ու Մարաշից եկած լուրերը ևս վկայում էին վատթարագույնի մասին՝ արտաքսում և կոտորած: Այդ մասին մեզ հայտնեցին տեղական կառավարության պաշտոնյաները ասելով, որ ունեն իշխանության վերադաս մարմինների հեռագիրը: Իսկ հրամանը ստանալուն պես արագ գործի են անցնելու, քանի որ մարդկանց 5 րոպե է տրվելու բնակավայրը թողնելու համար: Մենք սկսեցինք անել այն ամենը, ինչ կարող էինք, նըրանց խանգարելու համար աղոթում էինք, փրկություն հայցում, որն այս անգամ էլ շատ չուշացավ ի զարմանս և՛ հալածվողների, և հալածողների, որոնք համոզված էին, որ ամեն ինչ նախապատրաստված է լավագույն ձևով, ու ձախողումը բացառված է»:

Բ. Ֆ. Դոբելեր

գ) Մարաշ

Աքսորի հետևանքով ստեղծված սոսկալի տառապանքների ամենաեռուն շրջանում մեր առաքելության աշխա-

տակիցները Մարաշում էին: Մարաշն արդեն մտնում էր Հալեպի նահանգի մեջ, և այդտեղով էին անցնում հյուսիսից կամ հյուսիս-արևմուտքից Հալեպ գնացող բռնագաղթվածների բոլոր քարավանները: Հալեպը և Ուրֆան դարձել էին անլուր տառապանքների ու թշվառության հավաքատեղի, ուր ծգվում էր տարաբախտ մարդկանց անվերջանալի հոսքը, որպեսզի այնտեղից էլ բազմամարդ քարավաններով քշվեն անապատ: Մարաշից քույր Փաուլա Շեֆերը և քույր Բեաթրիս Ռոները, որ երկար տարիներ շրջել էին երկրով մեկ մարմնին ու հոգուն օգնություն հասցնելու առաքելությամբ, ոչ միայն տեսան ավելի շատ տառապանք, քան եվրոպացի մեկ այլ ականատես, այլև կարողացան տառապյալներին փոքր-ինչ սփոփել: 9 սեպտեմբերի 1915 թ., գրում է քույր Բեաթրիս Ռոները:

«Մեր կողմերում տեղահանումը սկսվեց ապրիլին: Սկզբում դատարկեցին «հանցավոր» Զեյթունը, ապա Ֆուռնուսի անմեղ գյուղերը Ալաբաշը, Գեբենը, Կարագաշը, Կոսյահուզը, Շիվիլջին, Բանդուկը, այնուհետև ավելի մեծ բնակավայրերը Յարփուզը, Ալաբիստանը, Գյուկսունը, մնացին Ենիջեն, Կալեն և Ֆունդաջակը իրենց հարեվան գյուղերով: Վերջիններիս նկատմամբ փոքր-ինչ մարդկային վերաբերմունք ցուցաբերեցին 2-3 շաբաթ առաջ հայտնեցին տեղահանման մասին, որպեսզի բնակչությունը հասցնի նախապատրաստվել: Դեմրեկը վերջին գյուղն էր, որ դատարկվեց: Հաջիդերեի բնակիչներին, որոնց մի մասը սև ծաղկով հիվանդ էր, անհապաղ գյուղից հանեցին: Երկու օրվա դեգերումներից հետո հիվանդները գըրեթե անճանաչելիորեն խեղաթյուրված հասան Մարաշ: Վախենալով, որ քաղաքը կվարակվի, նրանց թողեցին դըրսում՝ քաղաքի մուտքի առջև, ճանապարհին, արևի տակ: Սակայն խեղճերը չհասցրին անգամ մեկ լրիվ օր հանգըստանալ, հաջորդ օրն իսկ դարձյալ ճանապարհ ընկան: Մինչ Ֆունդաջակը դատարկելը լուրեր էին շրջում, որ Զեյթունի և շրջակայքի հեղափոխականներն ու դասա-

լիքները հավաքվել են այնտեղ: Գյուղացիները հավատարիմ էին կառավարությանը, բայց և վախենում էին «ավազակների» սպառնալիքներից, որով նրանք սովորաբար իրենց կուսակցության կողմն էին քաշում հայրենակիցներին: Ֆունդաջակ են գալիս նաև Դերեքյոյի ու Քիշիֆլիի բնակիչները և 24 ժամ իսկական կռիվ մղում կայսերական բանակի գնդերի դեմ: Նույնիսկ Ադանայի նահանգապետն էր ժամանել: Օգոստոսի 6-ն էր, կիրակի, կեսօրից հետո գյուղը հանձնվեց: Սկսվեց սոսկալի ջարդը: Զինվորները ոչնչի առաջ կանգ չէին առնում: Ծայրամասերում այրվում էին տները, իսկ իրենք գյուղամիջում այս ու այն կողմ սլանալով, ոչնչացնում էին այն ամենը, ինչ պատահում էր ճանապարհին չխնայելով անգամ կանանց ու երեխաներին: Ձերբակալված 50 երիտասարդի գնդակահարեցին գյուղից ներքև, 40 հոգու բերեցին Մարաշի բանտը: Ջարդից սպրդած կանանց ու երեխաներին, որոնց մերկությունը ծածկում էր սոսկ ներքնազգեստը, այրող շոգին առանց գլխածածկերի և կոշիկների քշեցին աքսոր: Մեր որբանոցի նախկին սաներից մեկը պատմեց, թե ինչպես իր աչքի առաջ կտոր-կտոր են արել ամուսնուն, տալոջը մահացու վիրավորել, իսկ իրեն հինգ երեխաների հետ քշել անապատ: Փոքրիկ Մարիամը, որը 12 տարեկան էր, մոր սպանվելուց և հորը բանտ տանելուց հետո բռնում է փոքր եղբոր ձեռքը և գնում աքսոր: Մարաշ տարված Ֆունդաջակ գյուղի բնակիչների մի մասին կախեցին, մյուսներին գնդակահարեցին: Գնդակահարվողներին, ինչպես կարգն է, շարք չկանգնեցրին, այլ բոլորին լցրեցին մի տուն, և զինվորները սկսեցին կրակել մինչև արյան լիճ գոյացավ: Զվարճացող ամբոխը այդ սոսկալի տեսարանը դիտելուց հետո, անցնելով մեր հիվանդանոցի մոտով, գոռում էր կեցցե Գերմանիան: Ամենուրեք Գերմանիա, Գերմանիա, կարծես Գերմանիան է այս ոճրի նախաձեռնողը:

Անշուշտ զգուշացան նաև, որ Ֆունդաջակի դեպքը Մարաշի համար նախադեպ չհանդիսանա: Ադանայի նա-

հանգապետը, որպես Ջեմալ փաշայի հավատարմատար, իսկույն Մարաշ ժամանեց: Մի քանի օր անց, օգոստոսի 13-ի լույս 14-ի գիշերը, հավաքելով քրիստոնյաների առաջնորդներին, հայտնեցին, որ հաջորդ օրը, կեսօրից հետո ժամը երկուսին Մարաշում այլևս ոչ մի հայ չի լինելու, ում գտնեն, գնդակահարելու են: Կարճ ժամանակ անց հնչեց երկրորդ հրամանը, որ մինչև 15-ի երեկոյան հայերի հիմնական մասը պետք է թողած լինի քաղաքը: Խոսքը 26.000 մարդու մասին էր: Գրաստ ունեցողներ չկային: Թուրքերը լցվեցին քրիստոնյաների տները նրանց ունեցվածքը չնչին գնով առնելու, որպեսզի հայերը ճանապարհի համար միայն գրոշի արժողության ուտելիք ունենան իրենց հետ: Մինչև կեսօր Մարաշի բարեկեցիկ քրիստոնյաները վերածվեցին թափառական մուրացիկների: Այնուհետև Մարաշի ոստիկանապետի համառ ու անձնազոհ ջանքերի շնորհիվ չափազանց խիստ հրամանը մեղմացավ, և քաղաքի թաղամասերին թույլատրվեց մեկը մյուսի հետևից ճանապարհ ընկնել: Մեկ այլ հրամանով կաթոլիկներն ու բողոքականները մնալու իրավունք ստացան, իսկ լուսավորչականները պետք է գնային: Մեզ զարմացնում էր տարօրինակ այդ քաղաքականությունը. ժողովրդին պատժում էին դավանաբանական խտրականությամբ: Մարաշցիների շրջանում լուրեր էին պտտվում, որ Ավստրիան միջնորդել է կաթոլիկների, իսկ Գերմանիան՝ բողոքականների համար: Լուսավորչականների շրջանում տարվող մեր աշխատանքը, ինչպես ակնկալում ենք, նպատակամղված է անապատում ավերակների վերականգնմանը: Թանկ գնով նվաճված խաղաղությունն այստեղ ևս նոր ծիլեր է արձակելու: Մենք մի ցանկություն էլ ունենք թույլ տան ժողովրդի սփռված բեկորներին հավաքվել Ամերիկայում նրանց համար ստեղծելով նոր հայրենիք: Ամերիկայի նավատորմն ավելի լավ բան, քան այդ թշվառներին տեղափոխելը, չի կարող անել: Օգոստոսի կեսերին Գյուրունից մի քարավան բաղկացած 1800 ընտանիքից, ճանապարհին Նուկրագդաղի լեռնանց-

քում, հարձակման էր ենթարկվել քրդերի կողմից: Նրան ուղեկցող ոստիկանները, միանալով ավազակներին, սպանել էին տղամարդկանց, թալանել մարդկանց ողջ ունեցվածքը, անգամ հանել էին կանանց վերջին հագուստը: Երբ քարավանի բզկտված բեկորները հասան Մարաշ, 30 մարդ էր մնացել:

Հյուպատոս Ռոսելերի բարեխիղճ ջանքերի շնորհիվ Կոստանդնուպոլսի կենտրոնական իշխանության կողմից ևս կարգադրություն ստացանք, որ Մարաշի մեր հաստատության երեխաները և ողջ անձնակազմը մնալու են իրենց տեղում, այնպես որ առայժմ մերոնք ապահով են: Մինչև այդ պատկերացում չունեինք անգամ, թե ինչպես ենք պահելու որբանոցի երեխաներին, քանի որ ամեն օր նրանց տանելու հրամանի էինք սպասում: Այս հանգամանքը ստիպում էր մայրերին իրենց մոտ պահել երեխաներին: Տներից յուրաքանչյուրում 50 երեխա կա, մի դատարկ դպրոցում էլ՝ 30 երեխա: Նրանք ոչ մի հարազատ չունեն, ուստի մենք նրանց ընդունել ենք օրինական ձևով: Մնացել են նաև մեծ թվով ծերեր, հիվանդներ ու վիրավորներ, որոնք մեր հիվանդանոցի խնամքի տակ են: Թուրքիան անում է ամեն ինչ, որպեսզի բարեգործական միությունն առանց աշխատանք չմնա»:

դ) Բարեգործական աշխատանքները Մարաշի գավառում

Քույր Փաուլա Շեֆերը և քույր Բեաթրիս Ռոներն իրենց բարեգործական աշխատանքների մասին հաղորդումով մեզ ներկայացրին տառապալից այս պատմության ցնցող տեսարաններից մեկը:

1. Քույր Փաուլա Շեֆերի 1915 թ. նոյեմբերի 6-ի հաղորդումը

«Ձիով նոր եմ վերադարձել Բաղչե-Օսմանիեի հովտից, ուր հազարավոր աքսորյալներ անօթևան թափված են դաշտերում ու ճանապարհներին՝ հանձնված ավազակա-

բարո խուժանի քմահաճույքին: Երեկ գիշեր 12-ի մոտ, հարձակում է տեղի ունեցել 50-60 հոգանոց մի փոքրիկ վրանային ճամբարի վրա: Տեսա ծանր վիրավորված տղամարդկանց ու կանանց փորերը բացված, գանգերը ջարդված, դանակի շեղբով գազանաբար ծեված: Բարեբախտաբար հետս հագուստ էի վերցրել, փոխեցի արյունոտ շորերը, տեղափոխեցի հաջորդ իջևանը, ուր հնարավոր էր խնամել նրանց: Շատերն այնքան արյուն էին կորցրել, որ ճանապարհին մահացան: Մեկ այլ ճամբարում 30-40 հազար հայ կա: Հաց բաժանելիս, այդ հուսահատ, կիսաքաղց մարդիկ հարձակվեցին հացի վրա: Երբեմն պատահում է, որ արդեն ծին է ինձ իր հետևից քաշ տալիս: Ամենուրեք անթաղ դիակներ են: Ոստիկանները փող են վերցնում, որ թաղելու թույլտվություն տան: Շատ անգամ հայերին արգելում են վերջին հարգանքը մատուցել իրենց հանգուցյալներին: Տիֆի ծանր համաճարակը թևածում է ճամբարներում, գրեթե յուրաքանչյուր երրորդ վրանում հիվանդ կա: Աքսորյալները ճանապարհը միշտ ոտքով են անցնում: Տղամարդիկ, կանայք ու երեխաներն իրենց ունեցած-չունեցածները մեջքներին, բեռի տակ կքած, զինվորների հրացանների կոթերի, հաճախ նաև սվինների անընդհատ հարվածների ուղեկցությամբ են քայլում: Բազմիցս կապել եմ կանանց սվինների շեղբերից առաջացած արյունահոսող վերքերը: Շատ երեխաներ, կորցնելով իրենց ծնողներին, մնացել են անօգնական: Օսմանիե չհասած, երկու ժամ հեռավորության վրա, լրիվ ամայի մի դաշտում երկու տղամարդ մահանում էին: Նրանց քարավանը առաջ էր գնացել, իսկ իրենք առանց մի կաթիլ ջրի քանի օր է պառկած են: Նրանք վերածվել էին կըմախքների, և միայն թույլ շնչառությունն էր մատնում, որ դեռ կենդանի են: Փոսերի մեջ կանանց ու երեխաների անթաղ դիակներ են: Օսմանիեի թուրք պաշտոնյաներն ավելի պատրաստակամ գտնվեցին, և ես կարողացա ինչոր բան անել՝ որոշ դժվարություն հաղթահարել: Ինձ սայլ տվեցին մեռնողներին հավաքելու և քաղաք բերելու համար:

2. Քույր Բ. Ռոների հաղորդումը 1915 թ. նոյեմբերի 26-ին Մամուրեթում վրանային մի ճամբար կատարած այցի մասին

«Բարակ կտորներից պատրաստված հազարավոր փոքրիկ ու ցածր վրաններ, հոծ բազմություն, ուր հավաքված են ամեն հասակի և հասարակական տարբեր խավերի պատկանող մարդիկ: Նրանք մեզ են նայում մասամբ զարմացած, մասամբ հուսահատ անտարբերությամբ: Սոված, մուրացիկ երեխաների ու կանանց մի խումբ կրնկակոխ հետևում էր մեզ: «Խանում, հաց, խանում, քաղցած եմ: Երեկվանից ոչինչ չենք կերել»: Նայելով այդ ընչաքաղց, գունատ, ցամաքած դեմքերին իսկույն համոզվում ես, որ նրանց խնդրանքն իրավացի է: Կարողացել էինք մոտ 1800 հատ հաց հայթայթել: Սովալլուկ ամբոխը հարձակվեց մեզ վրա, հաց բաժանող քահանաները հազիվ հասցրին պաշտպանվել: Հացը, իհարկե, չբավարարեց, բայց նորից ճարելու հնարավորություն չունեինք: Մեր առջև թշվառ, սովահար մի բազմություն էր, որին ոստիկաններն ուժով էին ետ պահում: Հանկարծ մեկնելու հրաման եկավ: Ով իր վրանը չէր հասցնում արագ հավաքել, սվիններով պատառոտում էին նրան: Երեք սայլ և մի քանի ուղտ էին կանգնած: Ունևորները վարձեցին սայլերը, մյուսներն իրենց իրերը բարձեցին ուղտերին: Աղքատների, ծերերի և հիվանդների դառը հեծեծանքն օդ էր սղոցում: «Էլ չենք կարող քայլել, թողեք մեզ այստեղ մեռնենք»: Սակայն նրանք պետք է գնային: Մի քանիսի համար մենք գրաստներ վարձեցինք, մյուսներին մի քիչ մանր դրամ տվեցինք հաջորդ կանգառին հաց գնելու համար: Բաժանեցինք նաև հագուստ, որ կարվել էր Ադանայի միսիոներությունում: Թափորը, որի ծայրը չէր երևում, շարժվեց: Մնացին անկյալներն ու թարմ գերեզմանաթմբերի մի կույտ: Հետ ընկած 200 աղքատների, ծերերի և հիվանդների համար պետք է մեկ անգամ ևս օգնություն բերել: Վրա հասած անծրևներն ու ցրտերը հարյուրապատկում են տառապանքը: Ամենուրեք քարավաններն իրենց հետևից թողնում են դիակներ, փոքր երեխաներ,

հիվանդներ, որոնք մեռնում են անլուր չարչարանքներով: Համաճարակները ևս նրանց մշտական ուղեկիցներն են»:

3. Քույր Փ. Շեֆերի 1915 թ. դեկտեմբերի 1-ի հաղորդումը Իսլահիեի վրանային ճամբար կատարած այցի մասին

«Երեք օր ու երեք գիշեր անձրևելուց հետո մեր տըներում իշխում են խոնավությունն ու ցուրտը: Հնարավորին չափ շուտափույթ ճանապարհ ընկա: Մամուրեի մերձակայքում 200 ընտանիք աղքատության և հիվանդության պատճառով չէր կարողանում շարունակել ճանապարհը: Չինվորներն անձրևին չէին ուզում իրենց նեղություն տալ սվիններով ոտքի հանել նրանց ու ստիպել առաջ շարժվել: Եվ այդպես նրանք պառկած մնացել էին ջրափոսերի մեջ: Անկողին հիշեցնող ջուլ ու փալասը մեկ չոր թել անգամ չուներ: Կանանց մեծ մասի ոտքերը սառել էին, սևացել ու ենթակա էին անդամահատության: Հեծեծանքներն ու տընքոցները բռնել էին ամենուր: Դիակներ՝ նախորդ քարավանից մնացած, դիակներ վրանների առաջ: Չինվորները թույլ էին տալիս թաղել դիակը՝ բախշիչ վերցնելուց հետո միայն: Մեր տարած չոր հագուստները փրկություն էին. նրանք փոխվեցին: Հաց և մի քիչ մանր փող էլ տվեցինք: Կառքով անցնելով ամբողջ տարածքը մինչև Իսլահիե՝ ականատես եղա դժոխային տանջանքների, աներևակայելի դեպքերի ու տեսարանների: Փոքրամարմին մի կին, որ ետ էր մնացել նախորդ քարավանից, նստել էր ճանապարհի եզրին, մեջքին մահճակալ, որին կապված էր կրծքի երեխա, գրկին վնասված ոտքերով երկու տարեկան մեկ այլ երեխա: Կինը բեռան տակ կքած՝ լալիս էր սըրտաճմլիկ: Ես վերցրի նրան ինձ հետ և հասցրի հաջորդ վրանային ճամբարը, ուր երեխան մահացավ: Այնուհետև հոգացի, որ նա կարողանա ճանապարհը շարունակել: Կինն այնքան շնորհակալ էր: Կառքս լիքը հաց էր, անընդհատ բաժանում էի: 3-4 անգամ նորից գնեցի: Հա-

զարավոր մարդկանց հաց բաժանեցի, հարյուրավոր մարդկանց համար գրաստ վարձեցի, որ կարողանան առաջ գնալ: Իմ այցելածներից ամենասոսկալին Իսլամիեի ճամբարն էր: Հենց մուտքի առաջ անթաղ դիակների մի կույտ էր գոյացել, հաշվեցի 35, մեկ այլ տեղում 22: Կից վրաններ էին, ուր պառկած էին ծանր թանչքով (դիզենտերիա) հիվանդ մարդիկ: Վրաններում և շուրջ բոլորը աննկարագրելի աղտոտություն էր: Մեկ օրում թաղման հանձնախումբը հողին հանձնեց 580 դիակ: Մարդիկ հացի վրա հարձակվեցին սոված գայլերի պես, շատ տհաճ տեսարան էր: Խեղճ արարածներ, ինձ էին նայում բութ, ապուշ հայացքով և զարմանում, թե որտեղի՞ց այս օգնությունը: Եղան ճամբարներ, որոնց կարողացանք մի քանի շաբաթ ապահովել հացով: Իհարկե, դա անում էինք հնարավորին չափ ծածուկ: Փառք Աստծուն, այսքանը գոնե անել կարողանալու համար»:

Քույր Փաուլա Շեֆերի հաջորդ հաղորդումը

«Իմ վերջին ճանապարհորդությունը, որ տևեց յոթ շաբաթ, պարզապես անհնար է նկարագրել: Մարաշից դուրս եկանք ժամը 4-ին, երեկոյան 8-ի մոտ, մթնշաղին հասանք Դերեքյոյ: Որոշեցինք գիշերն էլ գնալ: Մթի մեջ ձիերը շրջակայքում սփռված բազմաթիվ դիակներից անընդհատ խրտնում էին: Կտրելով դաշտով անցնող ճանապարհը մենք նույնպես սարսռեցինք ամենուրեք սփռված կմախքներից ու դիակների անտանելի գարշահոտությունից: Չորս կողմը ոչ մի շունչ, միայն դիակներ էին: Հանկարծ ձիերը ճանապարհի մեջտեղում ծառս եղան: Չորս շաբաթական մի փոքրիկ երեխա էր ընկած փոշու մեջ: Նա դեռ կենդանի էր: Թփերի տակից լսվում էին քաղցից ու ծարավից տանջվող երեխաների ճիչեր: Առավոտյան մեր կառքն անցավ տղամարդկանց և կանանց խոշտանգված, ջախջախված, ոտք ու ձեռք կտրատված դիակների կողքով, որոնք այդպես էլ ընկած էին իրենց

արյան լճի մեջ: Մատղաշ շիվը այնպես էին մտցրել հղի մի կնոջ սեռական օրգանների մեջ, որ ծայրը դուրս էր եկել աջ կողքից, երիկամների շրջանից: Մարդկանց կամ դիակների մի մասը ածխացած էր: Երեխաները՝ հաճախ 3-4 հոգով, նստած մնում էին արտերում, մինչև քրդերը կամ թուրքերը գալիս և հավաքում էին նրանց: Մենք էլ վերցրինք ութ այդպիսի երեխա ու բերեցինք Մարաշ: Մարաշից մինչև Բաղչե տառապանքի և մահվան ուղի էր: Ահավոր էր: Կրծքից կամ փորից սվինահարված մարդիկ ճանապարհներին ընկած արնաքամ էին լինում: Ես նրանց առաջարկում էի գրաստ նստել մինչև Բաղչե հիվանդանոց գնալու համար: Սակայն նրանք աղերսում էին իրենց միայն հաց ու ջուր տալ և թողնել տեղում մեռնելու: Պատկերացրեք իմ վիճակը, երբ ստիպված էի լինում լքել մահվան դատապարտվածներին ու շարունակել ճանապարհը: Սոսկալի էր: Մի քանի ժամ անց մեզ ընդառաջ եկավ մոտ 2000 հոգուց բաղկացած մի քարավան՝ ունեցած-չունեցածները շալակներին, երկու ժամ անց՝ 5000 մարդ և այդպես երկու օր շարունակ: Այնուհետև այնպիսի տեսարանների ականատես եղա, որ մինչև հիմա ամեն անգամ հիշելիս, սիրտս արյունում է: Ինձ հանդիպում էին ոչ թե հարյուրավոր, այլ հազարավոր մարդիկ, որոնք շրջապատելով իմ ձին՝ լալիս էին ու հուսահատ ասում. «Թող ասեն, ո՞ւր են տանում մեզ»: Շոգն էլ մի կողմից էր տանջում մարդկանց: Ամեն անգամ երբ հայտնվում էի նրանց օղակում, զապթիեները օգնության էին հասնում ինձ: Ես համաձայն էի նրանց հետ ու լուռ ինձ համար առանձնանում էի լեռներում, իմ Աստծու և բոլոր ցավերի հետ մենակ: Այդ դեպքերից շատ հետո էլ ես հանգիստ քնել չեմ կարողանում, այնքան շատ տառապանք է կուտակվել մեջս: Զապթիեներին փող էի տալիս, որ երեխաների և հղի կանանց նկատմամբ գթասիրտ լինեն, գրաստ վարձեն նրանց համար ու հաց տան: Վերջում նրանք օգնություն ստացած մարդկանցից գրություն էին բերելու Մարաշ: Այդպես միայն հնարավոր էր ինչ-որ բան անել»:

Ե) Հալեպ

Այս իրադարձություններից առաջ բարեգործական միությունը Հալեպում մշտական աշխատանք չուներ: Իսկ ներկայիս համատարած թշվառության պայմաններում քույր Բեաթրիս Ռոները ստանձնել էր հայկական մի որբանոցի ղեկավարությունը, ուր կար մոտ 800 որբ երեխա: Շատ ամիսների տքնաջան աշխատանքից հետո, որ ուղեկցվում էր մշտապես ահ ու դողով, վերցրին երեխաներին և բաժանեցին Կոնիայի գավառի մահմեդական ընտանիքներին, որպեսզի նրանք դաստիարակվեն որպես մահմեդական: Ճիշտ այնպես, ինչպես այդ ժամանակ սովորական էր դարձել հայ երեխաներին, աղջիկներին և երիտասարդ կանանց, առանց նրանց կամքը հարցնելու, բաժանել մահմեդական տների վրա, ուր թեև ապահովվում էր ֆիզիկական գոյությունը, սակայն քրիստոնեության համար կորած էին այլևս: Շատ դժվար էր այդ երեխաների համար. փրկվելով ամենասուղ կարիքից նրանք սկսել էին մոտենալ Փրկչին, այժմ սակայն խարխափելու են խավարի մեջ: Բաժանումը սրտաճմլիկ էր: Հակառակ դրա, քույր Բեաթրիս Ռոների այցը Հալեպ կարևորվեց նրանով, որ նա շփվելով անապատ աքսորվածների հետ, որոնք այնտեղ առանց օգնության ոչնչանում էին, կարողացավ հակառակ կառավարության խիստ հրամանի փոքր օժանդակությամբ ամոքել նրանց ցավերը:

Հալեպ, 29 դեկտեմբերի, 1915 թ.

«Հինգշաբթի, դեկտեմբերի 16-ին Փաուլան և ես թողեցինք Մարաշը: Ձարիլարով գնացինք էնթիլլի, այնտեղից էլ Իսլահիե, ուր հասանք երկաթուղուն: Ձեմալ փաշայից Հալեպի գավառ մեկնելու թույլատրություն խնդրեցինք հատկապես շեշտելով սանիտարական աշխատանքների անհրաժեշտությունը: Նորին գերազանցությունը շատ սիրալիր բացատրեց, որ չի կարող թույլ տալ, և առաջարկեց մեզ այստեղ՝ Հալեպում օգնություն կազմակերպել: Երկրորդ անգամ ես նրա հետ մենակ հանդիպեցի, քանի որ

քույր Փաուլան վերադարձել էր Հարունիե, այնուհետև՝ Մարաշ: Նա խնդրեց ստանձնել քաղաքի հայկական մեծ որբանոցի պատասխանատվությունը: Այն աչքաթող էր արված և անհապաղ ուշադրության կարիք ուներ: Իմ այն հարցին, թե ինչպես է լուծվելու երեխաներին կերակրելու խնդիրը, նա պատասխանեց, որ իրենք ամեն ինչի մասին հոգացել են, իսկ նահագապետին հանձնարարված է հայթայթել ամենաանհրաժեշտ բաները:

Կարծում եմ, ինչ հնարավոր է, պետք է անել: Ինչքան էլ տհաճ լինի աշխատանքն իշխանության հետ, այնուամենայնիվ դա կարևոր քայլ է այս երկրում մեր հետագա գործունեության համար:

Տունը, ուր տեղավորված է 311 երեխա, գտնվում է քաղաքի կենտրոնում և պատկանում էր ֆրանսիական մի միաբանության: Պատերազմի սկզբին քույրերին վտարեցին, իսկ շենքը բռնագրավվեց: Երկար ժամանակ այստեղ զինվորներ էին ապրում, այնուհետև այն տրամադրվեց անցնող քարավաններին: Հազարավոր մարդիկ էին եկել ու գնացել, հիվանդացել ու մահացել, կենդանի մնացածներն էլ ծանր վիճակում են եղել: Ամբողջ տունը վարակված էր, կեղտոտ ու կիսաքանդ: Իզուր էինք մեր շուրջը մեկ այլ շենք փնտրում: Բոլոր մեծ շենքերը հիվանդանոցներ ու դպրոցներ էին դարձրել: Բաղդադի երկաթուղու ընկերության բժիշկ դոկ. Լեյդվեդը առաջարկեց երեխաներին տեղափոխել Ջերաբլուզ, որ գտնվում էր Եփրատի ափին և երկաթուղով 2 ժամ հեռու էր, և տեղավորել ընկերության դատարկ բարաքներում: Սակայն, ինչպես մեզ հայտնի էր դարձել, բծավոր տիֆն այնտեղ ավելի մեծ տարածում ուներ, քան այստեղ էր: Եթե ուզում էինք փրկել երեխաներին, պետք է անմիջապես աշխատանքի անցնեինք: Մի քանի աղջիկ էի վերցրել, որոնց հետ 1-2 շաբաթ սպասեցի Փաուլային: Այդ ընթացքում ստիպեցի պաշտոնյաներին գոնե ամենաանհրաժեշտ նորոգումներն անել, և մի կերպ տեղավորվեցինք:

Այժմ արդեն աքսորյալների հանգրվանը դարձել է Բաբը, որ գտնվում է այստեղից հարավ-արևելք: Այնտեղ են քշում հազարավոր քաղցած և տարափոխիկ հիվանդություններ-

ռով վարակված մարդկանց: Ամբողջ օրը դիակներ են թաղում: Վախենում եմ, որ հերթը հասնելու է խեղճ Մարաշին»:

Բեաթրիս Ռոներ

Հալեպ, դեկտեմբեր, 1915 թ.

«Տեղահանված հայերի տառապանքներն անկարելի է պատկերացնել, առավել ևս՝ նկարագրել: Ձմռան ցրտին հազարավոր կին, երեխա և հիվանդներ մերկ ու սոված ծվարել են ճանապարհներին և անապատում: Թուրքական կառավարության օգնությունը նրանց ապրուստի հարցում շատ չնչին է: Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Համա (Հալեպի մոտ) եկան մոտ 20.000 աքսորական: Այդ ընթացքում կառավարությունը նրանց վրա ծախսեց 2000 թուրքական ֆունտ, այսինքն՝ մեկ անձին 13 փարա, որը հավասար է 4 պֆենիգի: Միայն այդ երկու ամիսներին երեք հազար մարդ մահացավ քաղցից, երկու հազար՝ վարակիչ հիվանդությունից: Ավելի քան 500 երեխա մահացավ փողոցներում, ուր նրանք աղբակույտերում ուտելիքի մնացորդներ էին փնտրում: Այս թվերը ճշգրիտ փաստեր են՝ վիճակագրությամբ հաստատված:

Այդ երկու ամսից բացի էլ ոչ մի պֆենիգ չի ծախսվել, որի հետևանքով մահացությունն ավելի մեծացավ:

Հոմսի մերձակա գյուղերից մեկում մեկ շաբաթում քաղցից մահացավ 100 հոգի: Նրանք մեր ավետարանական համայնքներից մեկի անդամներն էին: Այս մեկ առանձին փաստից հեշտ է եզրակացնել, թե քաղցն ու հիվանդությունն ինչ դեր են խաղում այս վայրերում: Ամենուրեք մարդիկ օգնություն են խնդրում, հաց և փող աղերսում: Շատ վայրերում բռնագաղթվածների համար կառավարության կազմակերպած օգնության կետերը վաղուց լուծարված են: Կոնիայից մինչև Մոսուլ և Հալեպ, մինչև Մեան (Մեռյալ ծովի մոտ) ճանապարհները, գյուղերն ու տափաստանները ծածկված են գերեզմաններով և անթաղ դիակներով: Ցիներն ու շնագայլերը լիացել են ավարից:

Սկզբում աքսորականները դեռ ինչ-որ բան ունեին իրենց մոտ, սակայն ճանապարհին նրանց մինչև ներքնահագուստ թալանեցին: Նրանք նաև շատ բան վաճառեցին և հաց գնեցին: Արդեն էլ ոչինչ չունեն: Մեկն ասաց. «Մենք վաճառեցինք մեր վերմակները, գորգերը, որոնց վրա նստում էինք, քնում, վաճառեցինք ամեն, ամեն ինչ, մինչև անգամ մեր ջրամանները: Ճանապարհին գյուղացիներից օգնություն ենք խնդրում, նրանք մերժում են և պայման դնում, որ եթե մեր երեխաներին վաճառենք 2 մեջիդիեով (մոտ 7 մարկ), մեզ հաց կտան»: Հիվանդ և սովահար երեխաների թիվը մեծ էր: Մարդիկ ճանապարհների վրա առանց ծածկի, ուտելիքի, հագուստի, առանց որևէ բժշկական օգնության: Եղածն էլ թանկ ու կրակ: Կարո՞ղ է մի ժողովուրդ այսպիսի պայմաններում գոյատևել: Նույնիսկ այստեղ՝ Հալեպում, մարդիկ սոված են: Բռնագաղթված մի հայ պատմում էր. «Մեր ընտանիքը 11 անձից էր բաղկացած, միայն ես եմ մնացել»: Մի փոքրիկ աղջիկ ասաց. «Մենք տասը հոգի էինք, ես եմ միայն մնացել»: Մի մայր, դառնորեն լաց լինելով, ասում էր. «Վեց երեխա ունեի, չորսը սովից մահացան, երկուսը վերջին շնչում են»:

Պատվելի Հարություն Նողուդյանի կինը օգոստոսի 23-ին գրում է Համայից:

«Նախորդ շաբաթ, կիրակի ժամը 9-ին երկու պատվելիները (քարոզիչ)՝ Նողուդյանն ու Հ-ն ձերբակալվեցին: Մի քանի պաշտոնյաների միջնորդությամբ ամուսնուս թույլատրեցին տուն գալ՝ որբանոցում գործերը կարգավորելու և հաշիվները փակելու համար: Մինչև հինգշաբթի պատվելի Հ-ն մի քանի հոգու հետ դիմում է իսլամ ընդունելու, նրան՝ որպես քարոզչի մերժում են, իսկ մյուսներին ընդունում են և ազատ արձակում: Փորձել էին համոզել նաև իմ ամուսնուն, սակայն նա ասել էր. «Ես, որ Հիսուսին ծառայել եմ 33 տարի, չեմ կարող այդ քայլին դիմել, չեմ կարող ուրանալ»: Համայում նա միակն էր, որ հավատափոխ չեղավ: Հինգշաբթի ամուսնուս պատվելի Հայդոստյանի հետ ուղարկեցին Դամասկոս: Ասում են, որ նա հա-

սել է մինչև Երուսաղեմ: Մեկ այլ, ավելի ուշ եկած տեղեկությամբ Համայի գավառակի քահանաներին և քարոզիչներին տարել էին Դետա: Ծանր էր պատվելի Հ-ի համար, քանի որ հավատափոխության հայտարարություն էր տվել և մերժվել: Աստված պահապան այդ դաժան փորձության առաջ կանգնածներին: Մենք նրանց համար ուժեղ կամք ենք աղերսում, որպեսզի կարողանան դիմակայել այդ տառապանքներին: Պատվելին որջունում է Ձեզ և խնդրում օգնել իրեն հնարավորության չափով»:

Ձեր քույր Ս. Ն.

Արաքսյա Ճեպեճյանի նամակը Դեր-Զորից

«Փառք Աստծո, որ հնարավորություն ընձեռվեց կրկին գրելու: Այժմ բոլորս դրսում վրանների մեջ ենք ապրում: Քաղաքից մեզ՝ տղամարդկանց, կանանց ու երեխաներին, հանեցին գիշերվա ժամը 10-ին՝ հայհոյանքներով և մըտրակների հարվածների տարափի տակ, ամեն մեկն իր բեռը մեջքին: Հավանաբար, շուտով մեզ ավելի հեռու են քշելու: Եղանակը փոթորկոտ է, վրանների հնամաշ կտորների ճեղքերից ավազե բարակ անձրև է մաղում, հնարավոր չէ աչքերը բաց պահել, կարծես թաղված լինենք ավազի մեջ: Աստված դժբախտությունները մեկը մյուսի հետևից է բերում: Բայց չենք տրտնջում: Մենք ապավինել ենք Աստծու ողորմածությանը: Ո՞ւր են տանելու մեզ՝ չգիտենք: Խոսք կա, որ բաժանելու են Խեբեր գետի ափամերձ տարածքներում»:

Մի քանի օր անց նրան երեք հոգու հետ ծերբակալում և կրկին տանում են Դեր-Զոր: Նրանք փող էին բաժանել, և նրանց հայրենակիցներից մեկը, որին փող չէր հասել, մատնել էր: Նրա վերջին գրությունն անթվակիր է, ահա այն.

«Սիրելի՛ քույր,
Ձեզ գրել այլևս չենք կարող: Մեր վիճակը ծանր է, բայց փառք Աստծուն, հուսով ենք, որ նա կփրկի մեզ: Եթե միայն հնարավոր լիներ այս խեղճ վրանաբնակներին օգնություն

բերել իշխանությունների պաշտոնական թույլտվությամբ: Ես իմ մասին չէ, որ մտածում եմ, սովահար հարևաններս են աչքիս առաջ: Որպես բանտարկյալներ, մենք միշտ մահվան շեմին ենք: Եթե այստեղ այլևս չհանդիպենք, կտեսնվենք այնտեղ՝ վերևում: Մյուսների հանձնարարությամբ ևս՝

Ա.Ճ.»:

Մեր ներկայացուցիչներից մեկի հաղորդումը

«Զերաբլուզից մինչև Դեր-Զոր (էլ-Դեիր), Եփրատի ափերին սփռված էր 150.000-200.000 հայ. բացառապես կանայք ու երեխաներ: Բառերով անհնար է նկարագրել այդ խեղճ մարդկանց անլուր տառապանքները, որոնք մեծ մասամբ առաջանում էին սովից ու գազանային խոշտանգումներից: Մեր ներկայացուցիչը Մեսքենեի մերձակայքում հայտնաբերել էր ճամբար՝ մոտ 4000 հայերով, որոնց մի մասն էր միայն վրանների տակ: Բոլոր վրաններում էլ հիվանդներ ու մահամերձներ կային: Իսկ մեծ մասը առանց որևէ ծածկի պառկած էր այրող արևի տակ: Մարդիկ կենդանի նետվում էին ընդհանուր գերեզմանի մեջ խնդրելով իրենց էլ թաղեն, որ ազատվեն սոսկալի տանջանքներից: Բաբից մի քարավան էր եկել անմխիթար, անհույս վիճակում: Մահացությունը բարձր էր և ինչքան շարունակվում էր տեղափոխությունը, էլ ավելի էր աճում: Մարդիկ ուրուրների հետ մորեխ էին ուտում հում կամ եփած: Ագահությամբ ուտում էին բույսերի արմատներ, փողոցային շներ և սատկած կենդանիներ: Միաժամանակ չէին դադարում ուղեկցող թուրք ոստիկանների բիրտ վայրագությունները: Նրանք չէին խորշում շորթել իրենց խեղճ զոհերի վերջին ունեցածն անգամ, որ նրանց աչքին արժեք էր ներկայացնում: Աքսորականներին նաև բեռնամակույկներով տեղափոխում էին Եփրատ գետով: Ռաքայում բարձած 50 բեռնանավից Դեր-Զոր հասան հազիվ քսանը: Այդտեղ հավաքվել էր ավելի քան 40.000 հայ, որոնց քշելու էին ավելի հարավ: Ով դեռ փող ուներ, կարողանում էր 40-50 լիրայով բնակության վկայական

առնել, որը թույլ էր տալիս մնալ Դեր-Զորում: Սեպկայում մի քարոզիչ պատմում էր, թե ինչպես Այնթապում ծնողները մորթում էին իրենց երեխաներին և ուտում բոլորի հետ միասին: Սպանում էին նաև մահամերձներին և ուտում: 1916թ. ապրիլից մինչև հունիս վիճակը մոտավորապես այս էր»:

Հալեպ, 17 հունվարի, 1916 թ.

«Մենք նեղություն կկրենք այնքան ժամանակ, քանի դեռ երեխաները ժամանակավորապես ապրում են երկու տարբեր տներում, մինչև իսկական որբանոցը ախտահանվի: Այս գործում մեզ օգնում են գերմանացի մի գործարանատեր, որին Ջեմալ փաշան հանձնարարել է սանիտարական հանձնախմբի հսկողությունը, և Բաղդադի երկաթուղու ընկերության բժիշկը: Որբանոցի շենքի նորոգումն անհրաժեշտ է: Ամեն օր երեխաների համար ստանում ենք կշռված միս, հաց, բլղուր ու ճարպ, ահա բոլորը: Մենք գումար էինք խնդրել երեխաներին հագցնելու և սարսափելի վնասակար միջատներից մաքրելու համար, սակայն մինչև այժմ պատասխան չենք ստացել: Հաճախ ցանկություն եմ ունենում մեկնել, հեռանալ, բայց գիտեմ նաև, որ դա շատ անխոհեմ քայլ կլինի, երեխաները կզրկվեն իրենց վերջին ապաստանից: Այնպես որ ինձ ոչինչ չի մնում անել, քան լուռ ու մունջ վերցնել ձեռքի տակ եղած ամենաանհրաժեշտ բաները, շարունակել իմ բարեկամական այցելությունները նահանգապետին հիշեցնելու նրան իր խոստումները: Մի կողմից անտանելի են այդ պաշտոնյաները, որոնց ոչ մի բառը հավատ չի ներշնչում, մյուս կողմից՝ ահավոր այս թշվառությունը, որ հանդիպում ես ամեն քայլափոխի:

Այսօր նրանք տարան մեր բոլոր ծառայողներին, որոնց հետ աշխատում էինք մինչև հիմա: Չգիտեմ, թե ինչպես ենք ուտելիք ստանալու երեխաների համար: Բացի այդ, զինվորական իշխանությունը տունը ուզում է վերցնել: Մեծ հիվանդանոցներ են սարքավորվում, քանի որ խոսք կա Սիրիա զորք մտցնելու մասին: Փոխարենը վալին մեզ մի քանի փոքր շենք է տալիս: Այսօր նա ասաց, որ մտադիր են

երեխաներին Կոստանդնուպոլիս տեղափոխել, իսկ մինչ այդ իմ պատասխանատվության տակ են:

Մենք չզարմացանք, որ Ջեմալ փաշան արգելեց մեզ շարունակել ճանապարհը, քանի որ ըստ տեղեկությունների արդեն գիտեինք, թե ինչ է կատարվում հարավում: Նման զարհուրելի բաներ երբևէ տեղի չեն ունեցել: Եթե մոտ ժամանակներում որևէ փոփոխություն չլինի, մի քանի ամսվա ընթացքում կոչնչանան նաև հայ ժողովրդի վերջին բեկորները: Հազարներով մեռնում են քաղցից, համաճարակներից և անբարենպաստ եղանակից: Համայի, Հոմսի ու Դամասկոսի շրջակայքում գտնվողների վիճակը համեմատաբար լավ է, նրանց թողել են տեղում և թույլատրել իրենց համար ապրուստ հայթայթել: Իսկ արևելքում՝ Եփրատ չհասած, նրանց տեղից տեղ են քշում, թալանում և ենթարկում բռնությունների: Մեր ծանոթներից շատերն են մահացել արդեն»:

Բեաթրիս Ռոներ

Պատահում էր նաև, որ գերմանացի քույրերը աքսորականներին օգնություն հասցնելու համար գիշերը փողը կարում էին իրենց սուրհանդակների հագուստների մեջ: Այդ սուրհանդակները հայեր էին, որոնք բեդվինների պես հագնված անապատում ծածուկ մոտենում էին իրենց հայրենակիցներին: Նրանք անձնազոհ մարդիկ էին, քանի որ բռնվելու դեպքում ստույգ մահ էր սպասվում: Նրանք նաև հայրենիք էին գնում ու գալիս: Նրանցից մեկը՝ մարաշցի արծաթագործ Կարապետը, երեք անգամ գնացել էր Մարաշ: Սակայն ի վերջո նրան ևս բաժին հասավ մահվան ճակատագիրը:

Քույրերն իրենց հույսը հատկապես կապում էին Եփրատի ափին գտնվող Դեր-Զորի հանգրվանների հետ: Տարբեր վայրերից այնտեղ ծգված մոտ 800.000 հոգուց բաղկացած քարավաններից ողջ էր մնացել 8000 մարդ: Այդտեղի ոստիկանապետ Ալի Զուադ բեյը, որ բարեհոգի մարդ էր, ամեն կերպ փորձում էր մեղմել նրանց տառապանքը: Նա բաժանեց 50.000 թուրքական ֆունտ՝ տալով գոյությունը պահպանելու հնարավորություն: Հայերն այդ

թուրք պաշտոնյայի մասին ասում էին. «Նա հոր նման է մեզ հետ»: Երբ այս լուրերը հասան կառավարության ականջին, նրան տեղափոխեցին և նշանակեցին մի ավելի ցածր պաշտոնյայի էվերեկից մի կայմակամի: Վերջինս երդվել էր, որ ոչ մեկին կենդանի չի թողնելու: Բոլոր հայերին հավաքելով Եփրատ գետի ափին՝ Մուրադի մոտ մի հրս-կայական վրանային ճամբարում, խումբ-խումբ տանելով Խեբար գետի ափը, որը հայտնի է հրեաների աքսորից (Եզեկիել, Գ, 15), սպանել էր տալիս: Նոր ոստիկանապետը ջարդը հսկում էր հեռադիտակով: Նախ հանում էին խեղճ զոհերի բոլոր հագուստները, ժամերով քշում այստեղից այնտեղ, ապա գնդակահարում: Վայրենի խուժանը, որին հանձնարարված էր այս գործը, մի քանի համազարկ էլ տալով դիակների կույտին, ձիերով մի քանի անգամ գը-նում գալիս էր վրայով՝ համոզվելու համար, որ կենդանի մարդ չի մնացել: Այնուհետև նրանք իրենց կատարածի մասին բարձրաձայն, ծաղրանքով զեկուցում էին գեներալ պարդոնին: Բեաթրիս Ռոներին վիճակված էր վիրակապել այդպիսի խմբից փախած յուրաքանչյուրին, որ մեռած ձևա-նալով ազատվում էր և, բավական ժամանակ վտանգելով կյանքը, մի կերպ կարողանում էր հեռանալ:

Վերջին ժամանակներս Դեր-Զորից գալիս էին ոչ միայն վատ լուրեր: Հավատացյալները հավաքվում և այցելում էին բծավոր տիֆով հիվանդներին, իրենց հնարավորու-թյան չափ սիրով ու խնամքով շրջապատում նրանց, կազմակերպում և վարում զորավոր աղոթքի հավաքներ: Այնտեղ անապատում, մահվան դեմ հանդիման մոտ էր Աստված: Թեև աշխարհն էլ իր փորձություններով և անա-կընկալներով հեռու չէր, որովհետև ամեն ինչ կատար-վում է ըստ հայտնության ԻԲ, 11: Անգամ այս մեծ ող-բերգության մեջ վերևից լույս էր թափանցում, իսկ ուր չէին հասնում լույսի շողերը, թանձր խավար էր տիրում, իշխում էին նախանձը, ատելությունը, դավաճանությունը, կասկածը: Հուզվեցինք, երբ լսեցինք վերջին ընթրիքի մասին: Մարդկանց մի խումբ ընդհանուր մի հաշտությամբ վերջ է դնում գժտություններին ու թշնամանքին: Ապա նը-

րանք, ովքեր դեռ ինչ-որ բան ունեին, բաժանում են իրենց ունեցածը աղքատներին, որոնք ոչինչ չունեին: Գյուղացիները մորթում են իրենց վերջին անասունը, և բոլորը միասին կուշտ ճաշում են: Այնուհետև, Տիրոջ կերակուրը մեծ ուրախությամբ ճաշակելուց հետո, միասին գնում են դեպի մահ:

Հալեպ, 22 օգոստոսի, 1916 թ.

«Ութ օր առաջ հանդիպեցի աքսորը կազմակերպող հանձնախմբի գլխավոր պաշտոնյային, որը նոր էր եկել Կոստանդնուպոլսից: Նա հետաքրքրվեց որբանոցում կատարվող աշխատանքներով, հարցրեց քանի երեխա ունենք, ի՞նչ ենք ստանում կառավարությունից, որտեղի՞ց եմ միջոցներ հայթայթում և այլն: Վերջում ասաց, որ արդեն ամեն ինչ կկարգավորվի, մեկ շաբաթ միայն պետք է շարունակել աշխատանքներն առաջվա պես: Սակայն մինչև օրս ոչինչ պարզ չէ: Վալին ասաց, որ տղաներին տանելու են, մնալու է 50 աղջիկ: Սա վերջին վալին էր, որ քիչ թե շատ տանելի էր: Հրամանը Թալեաթ բեյից էր ստացվել: Զարմացանք, որ երեք օր անց այլ պաշտոնյաներ որբանոց ուղարկեցին ճանապարհներից հավաքած ևս 90 տղա, բոլորն էլ հյուծված, հիվանդ, կիսաքաղց վիճակում: Նրանց, անշուշտ, մեծ ուրախությամբ ընդունեցինք: Երեխաների թիվը հասավ 800-ի: Այսպիսի՜ մեծ աշխատանք կատարել և միևնույն ժամանակ նստել չոր ծյուղի, որը չնչին քամուց կարող է կոտրվել: Հույսս չեմ կորցնում, որ երեխաներին կկարողանանք պահել: Հակառակ դեպքում Աստված մեզ հետ»:

Բեաթրիս Ռոներ

Հալեպ, 21 հոկտեմբերի, 1916 թ.

«Ինձ վրա է դրված աղետյալների օգնության վարչության պատասխանատվությունը: Փառք Աստծու, գնալով մեծանում են եկող գումարները, և հնարավոր է արդեն ինչ-որ բան անել: Այն, որ ամեն ինչ արվում է գաղտնի, անշուշտ մեծ չափով դժվարացնում է աշխատանքը:

Տարբեր վայրերից օրական գալիս են հարյուրավոր անօթևան կանայք ու երեխաներ: Առաջին հերթին մենք նրանց հեռացնում ենք ճանապարհներից, որպեսզի չգրավեն իշխանության ուշադրությունը: Նրանք բոլորը սովահար են, լրիվ կամ մասամբ մերկ, առանց ծածկի, առանց որևէ այլ բանի, բացառությամբ միլիոնավոր մակաբույծների: Մենք ընդունում ենք միայն՝ բոլորովին որբ երեխաների, կանանց ուղարկում ենք խաներ, որոնք պատկանում են բանակի վարչությանը: Նրանք այնտեղ զբաղվում են մանածագործությամբ, օրական ստանում են երեք հաց ու մի քիչ ուտելիք: Երեխաների հագուստի և անկողնու համար վճարում է աղետյալների օգնության ֆոնդը: Այստեղ եկեղեցական վարչությունները ևս վերցրել են աշխատանքային նմանատիպ տներ, որոնց շնորհիվ փրկվել է մոտ 4000 կին:

Մեր ընտանիքը նույնպես օրեցօր աճում է: Ուրախ ենք, որ փոքրիկներին ազատում ենք թշվառության ճիրաններից, սակայն թաքուն վախով մտածում ենք ծմռան մասին: Եթե այսպես շարունակվի, ի՞նչ ենք անելու: Եթե փողոցներում կուտակումներ առաջանան, նրանց դարձյալ կաքսորեն. արդեն իսկ տեղ չկա: Իսկ եթե իշխանությունը, փոխանակ հակառակվելու, մեզ ընդառաջ գա, ամեն ինչ շատ ավելի դյուրին կընթանա: Մինչդեռ պաշտոնյաներն անծամբ խանգարելով կարգը նպաստում են հայերի լրիվ բնաջնջմանը: Մենք էլ շարունակ հայտնվում ենք երկու կրակի միջև»:

Բեաթրիս Ռոներ

5. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ՄՌԱՅԼ ՖՈՆԻ ՎՐԱ

Ողբերգական և սրտաճմլիկ են նաև այն տեղեկությունները, որոնք հաղորդում են մեր կողմից վստահություն վայելող ականատեսները: Շատ ցավալի է Հայաստանի ներկայիս վիճակը: Կասկածից վեր է արդեն, որ Թուրքիան բնաջնջեց հայ ժողովրդին, թերևս նաև ինքն իրեն: 1918 թ. սեպտեմբերի 18-ին թուրքերն ու թաթարները ներխուժելով

Վանում մնացած միակ Եվրոպացին է: Նա ծանոթ էր մոտ 60-70 տարեկան մի վանեցի հարուստ վաճառականի Գրիգոր էֆենդի անունով, որը վերադարձել էր փախուստի կես ճանապարհից: Նա իր կնոջ հետ ապրում էր գերմանական տանը: Գրիգոր էֆենդին քրիստոնյա էր, թշնամուն սիրող քրիստոնյա: Նա տեսնելով իր սեփական ժողովրդի անդարձ կորուստները կքում էր այդ բեռի տակ: Հայերի ամենադաժան թշնամու Վանի նահանգապետ Զևդեթ փաշայի վերադարձով վտանգի տակ էր նաև ծերունու կյանքը, որովհետև լինելով միակ առողջ մարդն ընտանիքում, հոգում էր ամեն ինչի մասին ու չէր կարող թաքնվել: Ծերունին համարձակ, բայց և զուսպ ընդառաջ գնալով Զևդեթին քաղաքավարի ողջունում է նրան ու ասում. «Իմ հայրն ու քո հայրը բարեկամներ են եղել, իսկ ես քեզ փոքրուց գիտեմ, ինձ ձեռք մի տուր»: Զևդեթ փաշան ժպտում է և հրամայում, որ ծերունուն խնայեն, սակայն նա պետք է միշտ տանը մնա, քանի որ չի կարող երաշխավորել իր զինվորների համար: Եվ դառնալով քույր Քեթիին՝ ասում է. «Հայրս այս ծերունու հորը շատ էր սիրում»: Սա լավ առիթ էր, որ Գրիգոր էֆենդին տանը բոլորի մոտ գովեստի և շնորհակալական խոսքեր ասեր՝ փորձելով մեղմել երեխաների մեջ կուտակված դառնությունը:

Քսանմեկամյա ուսուցիչ Մանուկը, որը քույր Քեթիի հետ նավով Վան վերադարձած միակ տղամարդն էր, նույնպես ճշմարիտ քրիստոնյա էր: Նա ասում էր. «Ես միշտ այնտեղ եմ, ուր Աստված է»: Նա ևս քույր Քեթիի հետ գնաց Զևդեթ փաշային դիմավորելու՝ ծառայելով նաև որպես թարգմանիչ: Մանուկը մինչև տիֆով հիվանդանալը ծառայել էր նաև թուրք զինվորներին, որոնք երկու օր հսկել էին գերմանական դպրոցը: Մի անգամ, երբ Մանուկը սենյակից դուրս եկավ, Զևդեթ փաշան ասաց քույր Քեթիին. «Այո՛, եթե բոլորը այսպես լինեին»: Այս արտահայտության նշանակությունը ճիշտ հասկանալու համար պետք է իմանալ, թե որքան լարված էին այդ ժամանակ Վանում հայերի և թուրքերի հարաբերությունները:

Ոչ միայն տղամարդիկ, կանայք ու աղջիկները նույնպես դժվարությունները հաղթահարելու իրական ապացույցներ էին տալիս: Սիրանույշ Նալբանդյանը Մարաշի տիկնանց աստվածաշնչյան դպրոցից, մի շատ շնորհալի երիտասարդ կին, տառապում էր թոքերի ու որովայնի տուբերկուլյոզով և շատ ծանր վիճակում էր: Նրա ամուսնուն աքսորի ճանապարհից փախչելու համար բանտարկել էին: Ամուսնուն կրկին տեսնելու հույս գրեթե չկար: Ապրում էր քրոջ մոտ, որն աղքատ ուսուցչուհի էր և հազիվ էր վաստակում իր ապրուստը: Սիրանույշի կրած տառապանքը կենդանի քարոզ էր: Անգամ մի թուրք սպայի երիտասարդ կին հաճախ այցելում էր նրան: Իր նամակներից մեկում Սիրանույշը գրում է. «Թեպետ արտաքուստ ամեն ինչ կորցնում եմ, սակայն այստեղ (այսինքն աստվածաշնչական դպրոցում) արժանացել եմ հավիտենական ողորմածության: Տիրոջ զորությամբ հանգիստ եմ, թեկուզ ցավը հաղթում է մարմինս, բայց գիտեմ, որ Բարձյալի շնորհիվ հաղթելու եմ»:

Մարաշի տիկնանց աստվածաշնչյան դպրոցի մեկ այլ սանուհի 30-ամյա Մարին, շատերի հետ աքսորվում է: Նա աքսորի ճանապարհին ինքնամոռաց լծվում է իր բախտակիցների տառապանքները մեղմելու և նրանց փոքրինչ մխիթարելու աշխատանքին: Սրա շնորհիվ նա ծեռք է բերում մեծ հեղինակություն, որը բորբոքում է ուղեկցող ջոկատի զինվորների կասկածն ու կատաղությունը: Նրանք հարձակվում են կնոջ վրա, մերկացնում են նրան: Հեծող ամբոխի մեջ ականատեսները վերջին անգամ տեսան ու լսեցին, որ Մարին պարզած ծեռքերով Աստվածաշունչը պահած գլխավերևում բացականչում է. «Աստված մեզ չի լքի»: Հավատն այս բառերի մեջ չէր, այն հզոր ուժ էր, որ գալիս էր վերևից:

Մարաշի հավատացյալների ընկերությունը ևս հավատի գործնական դրսևորումներ էր ցուցաբերում: Նրանք նախաձեռնել էին անցնող քարավանները ապահովել սընունդով, հագուստով ու դրամով՝ լավ իմանալով, որ հերթը շուտով իրենց է հասնելու: Հարուստներից մեկն իր ողջ կանխիկ գումարը տրամադրել էր այդ նպատակի համար:

Նա ժամանակ առ ժամանակ ասում էր. «Դեռ այսքան ու այսքան «անհավատներ» կան» և նշում էր մնացած փողի քանակը: «Շուտով «անհավատներս» կվերջանան»: Նրանց աքսորի հրամանն այնքան անսպասելի և արագ եկավ, որ չհասցրեցին անգամ տեղյակ պահել միսիոներությանը: Նրանք քաղաքից հեռացան գիշերով: Նրանք էլ գնացին, սակայն գնացին այն ժամանակ, երբ իրենց ամբողջ ունեցածը տվել էին ուրիշներին: Նրանք էլ ընչազուրկ դարձած՝ ճանապարհ ընկան դեպի տառապանք և մահ:

Եղան նաև հավատացյալներ, որոնք փրկվեցին Աստծու հրաշքով: Կեսարիայում մարդասեր մի կայմակամ (գավառապետ) կար, որ ձգտում էր հայերին փրկած լինել: Նա համառորեն պնդում էր, որ հայերը իսլամ ընդունեն, քանի որ գիտեր Ուրֆա հասնելուն պես բոլորը զոհվելու են: Մի քանիսը, այդ թվում և մի քահանա, մահմեդական դառնալով՝ փրկում են իրենց կյանքը: Սակայն 11 հոգի, որոնց մեջ կային և ավետարանական քարոզիչներ, և՝ կաթոլիկ քահանաներ, անհողդողդ մերժելով կրոնափոխությունը՝ աքսորվում են: Վահրամ Թեհմիզյանը, որ մեկն էր նրանցից, պատմում էր. «Երբ քաղաքից դուրս եկանք, Փրկիչը հայտնվեց իմ առաջ, և ես զվարթացա»: Նրանք 2-3 օրից հասան Էրեգլի Բաղդադի երկաթուղու մոտ, այնտեղ հանդիպեցին գերմանացի Քրեց ֆոն Քրեսենշթայնին և Ջեմալ փաշային: Հոգևորականները մի կերպ կարողանում են խոսել գեներալի հետ: Լսելով նրանց պատմությունը՝ արցունքները հոսում են գեներալի աչքերից: Նա բարեխոսում է Ջեմալ փաշային, և քահանաներին թույլ են տալիս Հալեպով գնալ Դամասկոս, այնուհետև Երուսաղեմ, ուր կարող էին բնակություն հաստատել մահվան սպառնալիքը հաղթահարած: Դամասկոսում Վահրամ Թեհմիզյանը հանդուն Հիսուսի նահատակվում է 50 թուրք սպաների առաջ: Նրա կինը՝ Ռեբեկան, որ ի սեր իրենց հավատի բաժանվել էր ոչ միայն ամուսնուց, այլև իր չորս երեխաներից, երկար ժամանակ դեգերում է իր սիրեցյալի

հետքերով հաղթահարելով վտանգը, մահվան սարսափն ու դաժան տառապանքները: Ահա թե ինչ է գրել նա իր ամուսնուն. «Եթե մեր ապրած տառապանքը ծառայի այն բանին, որ մահմեդականներն ընդունեն Ավետարանը, ես սիրով մեկ անգամ էլ կկրեմ այն»:

Անգամ այնտեղ, ուր Աստված մարմնավոր կյանք չի փրկել, դրսևորել է իրեն հրաշալի: Քույր Աննի Ռոները 1917 թ. հունվարի 19-ին Մարաշից գրած իր նամակում պատմում է նման մի դեպքի մասին. «Կարալաբոս անունով մի երիտասարդ ավետարանչական, անցյալ տարի դառնալով քաղաքական խարդավանքի զոհ, իր ընկերոջ հետ բանտ է նետվում: Կառավարությունը ոչ ճիշտ պատկերացում էր կազմել նրա կազմակերպած ավետարանչական հավաքների մասին, կամ էլ գաղտնի մի թշնամի այնտեղ հանցանքի տարրեր էր տեսել: Ամեն դեպքում զուր տեղը, քանի որ ոչ նա և ոչ էլ նրա բարեկամները քաղաքականությամբ երբեք չէին զբաղվում: Երիտասարդը բանտում թշվառ ու լքված վիճակում անգամ շարունակում է հաղորդակցվել Աստծու հետ: Լուր ստանալուն պես, ես նրան ուղարկեցի Աստվածաշունչ, մի քանի գրքվածքներ, մի քիչ էլ օգնություն: Նոյեմբերի 27-ին շուկայի հրապարակում ընկերոջը կախաղան հանեցին, իսկ 30-ին, իր մահապատժից քիչ առաջ, նա վերադարձրեց Աստվածաշունչն ու գրվածքները: Այնտեղ մի փոքրիկ, սպիտակ թղթի վրա գրված երկտող գտա, ուր ասված էր. «Հա՛յր, ժամը հասել է»: Նրա ընկերը ևս իր խիզախ ու լուռ մահով խոր տպավորություն թողեց: Կարալամբոսը կախաղանի առաջ սիրով ընդունելով քրիստոնեության երջանիկ հավիտենականությունը ասաց. «Աստված թող ների ձեր մեղքերը»: Մահմեդականներից մեկը, որը ներկա էր եղել նրա մահապատժին, այժմ Նոր կտակարան է կարդում՝ գտնելու այն զարմանալի ուժի աղբյուրը, որն առկա է Հիսուսին խոստովանողների մեջ: Նրա մահը շատերը չեն կարողանում մոռանալ:

Այսօր քրիստոնյաների արյունը սերմ է հիշեցնում, որից ծլարձակում է Աստծու ողորմածությունը աշխարհը պա-

տած չարության հանդեպ: Միշտ չէ, որ հավաքում ենք բերքը, շատ հաճախ ունենում ենք արցունքով, հեծեծանքով ու տառապանքով լեցուն ցանքս: Սակայն մենք երես չենք դարձնում մեր Աստծուց: Նա այդ բոլորը կանխատեսել է վաղուց: Մենք մեր հոգիները միշտ պետք է զորացնենք հավատով առաջնորդվելով հայտնի այն սկզբունքով, որ «մեծ վիշտ հաղթահարելով ենք գնալու Աստծու թագավորությունը»: Մեր Տեր Հիսուսը նույնպես գործել է այդ օրենքի համաձայն: «Առանց տանջանքներ կրելու Քրիստոսը չէր կարող մտնել Նրա արքայությունը»: Համաշխարհային պատերազմը սոսկալի տառապանքներ պատճառեց աշխարհին և, իհարկե, ամենաշատը բաժին հասավ հայերին: Այդ տառապանքներն արյունում են մեր հոգիները, բայց և գիտենք, որ դրանք զուր չէին: Դա մեր Աստծու սիրո ծրագրի մի մասն է, որ նստում է ու հալչում, մաքրում է ու զատում, ինչպես զտվում են ոսկին ու արծաթը: Վայ նրանց, ովքեր անարդար են գործել: Եթե նրանց չդատեն մարդկանց օրենքներով, միևնույն է, նրանք Աստծու դատաստանից չեն կարող խուսափել: Անշուշտ, Հիսուսի համայնքում բոլոր տառապանքները վերագրվում են Աստծուն, որպեսզի մարդն ավելի ընդունելի լինի Նրա ծառայությանը: Այնուհետև արդարադատության հաշտարար պտուղները կճաշակեն ոչ միայն բազմաչարչար հայ ժողովրդի, այլև մեր սեփական, սիրելի հայրենիքի հավատացյալները:

«Արտասուքով ցանողները, ցնծությամբ կհնձեն»:

Պատերազմի ժամանակ ևս իր աշխատանքը շարունակեց Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օգնության միությունը: Որբանոցներում ապաստան գտան 1300 երեխա, իսկ հազարավոր կարիքավորներ օգնություն ստացան աղետյալների հետ տարվող աշխատանքի շնորհիվ: Սահմանափակ չափով գործում էին նաև դպրոցները: Մեզերեհի ավետարանական դրպրոցը դադարեց գործելուց աշակերտներին բանակ զորակոչելու պատճառով: Այնինչ Մարաշի տիկնանց աստվածաշնչյան դպրոցի դասընթացները կանոնավորապես ընթացան:

Օգնության միության աշխատանքի մասին մոտակա հաղորդումը շարադրված է «Sommeraufgang» ամսաթերթում, որը անվճար կուղարկվի նրանց, ովքեր հետաքրքրվում են դրանով:

Բարեգործությանը հատկացվող նվիրատվությունները կընդունվեն շնորհակալությամբ

Տնօրեն՝ Ֆ. Շուխարդ

Մայնի Ֆրանքֆուրթ
Ֆյուրսթենբերգեր շթրասե, 151

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ճշմարտության ձայնը (Ա. Գ. Մադոյան) 5
Ներածություն 12
1. Ինչպես սկսվեց փոթորիկը 14
2. Հայ ժողովուրդը զրկվում է առաջնորդներից և գենքից 23
3. Աքսորներ 30
4. Ինչ վերապրեցին աքսորի ժամանակաշրջանում Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օգնության միսիոներությունները 52
ա) Մեզերեհ 53
բ) Հարունիե 55
գ) Մարաշ 57
դ) Բարեգործական աշխատանքները Մարաշի գավառում 61
ե) Հալեպ 67
5. Լուսանկարներ մռայլ ֆոնի վրա 77

ԷՌՆՍՏ ԶՈՄՄԵՐ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրատ. խմբագիր՝ **Հ. Բ. Պետրոսյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բդոյան**
Համակարգչային շարվածքը՝
Լ. Հ. Բաբախանյան
Ձևավորումը՝ **Թ. Շ. Վարդանյան**

Ստորագրված է տպագրության 25. 10. 02 թ.: Չափսը՝ 84x108 1/32:
Թուղթ՝ օֆսեթ: Հրատ. 3,8 մամուլ, տպագր. 2,75 մամուլ=4,62 պայմ. մամուլի: Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 118:

Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52